Որով աշխարհըս փրկեցիր ,
Ով պաշտելի Տէր իմ Յիսուս :

3 Դուն իմ հոգիս քեզի դարձուր ,
Տըկար հաւատքըս զօրացուր ,
Ու փրկութիւնդ ինձի ցուցուր ,
Ով կենսատու Տէր իմ Յիսուս :

4 Ո՛հ , չեմ ուզեր որ սէրդ մոռնամ ,
Դէմքիդ լուսէն ալ հեռանամ .
Դուն զիս բռնէ , Տէր բարեխնամ
Եւ մարդասէր Փրկիչ Յիսուս :

80 Եկեղեցւոյ հիւնիւ Գրեհարոս է (8) :

1 Յիսուս , դուն ես մեզ առաջնորդ ,
Միակ գըլուխ եկեղեցւոյն .

Եւ թողուցիր քեզ փոխանորդ
Քու Սուրբ Հոգիդ՝ լոյս դերագոյն ։

2 Յիսուս , դուն ես վէմ յազթական ,
Որով կանգնի եկեղեցին .

Կանոն տըւիր Աւետարան ,
Ամէն մարդիկ քեզմով փրկուին ։

3 Յիսուս , դուն ես Հովիւ բարի ,
Իր ոչխարներն նայող՝ փնտուող .

Ով որ քեզի կը յանձնուի՝
Չըկայ ձեռքէդ յափը շտակող ։

4 Յիսուս , դուն ես մեծ թագաւոր ,
Նոյն ե քաւիչ մեծ Քահանան .

Անդին արեանդ զոհ փառաւոր
Է առաջնորդ մեր փրկութեան ։

5 Տէր , մեծութիւնդ մեզի գիտցուր ,
Որ քեզ միայն մեր Գլուխն ճանչնանք .

Մեզ յոյս՝ հաւատ՝ սէր յաւելցուր ,
Որ քեզ արժան պատիւ՝ փառք տանք ։

Տ Ա Մ Է Ն Ի Ր Դ Լ Ե Բ արեխոս Դայն Բրեխոս է . (8) :

- 1 Յիսուս փրկիչ և թագաւոր
է մեզ եղբայր և բարերար .
Նստած աջ կողմ չօրն երկնաւոր՝
Բարեխօսէ մեզի համար :
- 2 Միջնորդն Յիսուս է շատ դըժած ,
Աշակերտներն բոլոր դիտէ .
Եւ բանալով իր դանձ շնորհաց
Անոնք բոլոր պիտի փրկէ :
- 3 Ան մեզք չունէր՝ բայց վիշտ կըրեց ,
Եւ մեզքերնիս իր վրան առաւ .
Ով որ սրտով անոր դիմեց՝
Զայն ընդունեց , ներում տրւաւ :
- 4 Անկէ ուրիշ միջնորդ չըկայ
'ի մէջ մարդկան և Աստուծոյ .
Աստուած և մարդ մէկ մ'ալ չըկայ ,
Որ կարենայ օգնել մարդոյ :
- 5 Միջնորդութեամբ՝ անուամբ փրկչին
Տէրով գահին արդ մօտենանք .
Եւ մեզքերնիս յայտնենք նրմին ,
Որ թողութիւն ու կեանք գտնանք :

82 Փրկելու կարգի. (8) :

- 1 Գիտեմ որ իմ Փրկիչս կ'ապրի .
Աս ի՞նչ խրախոյս կու տայ ինձի .
կ'ապրի , կ'ապրի Այն որ մեռաւ ,
կ'ապրի որ տայ ինձ կեանք ամբաւ :
- 2 կ'ապրի Գըլուխըս յաւիտեան ,
Մահուամբ մահուան զբայ յաղթական .
կ'ապրի , կ'ապրի զիս վրկելու ,
Եւ իր սիրովը օրհնելու :
- 3 կ'ապրի երկնից մէջ փառաւոր ,
Տէր ամենուն և Թագաւոր .
կ'ապրի բարձրերը համբարձած ,
Իր և մեր Հօրն աջ կողմն նստած :
- 4 կ'ապրի որ միշտ ինձի օգնէ ,
Հողւոյս համար բարեխօսէ .
կ'ապրի ինձ առաջնորդելու ,
Ամէն վտանգէ ազատելու :
- 5 կ'ապրի որ փարատէ վախերս ,
Եւ միշտ սրբէ իմ արցունքներս .
կ'ապրի , կու տայ ինձ կեանք և լոյս ,
Եւ ըստփականք ու խըրախոյս :

6 Կ'ապրի ե միշտ զիս կը սիրէ ,
 Եւ միշտ հողիս կը պաշտպանէ .
 Կ'ապրի ե ինձ կ'ըլլայ Սր.քայ ,
 Եւ Մարգարէ ու Քահանայ :

7 Կ'ապրի ու ես պիտի ապրիմ ,
 Ու միշտ իր քովը բընակիմ .
 Ս.ս ի՞նչ ցնծում կու տայ ինձի ,
 «Գիտեմ որ իմ Փրկիչս կ'ապրի» :

ՅՅ Յիսուսի Բարեկամ-Իննը . (Ց . 6 տող) :

1 Լաւ բարեկամ մը կայ վերերն ,
 Յիսուս Գրիստոս է իր անունն .
 Ս.ս աշխարհիս բարեկամներն
 Շուտով կ'անցնին , չեն հաստատուն .
 Ուստի թող ես անհող չըլլամ
 Յիսուսն ընել ինձ բարեկամ :

2 Աշխարհս բոլոր փառքովն կ'անցնի ,
 Յիսուս կը մնայ հաստատ իբր վէմ .
 Մարդիկ երբ չեն օգներ ինձի ,
 Յիսուս պատրաստ միշտ քովս գտնեմ :
 Ուստի , ես չն՛ :

3 Յիսուս վասն իմ իր անձ զոհեց ,
 Որ ես երկնից հաղորդ ըլլամ .
 իմ տեղս իրեն արիւնն թափեց ,
 Որ ես իրմով արդարանամ :
 Ուստի , Էպօն :

4 Բարեկամիս մեծ գըթութիւնն
 Օրէ օր դիս սիրով կ'ուղղէ .
 Յիսուս միշտ խն է , ես իրենն՝
 Մինչ մահն իմ շունչս ինձմէ առնէ .
 Ետքն ալ երկնից մէջ յաւիտեան
 Բարեկամիս հետ միանամ :

ՏԷՆ Երեւն Գեորգի-Նի-նը . Սաղ . ՃԺ . (8 , 7) :

1 Տէրն ըսաւ Տէրոջըս այսպէս ,
 իմ աջ կողմըս դուն նստէ .
 Թշնամիքըդ յաղթողի պէս
 Բու ոտքովըդ կոխկուտէ :

2 Զօրութեանդ սուրբ դաւաղանը
 Սիօնէն Տէրն կը խրկէ .
 Դուն յաղթէ միշտ չար դեւերը ,
 Թշնամեացըդ մէջ տիրէ :

3 Ինքը Տէրն ըրաւ երգումը ,
 Չըպիտի բընաւ զղջայ .
 Մեւքիսեդեկի կարգովը
 Յաւիտեան ես քահանայ :

4 Տէրն ալ կողմըդ միշտ կայնած է ,
 Միշտ քեզի պիտի ոյժ տայ .
 Բարկութեան օրն միշտ ճզմած է
 Թշնամին իւր անխընայ :

Տ 5 Քրիստոսի Լազարի դասկոնելը . (8 , 6) :

1 Ողջոյն մեծ Էմմանուէլին ,
 Թող պետութիւնք երկնից
 Երկրպագեն ու զայն կարդեն
 Արքայ՝ Տէր ամենից :

2 Թո՛ղ մեր երկրին լեզուք ամէն
 Ըչլան հոս ճայնակից .
 Անոր փառք տան , զայն ընդունին
 Արքայ՝ Տէր ամենից :

3 Ո՛հ , ե՞րբ պիտի մենք զայն պաշտենք
 'ի մէջ դնդաց երկնից .
 Անոր երգենք ու զայն կոչենք
 Արքայ՝ Տէր ամենից :

87 Մաղթանի մարտի Զոհի (7) :

- 1 Տիեզերքը նորոգող,
Կեանք տրուողը համայնից,
Կը հաւտանք քեզ, Սուրբ Հոգի,
Հօր, Որդւոյ ալ փառակից :
- 2 Առաջնորդ ես անսըխալ
Մոլորեալ մեղաւորին .
Մեր խաւարը հալածող
Մնըստուեր լոյս երկնային :
- 3 Զօրավիգ դուն ՚ի բարձանց
Ճշմարիտը փնտուողին .
Դուն միայն կրնաս փոխել
Մեղապարտ սիրտն ու հոգին :
- 4 Կ'աղաչենք քեզ միաբան,
Ով գըթած օրհնեալ Հոգի,
Շընորհացըդ երկնառաք
Դուն ըրէ մեզ արժանի :
- 5 Մեղքերնիս ճանչնալ տուր մեզ,
Բարեխնամ Մըխիթարիչ,
Եւ սրտանց զղջում ընել,
Ու նայիլ դէպ ՚ի Փրկիչ :

6 Քու ձըբի պարդեներովդ
Սրտերնիս դուն զարդարէ ,
Որ դառնանք մենք Քրիստոսի ,
Հեռանանք միշտ մեղքերէ :

ՅՅ Սուրբ Հոգին որով ինչպէս համար աշխատ . (8) :

1 Տէր , վար նայէ աչքով դըթած ,
Սղամորդին տես կործանած .
Մեղքն յաղթանակ կը տարածէ ,
Սմէն տեղեր մարդ կը սպաննէ :

2 Պաշտօնեաներդ պարապ կ'ելլեն ,
Մեռած մարդոց կը քարոզեն .
Հողիդ չիջած ասոնց վըրան ,
Մնոնք զուր տեղը կը պուռան :

3 Բայց Սուրբ Հոգիդ մահն կը յաղթէ ,
Մեռելներուն կեանք կը բերէ .
Չոր ոսկորներ ձայնովդ կ'ելլան ,
Նոր յարութեամբ կ'ուրախանան :

89 Մուրբ Հոգին ընդունելու համար աղբիւր • (8, 6) :

1 Ո՛վ Տէր Յիսուս , դուն խոստացար
 Որ Սուրբ Հոգիդ խրկես .
 Ճշմարտութեան լոյսն փրկարար
 Մեզի միշտ հաղորդես :

2 Արդ կ'աղաչեմ բոլոր սրտով ,
 Ինձ Սուրբ Հոգիդ խրկէ .
 Ամէն բան թող ուղիղ կերպով
 Ինձի սորվեցնէ :

3 Ինչպէս որ դուն 'ի վերնառան
 Առաքելոց տըւիր
 Քու Սուրբ Հոգիդ՝ լոյս դերբնական ,
 Քեզմէ պարզեւ ընտիր ,—

4 Ինձի ալ տուր որ զիս սրբէ ,
 Որ քու օրէնքդ սիրեմ .
 Իմ միտքս բանայ , սրտիս ազդէ ,
 Որ միշտ քեզ ծառայեմ :

5 Ո՛վ Սուրբ Հոգի , չեմ արժանի
 Տաճար քեզ ըլլալու .
 Եկ , զիս ըրէ գործիք քեզի ,
 Քու լոյսդ տարածելու :

90 Հոգի-ոյն Սրբոյ առաջնորդութեանը համար աղօթիք .
Սաղ. ԺԷ. (8) :

- 1 Իմ ազադակս , ով Տէր , լըսէ ,
Եւ Սուրբ Հոգիդ ինձ պարզեւէ .
Մենեկնդ լեզուով քեզ կ'ազաչեմ ,
Մեկեղծ սրտով աղօթք կ'ընեմ :
- 2 Իմ քայլերուս եզիր պաշտպան ,
Ճամբուդ մէջ թող հաստատ մընան .
Ոտքերս բընաւ չըխտտորին ,
Սուրբ օրէնքիդ միշտ հետեւին :
- 3 Ողորմութիւնդ ըսքանչելի
Սիրոյդ համար ցուցուր ինձի .
Սջովդ փրկէ զիս ոտխէն ,
Իմ յոյսս դուն ես ամէն ատեն :
- 4 Սչքի բիրի պէս զիս պահէ ,
Քու թեւերուդ տակ զիս ծածկէ ,
Զիս ազատէ վըտանդներէն ,
Որ իմ հոգիս կը պաշարեն :

91 Սորբ Հոգոյն այցելութանը համար աղօթք ,
(8 , 7 , 4) :

- 1 Այդիւիդ , Տէր , այցելու լեր ,
 Բու անձրևդ միշտ խրկէ մեզ .
 Շուտ կը նըրազին հողիք մեր ,
 Թէ լոյսդ մեր վրայ չըծագես :
 Զօրացուր մեզ .
 Օգնութիւնն է լոկ քեզմէ :

- 2 Մի կենար մեզմէ հեռու , Տէր ,
 Այլ վերէն շնորհքդ մեզ խրկէ .
 Կը յաղթեն մեզ փորձութիւնք մեր ,
 Թէ որ դըթութիւնդ չօգնէ :
 Զօրացուր մեզ .
 Օգնութիւնն է լոկ քեզմէ :

- 3 Թող սաստիկ սէր լեցունէ մեզ ,
 Աղթքի մէջ զօրանանք .
 Թող ան որ կը դաւանի քեզ՝
 Միշտ յաղթէ չարին փորձանք :
 Զօրացուր մեզ .
 Օգնութիւնն է լոկ քեզմէ :

- 4 Տէր , յազթէ ուժով փորձողը ,
 Քարեղէն սիրան կակըղցուր .
 Ըսկըսէ հիմա մեծ դորժը ,
 Մեղաւորն քեզի դարձուր :
 Զօրացուր մեզ .
 Օղնութիւնն է լոկ քեզմէ :

92 երէ Մորէ Հոգին . (8) :

- 1 Բացուին այսօր երկնից կամարք .
 Իջիր մեզի , ով Սուրբ Հոգի .
 Մեր խղճայի սրտից կապանք
 Քու զօրութեամբըդ արձըկուի :
- 2 Մեղաց խաւարն է մեզ պատեր ,
 Թող փարատի ու չըքանայ .
 Սաստիկ զղջում ու սէր առ Տէր
 Մեր սիրտերուն մէջ արթննայ :
- 3 Թող մեր մտքերն լուսաւորուին
 Տէրոջը կամքը ճանչնալու .
 Ու մեր սիրտերը համոզուին
 Ամէն մեզքէ հրաժարելու :

- 4 Առատաբոլղիս պարդեներով
կարեկցութեամբ մեզի եկուր •
Փառաց երկրին փափաքներով
Դուն սիրտերնիս այսօր լեցուր ։
- 5 Հաճէ մեզի առաջնորդել
Ճշմարտութեան մէջ անդադար •
Եւ մեր ընթացքը կատարել
Անկեղծութեամբ մինչև 'ի սպառ ։

93 Խոստացեալ Սուրբ Հոգին • (8, 6) ։

- 1 Ով Սուրբ Հոգիդ ճշմարտութեան ,
Մաքուր ես Աղաւնի ,
Ակն մշտահոս ճոխ բարութեան ,
Սրբող մարդն աղտեղի ։
- 2 Ապականեալ մեր բընութիւն
կարօտ քեզ կը մընայ ,
Որ ըստանայ նորոգութիւն ,
Զերծ մեղքերէն ըլլայ ։
- 3 Քեզ կ'աղաչենք , ո'վ Սուրբ Հոգի ,
Շընորհքդ կը խնդրենք •
Շատ մեղքերով թէև ենք լի ,
Ա՛լ յոյս կայ , ի՞նչ ընենք ։

- 4 Դու մեզ կրնաս զօրացունել՝
 Յաղթել միշտ մեղքերուն .
 Մեզ ֆրիստոսի հաճէ տանել ,
 Գլտնենք հոն քաւութիւն ։
- 5 Մեզ մի թողուր անօգնական ,
 Անզօր ենք խղճալի .
 Կը կորսըւինք մենք յաւիտեան ,
 Ո՛ւր է խօսքն Յիսուսի ։

94 Մարգ Հոգի օգնութիւնը . (8) ։

- 1 Ո՛վ Սուրբ Հոգի՛ Աստուած բարի ,
 Որ դուրս ունիս մարդկան ազգի .
 Քեզ կը կանչեմ բոլոր սրտով ,
 Այցելութիւն ըրէ ինձի ։
- 2 Սուգի մէջ եմ , որ քու շնորհքէդ
 Է զրկուած անձն իմ անպէտ ,
 Դեւերն ալ այս առիթ դըտած՝
 Զանան փորձել , խաղալ իմ հետ ։
- 3 Տէր , կ'աղաչեմ ինձ յիշեցուր
 Քու պատգամներդ իբրև ըզսուր ,
 Որով յաղթեմ մեծ փորձիչին ,
 Զըլլամ չարին ես անձնատուր ։

4 Ով Սուրբ Հոգի, եկու շուտով,
 Զի ճնշւած եմ մեղքերով .
 Զիս վըհատածս ամէն կողմէ
 Քաջալերէ քուկին շնորհքով :

5 Զիս մի թողուր անմըխիթար,
 Սատանային չըլլամ աւար .
 Քու զօրութեամբըդ հաստատուիմ
 Ըլլամ պատրաստ երկնից համար :



Ս Ո Ւ Ր Բ Գ Ի Ր Ք

95 Սուրբ Գրոց պատմական-բնական (8 .
6 տող) :

- 1 Քու Սուրբ Գիրքդ է ինձ հաճելի ,
Լոյս կ'ընծայէ խիստ ցնծալի
Խեղճին որ խաւարի մէջ է .
Քու խօսքդ մոլար ճամբաս կ'ուղղէ ,
Եւ վախդ սանձ է իմ չար սրտիս ,
Խոստմունքդ կու տան հանդիստ խղճիս :
- 2 Քու սուրբ օրէնքդ ինձ կը յայտնեն
Ան կանոններն որ ինձ պէտք են .
Աղնիւ ուսում անոնք են ինձ ,
Եւ քան ըզմեղր անուշ են ինձ .
Բովքէն զըտուած մաքուր ոսկի
Սըրտիս այնքան չէ ցանկալի :
- 3 Ըսպառնալիքդ կ'արթնցունեն ,
Ու իմ վըտանդս ինձ կը յայտնեն .
Բայց Տեառն օրհնեալ Աւետարան
Զիս կը փրկէ մինչ յաւիտեան .
Մեղքս կը յաղթէ , հողիս կ'ուղղէ ,
Զըրի բայց մեծ վարձք կը շնորհէ :

- 4 Իր սխալները ո՞վ գիտէ .
 Ո՞վ Տէր , դուն իմ մեղքերս քաւէ ,
 Ամէն մեղքէն զիս ետ պահէ ,
 Երգս օրհնութեան միշտ ընդունէ .
 Չըլլայ անշահ և անպիտան
 Այն կեանք տըւող Գիրքդ յայտնութեան :

96 Սուրբ Գրոց պատուականութիւնը . (7) :

- 1 Ո՞վ դուն Սուրբ Գիրք երկնային ,
 Պատուական գանձս ես իմին ,
 Որ ըսկիզբս ինձ կը պատմես ,
 Ինչ ըլլալս ինձ կը յայտնես :
- 2 Մոլորեալըս կը խրատես ,
 Եւ Փրկչին սէրն կը յայտնես .
 Դուն ինձի ես կառավար .
 Դատաւոր ես բարերար :
- 3 Նորոգուիլ մեզ Սուրբ Հոգւով ,
 Ըստանալ կեանքն հաւատքով ,
 Դուն կ'ըսես թէ կայ հընար ,
 Ու մեզ ես միշտ մըխիթար :

4 Երկնային փառքն կը պատմես ,
 Եւ կորուստն ալ կը յայտնես .
 Ո՛վ դուն Սուրբ Գիրք երկնային ,
 Պատուական դանձս ես խմին :

97 Կենարար բանն ֆրէսորոսի . (8) :

1 Թող քու Սուրբ Խօսքդ , Տէր իմ Փրկիչ ,
 Իմ վշտակիր սրտիս ազդէ .
 Նա առաջնորդ և ըստիտիչ
 Ըլլայ ինձ միշտ , ու ինձ օգնէ :

2 Խաբող հաճոյք խմին հողիս
 Երկար ատեն մոլորցուցին .
 Սուտ բարիքներս առ աշխարհիս
 Իմ սէրս առ քեզ խափանեցին :

3 Բայց ձայնըդ , Տէր , հաւատարիմ
 Խորունկ քունէ զիս արթնցուց .
 Առ քեզ դարձուց անսանձ սիրտ իմ ,
 Եւ իմ աչքէս արցունք վազցուց :

4 Աշխարհասէրք միշտ կը զրուցեն ,
 Մեզ ո՞վ պիտի տայ բարութիւն .
 Տէր , դէմքըդ ցոյց աստուածեղէն ,
 Տուր ինձ Որդւոյդ խաղաղութիւն :

98 Մորք Գերբ էրեդասարդէն առաջնորդն ըլլա-
լա է . Սաղ . ՃԺԹ . (8 , 6) :

1 Երիտասարդն ինչով մաքրէ
իրեն մոլար ճամբան .

Ըզգուշութեամբ թէ որ պահէ
Քու խօսքըդ սրբազան :

2 Բոլոր սրտով քեզ խնդրեցի ,
Թող մի տար մոլորիմ .

Պատուիրանքներդ մըտածեցի ,
Խօսքիդ պիտի նայիմ :

3 Քու օրէնքովդ կ'ուրախանամ
Անգին դանձի մը պէս .

Եւ թող մի տար որ խօսքդ մոռնամ ,
Որպէս զի զիս փրկես :

99 Մորք Գրոյ առաջնորդն ինչն ահն մարդա-
հարկաւոր է . Սաղ . ՃԺԹ . (8) :

1 Տէր , ծառայիդ բարի ըրէ ,
Որ ես ապրիմ ու խօսքդ պահեմ .

Բաց իմ աչքերս , լուսաւորէ ,
Որ օրէնքէդ հրաչքներ տեսնեմ :

2 Պանդուխտ եմ ես երկրի վըրայ ,
Տէր , մի ծածկեր պատուէրդ ինծմէ .
Իմին հոգիս մեծ վիշտ կը զգայ ,
Զի իրաւունքդ դիտնալ կ'ուզէ :

3 Վըկայութիւնք անսուտ բերնիդ
Են ցնծութիւն խմին սրտիս .
Խօսք կենսատու քու Սուրբ Գրքիդ
Խորհուրդ թող տան իմ հոգիիս :

100 Աստուծոյ ճշմարտութեանը վրայ փափաք .
Սաղ . ՃԺԹ . (10) :

1

Ո՛վ Տէր , զիս խօսքովդ փրկէ , ազատէ ,
Քանզի իմ հոգիս հոգին կը վակչի .
Օրէնքդ սորվեցուր , ինձ պատասխանէ ,
Ես իմ ճամբաներս քեզի պատմեցի :

2

Տէր իմ , քու շքնորհքդ դուն միշտ տուր ինծի ,
Եւ սուտ ճամբաներն հեռու տար ինծմէ .
Ես ճշմարտութեան ճամբան ընտրեցի ,
Ու քու պատուէրներդ թող միտքըս դիտէ :

3

Քու սուրբ օրէնքիդ ճամբան ինձ ցուցուր ,
Որ իմ մեղքերուս վըրայ մտմտամ .
Քու վըկայութեանդ սրտով իս վակցուր ,
Որ ես յաւիտեան քեզմէ չամըչնամ :

101 Սրբոցն զայս քրիստոսոսցիս Սաղ. ճԺԹ.
(8) :

- 1 Տէր, օրէնքներդ ինծի յայտնէ,
Որ մինչև վերջ զանոնք պահեմ.
Զիս իմաստուն, ըզգաստ ըրէ,
Որ քեզ միայն մըտիկ ընեմ :
- 2 Իմին աչքերս դուն ետ դարձուր,
Որ սընոտի բան չտեսնան.
Ճշմարտութեան մէջ զիս կեցուր,
Քանզի ան է կենաց ճամբան :

102 Աստուծոյ իօսուք սիրոյն արդարեանքն եւ սէրէ.
Սաղ. ճԺԹ. (8, 6) :

- 1 Դուն ես բաժինս, ո՛վ Տէր Աստուած,
Ըսի թէ խօսքդ պահեմ.
Քանզի անով իմին ճամբաս,
Ընթացքըս կը շտկեմ :
- 2 Ամբարիշտներն ու անկրօններն
Խուճաբով իս պատեցին,
Բայց իմ հոգւոյս փափաքն և սէրն
Օրէնքըդ յիշեցին :

3 Ընկեր եմ ես ան ամենուն
 Որ վախըդ կը սրահեն ,
 Եւ սուրբ բերնիդ պատուէրներուն
 Միայն մըտիկ կ'ընեն :

103 Աստուծոյ խօսին զբնութիւնը . Մաղ .
 ՃԺԹ . (8) :

- 1 Ո՛վ Տէր , քու խօսքդ է հաստատուն
 երկինքներուն մէջ յաւիտեան .
 Ճշմարտութիւնդ է մրնայուն ,
 Վեզմով երկիր կայ անսասան :
- 2 Քու սուրբ խօսքովդ անոնք բոլոր
 Հաստատ կայնած միշտ կը տեսն .
 Քու զօրութեամբդ մրնչև այսօր
 Քու հրամանիդ կը ծառայեն :
- 3 Թէ որ քուկին օրէնքդ անխախտ
 Ինձ ցնծութիւն արդէն չըտար ,
 Ես կ'ըլլայի անյոյս , դժբախտ ,
 Յաւով լեցուն ու շատ անկար :
- 4 Ես քուկդ եմ , միշտ դուն զիս փրկէ ,
 Զի պատուէրներդ միշտ փնտռեցի .
 Զիս չար ժողովն ընկճել կ'ուզէ ,
 Բայց սուրբ խօսքէդ ես ոյժ առի :

5 Ամէն գործքեր թէ և աղուոր ,
 Անշուշտ ունին որոշ վախճան .
 Բայց խօսքըդ սուրբ՝ ամենազօր
 Պիտի մընայ միշտ յաւիտեան :

104 Մարգ Գեր+ . (6 , 6 , 8 , 6) :

1 Պարզ և է երկնային
 Սուրբ Գիրքըն աշխարհին ,
 Աստուածային պատգամ տրուած՝
 Լոյս տալ մարդոց մտքին :

2 Նա ինքն ուսուցանէ ,
 Աստուած հոգի , մի է .
 Մեջնորդ , Փրկիչ միայն Յիսուս
 Հաւտալ , պաշտել պէտք է :

3 Օրէնքն՝ սուրբ , երջանիկ
 Կ'ընէ , կ'ըսէ , զմարդիկ .
 Արդար , բարի է , սիրելի ,
 Թէ ողջ մըտօք խորհիք :

4 Ունայն աշխարհք ամէն
 Ու վայելչութիւններն ,
 Կը ցուցընէ ան թէ կեանք կարճ ,
 Եւ փառքն խաբող իսկ են :

5 Երկնից և դժոխքի
 վըրայ ճիշդ կը խօսի .
 Փառք , չարչարանք կը հաստատէ ,
 Որ սիրտըն համոզուի :

6 Առէք համն , այն կ'ըսէ ,
 Պաշտել Տէրն զի քաղցր է .
 Լուծն հաճելի , բեռըն թեթև ,
 Եւ անվախճան՝ վարձքն է :

7 Պարզևս այս ես սիրեմ
 Քան մեծ գանձերն ամէն .
 Իմաստութիւնն , ճշմարտութիւնն
 Անկէ պիտի դանեմ :

8 Օրհնեալ Յիսուս , սիրով ,
 Ճշմարտութեամբըդ քով
 Որ սրբըլիմ ու փրկըլիմ ,
 Ըրիբ հայց ազօթքով :

9 Այո , կը սրբըլիմ ,
 Սրտանց թէ ընդունիմ ,
 Վարուցս ու հաւատքիս կանոն
 Ըլլալ այն փափաքիմ :

10 Ճշմարտութեան Հողիդ ,
Տէր , կ'աղաչեմ առջիդ ,
Ղրկէ ինձ որ կոյր միտքս բանայ ,
Հնազանդ ընէ զիմ սիրտ :

105 Աստուծոյ խօսին Վրայ շնորհի համար ~
ընէ . Սաղ . ՃԺԹ . (8) :

1 Տէր գըլթութեան , ինձ ողորմէ ,
Քուկին օրէնքդ ինձ սորվեցուր .
Ճշմարտութեանդ լոյսն ինձ յայտնէ ,
Քու փրկութեանդ իս շուտ հասցուր :

2 Ես քու ծառայ եմ կամաւոր ,
Ձիս իմաստուն , ըզգաստ ըրէ .
Վըկայութիւնդ՝ խօսքդ զօրաւոր
Հողւոյս ազդէ , սրտիս տիրէ :

3 Ատենն եկաւ որ Տէր Աստուած
Իր զօրութիւնն 'ի դործ դընէ .
Ձի անհաւատն և անաստուած
Տէրոջն օրէնք կը խափանէ :

4 Անոր համար ես սիրեցի
Պատուիրանքներդ բոլոր սրտով .
Ազնիւ ոսկին ես սեպեցի
Ոչինչ բան քու պատգամիդ քով :

5 Անոր համար ամէն քուկին
 Պատուէրդ ուղիղ կը համարիմ.
 Եւ սրտութեան ճամբան մըթին
 Միշտ ատելով՛ ետ կը քաշուիմ :

106 Ա. Գրո-Յոյ Խօսքն համար նախանշանորո-նիւն .
 Սաղ . ՃԺԹ . (8 , 6) :

1 Արկայութիւնդ զարմանալի
 Ի միշտ ինձ հաճելի ,
 Անոր համար իմին հողիս
 Զայն միշտ պահէ պիտի :

2 Քու սուրբ խօսքիդ պատուիրանքներն
 Միշտ լոյս կու տան մարդուն .
 Միամիտներն ու տրդէտներն
 Կ'ընեն շուտ իմաստուն :

3 Բերանս բացի , հառաչեցի ,
 Խօսքիդ ես ցանկացի .
 Ճամբուդ մէջ դուն զիս հաստատէ ,
 Զարն ալ չիշխէ ինձի :

4 Մեր վրայ քու լոյսըդ փայլեցուր ,
 Ծառագ լուսաւորէ .
 Քու սուրբ օրէնքդ ինձ սորվեցուր ,
 Ճամբագ ինձ ցուցընէ :

5 Կ'իջնան խմին աչուրներէս
 Արցունք դետի նրման ,
 Ձի շատ մարդիկ չըպահեցին
 Օրէնքը սրբազան :

107 Ասորո՞ւն ի՞նչ քան զայ դրո՞ւս յոյսը դեռի
 հասարակ մայ . Սաղ . ՃԺԹ . (8) :

- 1 Տես խեղճութիւնս և զիս փրկէ ,
 Ձի քու օրէնքդ ես չըմոռցայ .
 Տես դատաստանս , իս ազատէ ,
 Փրկչին խօսքին ես յուսացայ :
- 2 Քու փրկութիւնդ է հեռացած
 Չար նենդաւոր մարդիկներէն ,
 Որ քու օրէնքդ են աքսորած ,
 Եւ սուրբ խօսքերդ միշտ կ'անարդեն :
- 3 Ով Տէր Աստուած , վերէն նայէ ,
 Ձի պատուիրանքդ ես սիրեցի .
 Քու դըժութեամբդ ինձ ողորմէ ,
 Ձիս ապրեցուր , քեզ հաւտացի :
- 4 Ըսկիզբն ու հիմ քու սուրբ խօսքիդ
 է աներկբայ ճշմարտութիւն .
 Դատաստաններն անսուտ բերնիդ
 Են յաւիտեան արդարութիւն :

108 Աստուծոյ Իրերար Էօսէլ . Սաղ . ՃԺԹ .
(8) :

- 1 Աղօթքըս , Տէր ողորմութեան ,
Ֆուկին առջիդ միշտ մօտենայ .
Եւ սուրբ խօսքիդ ճշմարտութեան
Սիրտս հեռեող , լըսող ըլլայ :

- 2 Լեզուս քու խօսքդ պիտի պատմէ ,
Զի անիկա է միշտ շիտակ .
Պատուիրանքներդ պիտի դուլէ ,
Զի են արդար և լուսարձակ :

- 3 Ես ոչխարի պէս կորսըւած՝
Թափառելով մոլորեցայ .
Տէր , քու ծառագ միշտ ես վնտուած ,
Զի պատուէրներդ ես չըմոռցայ :

- 4 Տէր , քու աջովդ ձեռքէս բռնէ ,
Զի պատուէրներդ ես ընտրեցի .
Թող անձս ապրի ու քեզ օրհնէ ,
Եւ քու շընորհքդ օղնէ ինձի :

109 Մենք չենք յէր Սուրբ Գիրքը . (7, 6,
8, 6) :

- 1 Մենք չենք ձրդեր Սուրբ Գիրքը ,
Աստուածաշունչ մատեանն .
Քանզի մանկանց է առաջնորդ ,
Ծերոց ալ գաւազան :
Ճըրագ է նա . լոյս փառաւոր
կու տայ մեր մութ ճամբուն .
Կը ցուցնէ փառք երկնաւոր ,
Բընակարան սիրուն :
Մենք չենք ձրդեր Սուրբ Գիրքը ,
Աստուածաշունչ մատեանն .
Քանզի մանկանց է առաջնորդ ,
Ծերոց ալ գաւազան :
- 2 Մենք չենք ձրդեր Սուրբ Գիրքը ,
Քանզի միայն անկէ
Երկնից ճամբան կրնանք գտնել ,
Փախչիլ ալ դըժոխքէ :
Անոր մէջ կը կարդանք թէ ո՛վ
Իջաւ հոս երկինքէն ,
Որ իր արիւնը թափելով
Մեզ ազատէ մեղքէն :
Մենք չենք ձրդեր Սուրբ Գիրքը , Լայն :

3 Մենք չենք ձըդեր Սուրբ Գիրքը ,
 Այլ քարոզենք պիտի ,
 Որ արձագանդը ազդերէն
 Ծովուն անդին լսուի ,
 Եւ փրկութեանը ձայն լըսեն
 Մարդիկ ամէն երկիր .
 Մենք ալ Տէրոջը սուրբ խօսքէն
 Բընաւ չենք հրաժարիր :
 Մենք չենք ձըդեր Սուրբ Գիրքը , Էյն :



Հ Ր Ա Ի Է Ր Ն Ե Ր

Ե Ի

Զ Գ Ո Ի Շ Ո Ի Թ Ի Ի Ն Ն Ե Ր

110 Յեռուսի եկ այսօր :

1 Յիսուսի եկ այսօր :

2 Կը փրկէ քեզ այսօր :

3 Հաւատա դուն այսօր :

4 Ինք կարող է այսօր :

5 Ինք պատրաստ է այսօր :

6 Կ'ընդունի քեզ այսօր :

7 Փնտրուէ զինք այսօր :

8 Ո՛հ , կանչէ զինք այսօր ,

9 “ Ողորմէ ինձ ” այսօր :

10 Կը լըսէ քեզ այսօր :

11 Կը ներէ քեզ այսօր :

12 Կը մաքրէ քեզ այսօր :

13 Կը սիրէ քեզ այսօր :

14 Մի մերժեր զինք այսօր :

15 Ո՛հ , գրկէ զինք այսօր :

111 “Եկե՛ք քեզի, և ես յեղպիսի հանգչեցընէմ” .
(6 , 6 , 8 , 6) :

1 Ահա Աստուած գըլթած
Քեզի հրաւէր կու տայ .
Շնորհաց դահլին վրայ է նստած ,
Խեղճ մեղաւոր , գընա :

2 Դիմէ իրեն անվախ ,
Խնդրէ որ հաշտուիս .
Անսուտ է ինք , և անյապաղ
Չըրի պիտի ներուիս :

3 Իր Սուրբ Հոգին խնդրէ ,
Որ նոր սիրտ տայ քեզի ,
Երկնից համար քեզ պատրաստէ ,
Ու միշտ մէջդ բընակի :

4 Պատրաստ է հիմա տալ
Այս պատուական պարգևն ,
Վերջն ալ հանդիտոր կատարեալ
Իր աթոռին առջևն :

112 Տէրօջը յոյնը • (8, 6) :

1 Տէրօջը ճայնը լըսեցի •
 Ըսաւ, «Ինծի եկուր •
 Գըլուխըդ, ով յողնած հողի,
 Կուրծքիս վրայ պառկեցուր” :
 Ինչպէս էի անոր եկայ,
 Կոյր՝ մերկ՝ յողնած՝ տրտում •
 Հոս ապաստանարան դըտայ,
 Ան ինձ տըլաւ խնդում :

2 Տէրօջը ճայնը լըսեցի •
 «Չըրիաբար խըմէ
 Կենաց ջուրէն”, ըսաւ ինծի,
 «Եւ խըմելով ապրէ” :
 Եկայ, դաւաթըս լեցուցի
 Այն կենսատու ջըրով •
 Անով ծարաւըս անցուցի,
 Հիմա կ’ապրիմ անով :

3 Տէրօջը ճայնը լըսեցի •
 «Ես աշխարհիս լոյսն եմ •
 Եկուր, գիշերդ պիտի անցնի,
 Տորեկդ վայլեցընեմ” :

Եկայ , և ան եղաւ ինծի
 Արև , լուսոյ շրջան ,
 Եւ այն լուսով քալեմ պիտի
 Մինչև ճամբուս վախճանն :

113 Մեղաւոր , լեւ սո յայնը . (8 , 3 , 3 , 6) :

1 Մեղաւոր , լըսէ սա ճայնը .
 Այժմ եղեր
 Մըտադիր
 Երկնաւոր կոչմանը :

2 Մինչդեռ կայ քեզի երկինքը
 Օթեան ,
 Լեր ժրաջան .
 Քեզ կանչեց Տէրն ինքը :

3 Քու առջիդ պատրաստ խնճոյք կայ .
 Մի սպասեր ,
 Առ և կեր .
 Կեանք պիտի հողւոյդ սայ :

114 Ա.-եղբայրանին հրա-հրը . (8 , 6) :

1 Աւետարանն իր ձայնն կու տայ ,
 իր փողը կը հնչէ .

Ամէն սիրտ թող ուրախանայ ,
 Ամէն ականջ լըսէ :

2 Ձեզի , ով սովամահ հողիք ,
 Ի՞նչ խրատ կու տայ ձեր Տէրն .

Ինչո՞ւ հողմով կերակրուիք .
 Պարապ են ձեր ջանքերն :

3 Ձի երկնային իմաստութիւնն
 Խնճոյք կը սլատրաստէ ,
 Եւ գըթութեամբ ամէն մէկուն
 Ձըրի հրաւէր կ'ուղղէ :

4 Դուք որ մարած կը հառաչէք
 Վըտակներուն համար ,

Հոս ձեր ծարաւը անցուցէք .
 Աղբիւրը չի չորնար :

5 Կ'առատանան և կը յորդեն
 Սիրոյ գետերը հոս .

Եւ փրկութեան կաթն ու գինին
 Կ'ըլլան ովկիանոս :

6 Քու սէրդ , ով Տէր , է դանձ անհուն ,
 Հանք յաւիտենական ,
 Խորունկ և լայն , մեր վիշտերուն
 Եւ մեր մեղաց նրման :

115 Ուրախութիւն . (8 , 6) :

1 Ով մեղաւոր ահարեկած
 Մնթիւ կասկածներով ,
 Յանցանքներու տակ ճնշւած
 Մհիւ և երկիւղով .

2 Եկուր սրտիւ խոնարհական .
 Թէ և քեզ արդիլէ
 Մարմինն , աշխարհ կամ սատանան ,
 Այս որոշումն ըրէ .—

3 « Պիտի դիմեմ Տէր Յիսուսին ,
 Իր բակը ես դիտեմ .
 Մեղքերս լեռան կը նրմանին ,
 Բայց հոն պիտի մտնեմ :

4 Շիտակ ան մարդասէր փրկչին
 Շուտով պիտի երթամ ,
 Եւ ողորմած թագաւորին
 Ոտից առջևն իյնամ :

- 5 Գուցէ ձայնիս մըտիկ ընէ ,
 Գուցէ շնորհաց հասնիմ .
 Իր գաւազանն երկընցունէ ,
 Որ դպչելով ապրիմ :
- 6 Գուցէ աղերսըս ընդունի .
 Քայց թէ և մերժըլիմ ,
 Ուրիշ տեղ յոյս չըկայ ինձի ,
 Պիտի հոն կորսըլիմ” :
- 7 Այլ ոչ , ով մեղաւոր խոնարհ ,
 Հոն չես կրնար մեռնիլ .
 Ոչ սատանայ և ոչ աշխարհ
 Կրնայ քեզի հասնիլ :
- 8 Հոն , հոն միայն ես ապահով ,
 Մնոր խոստմունքն ունիս .
 Քեզ կ’ընդունի անհուն սիրով ,
 Ու յաւիտեան կ’ապրիս :

116 Մեղաւորներուն խրատ և յորհորակ . (8 , 6) :

- 1 Ով մեղաւոր մարդ , խեղճ թշուառ ,
 Նայէ որ քեզ ճանչնաս .
 Մուտ աշխարհիս փառացն համար
 Դրախտէն դուրս չըմընաս :

- 2 Փուճ բաներու դուն խելք մի տար ,
 Զանա զանոնք մոռնաա .
 Զի այս աշխարհս յանկարծարար
 Պիտի թողուս երթաա :
- 3 Յիսուս նստած յաթոռ փառաց
 Մեղքերդ պիտի քննէ .
 Դուն մի յուսար որ ոսկւոյ դանձ
 Նոյն օրն քեզի օգնէ :
- 4 Քեզ պատրաստուած է փառք դրախտին ,
 Դեռ չես անկէ դրկուած .
 Քեզ կը կոչէ ձայն Յիսուսին .
 Լըսէ որ ետք չի լաա :
- 5 Այն սուրբ ձայնին շուտ հնազանդէ ,
 Վազուան ան մի ձրդեր .
 Այս մեծ շքնորհքն ու ժամն յարդէ ,
 Զի մէյմ՝ ալ չես դաներ :

117 Մանուկն պարտասիրելին . (8) :

- 1 Քանի որ մահը կ'ուշանայ ,
 Ողորմութիւն և յոյս ալ կայ .
 Բայց , ո՛հ , շուտով խորունկ գիշեր
 Պիտի կարէ ամէն յոյսեր :

2 Այսօր Աստուած կը հրաւիրէ ,
 Կենաց խօսքերն ի՞նչ քաղցըր է .
 Ով մեղաւոր , վազէ , եկու ,
 Պատրաստ է Տէրն քեզ ներելու ։

3 Արագ թւերն ժամանակին
 Քեզ դերեզմանը կը տանին .
 Եւ այն ատեանն ուր յոյս չըկայ՝
 Հոգիդ պիտի ներկայանայ ։

4 Այն աւերակ , անյոյս երկիր
 Ուրախութեան լոյս չըծագիր .
 Աստուած չը կայ աղօթք լըսող ,
 Յիսուս չը կայ հոգիդ վերկող ։

118 Մեղաւորն յորհորան+ . (7 . 6 տող) ։

1 Քարեղէն սիրտ , արդ զզջա ,
 Կակուղցիր խաչէն յաղթուած .
 Տես արիւնն հողին վըրայ ,
 Եւ մարմինը ջախջախած .
 Մեղաւոր , աս ի՞նչ ըրիր .
 Տէրը դուն ըսպաննեցիր ։

- 2 Մեղքըդ Տէրն ըստաննեցին ,
 Գամ զարկին իր մարմինն .
 Փուշերով պըսակեցին ,
 Խօթեցին նիզակ կողին .
 Իր հոգին ան զոհ ըրաւ ,
 Քու մեղացդ համար մեռաւ :
- 3 Արդ փրկչին այս մահն պիտի
 Քու հոգւոյդ ունայն ընես .
 Իր արիւնն նորէն պիտի
 Քու ոտիցդ կոխան ընես :
 “Ոչ . ով Տէր , մեղքէս զատուլմ ,
 Ընդունէ կոտրած սիրտ իմ” :

119 Մեղացդն Իրի-նի-նը . (10) :

- 1 Ո՛վ զարմանալի սէր Աստուածային ,
 Որ ինք մեր աշխարհն խրկեց իր Որդին .
 Եկաւ մեզ փրկեց մահէն ,
 Դըժոխքէն ,
 Ու մեզ մօտեցուց մեր Ըստեղծողին :
- 2 Բոլոր մեղքերնիս վըրան ինք առաւ ,
 Խաչին վըրայ Տէրն մեր տեղը մեռաւ .
 Իր ամենասուրբ արիւնը և կեանք ,
 Մեզի փրկելու անհուն զին տըրաւ :

- 3 Տեսէք մեր փրկիչն՝ որ մահը յաղթած ,
 Անճառ մեծ փառքով երկինքն է ելած .
 Մեզի համար հոն կը բարեխօսէ ,
 Իր Հօրն Աստուծոյ աջ կողմը նստած :
- 4 Անկէ դատաստան պիտի Տէրն իջնէ ,
 Ահեղ փողերով պիտի մեզ կանչէ .
 Դսկոյն ալ բացուի ամէն գերեզման ,
 Ու ննջեցեալներն իր դատը բերէ :
- 5 Արդար Դատաւոր , ինծի շընորհք տուր ,
 Անկէ ապահով իմ անձըս անցուր .
 Եւ քու արիւննովդ մեղքէն մաքրուած ,
 Ի գունդս հրեշտակաց հողիս բազմեցուր :

120 Ուշ մատուց լարանդ . (10) :

1

Ինչո՞ւ դուք ըսէք թէ Դեռ կանուխ է
 երկնից ու մահուան վրայօքը խորհիլ .
 Ծաղիկ մը շուտով թուամիլ հընար է ,
 Ինծի ալ այսօր հընար է մեռնիլ :

2

Թէ որ ապրատամբ հողիս անարգէ
 Տէրօջը անհուն շընորհքն և բարի ,
 Վերջն ալ սուրբն Աստուած պիտի զիս մերժէ ,
 երկնից փառաց մէջ պիտի շընդունի :

3

Երբոր բարկանայ, ալ ես ի՞նչ ընեմ,
 Ու երբ սիրելուն տեղ Տէրն իս առէ,
 Որ իր շընորհքներն հիմա կ'անարդեմ,
 Ու սիրաս չարութիւնն և մեղք կը սիրէ :

4

Ո՛հ, ի՞նչ ստակալի է իր ձեռքն իյնալ,
 Իր ուժը անհուն ի՞նչպէս հասկընամ.
 Երբ ինք ըսկըսի ինձի բարկանալ,
 Անգամ մը զարնէ՝ դըժոխքը կ'երթամ :

5

Այն ժամը կանչել պարապ է բընաւ,
 Ներում, թողութիւն ու շնորհքը խնդրել.
 Ապաշխարութեան ատենը անցաւ,
 Եւ յոյս չըմընաց իմ Տէրըս տեսնել :

121 Յանպատրաստից ինչ[՞] - Գանիս . (8) :

1 Ով անձրս, շուտ ապաշխարէ,
 Քեզմէ մեղացրդ լուծն ձրդէ .
 Ատկէ քեզի հա՛ վարձք ունիս,
 Յանպատրաստից ինչո՞ւ մեռնիս :

2 Հեղ Յիսուսին հիմա դիմէ,
 Սրտանց կտրէ յոյսերդ քեզմէ .
 Յիսուսի պէս Փրկիչ ունիս,
 Յանպատրաստից ինչո՞ւ մեռնիս :

3 Ո՛հ , յարաժամ պատրաստ կեցիր ,
 Եւ քու պարտքերըդ լաւ ճանչցիր ,
 Բարիք դորժէ , միջոց ունիս ,
 Յանպատրաստից ինչո՞ւ մեռնիս :

4 Ով Սուրբ Հոգի , դուն ինձ օգնէ ,
 Մահուան համար զիս պատրաստէ ,
 Սրբացուցիչ որ քեզ ունիմ ,
 Յանպատրաստից ինչո՞ւ մեռնիմ :

5 Ով Հայր , Որդի և Սուրբ Հոգի ,
 Երրորդութիւն ըսքանչելի ,
 Ես որ կնիքդ ճակատս ունիմ ,
 Յանպատրաստից ինչո՞ւ մեռնիմ :

122 ՅԻՔԵՂԵԱՆ ԿԱՐԷՆ . (6 , 6 , 6 , 6 , 8 , 8) :

1 Հնչեցուցէք փողերն ,
 Ամէն ազգ աշխարհիս
 Մինչև երկրին ծայրերն
 Լըսեն այս աւետիս .
 « Հասաւ մեծ Յորեղեան տարին ,
 Ով մեղաւորք , դարձէք Փրկչին » :

2 Յիսուս մեծ ֆահանհան
 Մեզ քաւութիւն ըրաւ .
 Տրամեալք ուրախ ըլլան ,
 Պատիժն մեզմէ վերցաւ .
 Հասաւ մեծ Յորեւեան տարին ,
 Ով մեղաւորք , դարձէք Փրկչին :

3 Մեղաց գերիներուն
 Ահա ազատութիւն .
 Գըսէք ՚ի Տէրն սիրուն
 Այս ապահովութիւն .
 Հասաւ մեծ Յորեւեան տարին ,
 Ով մեղաւորք , դարձէք Փրկչին :

4 Տէրոջը Գառնուկին
 Տըւէք պատիւ և փառք .
 Քարողեցէք Փրկչին
 Անունն բոլոր աշխարհք .
 Հասաւ մեծ Յորեւեան տարին ,
 Ով մեղաւորք , դարձէք Փրկչին” :

123 Աստուծոյ հանգստութիւն . (6, 6, 8, 6) :

1 Թափառական հողիս ,
 Դադրէ , աս աշխարհիս
 Մէկ բեւեռէն մինչև միւսին
 Հանգիստ չըկայ քեզի :

2 Տես Աստուծոյ տապանն ,
 Նայէ այն բաց դըրուանն .
 Շուտով մըտիր հոն բընակէ ,
 Ոչինչ յոյսերդ ձըգէ :

3 Հանգիստ պիտի ըլլաս ,
 Եւ շատ ուրախանաս .
 Ամէն երջանկութեամբ լեցուիս ,
 Տէրոջմով վրկըլիս :

4 Ով անհանգիստ հոգիս ,
 Դագըրէ , աս աշխարհիս
 Մէկ բեւեռէն մինչև միւսին
 Հանգիստ չըկայ քեզի :

124 Ա. շնորհաց ախոռն . (11 , 10. յատուկ) :

1

Եկ տրտմալից դու , երբ ցաւ քեզ պատած է :
 Եկ շընորհաց աթոռին ջերմ , խոնարհ .
 Հոս բեր քու սիրտըդ երբ վիշտով խոցուած է .

Հոս կը գըտնեն դեղ ամէն ցաւք դժուար :

2

Հոս մոլորեալն կը գտնէ կենաց լոյսը ,
 Հոս ալ տրտմեալըն ցնծում անըսպառ .
 Մըխիթարիչն հոս կու տայ խըրախոյսը .
 Հոս կը գտնեն դեղ ամէն ցաւք դժուար :

Հոս կենսատու երկնից ջուրը բղխեալ է ,
 Սէր կը վազէ աթոռէն անդադար .
 Քեզ է կոչումը , պայմանն հաւատալ է .
 Հոս կը գտնեն դեղ ամէն ցաւք դժուար :

125 Փառաց պահք . (յատուկ) :

- 1 Եւիր , ով Յիսուսի զինուորն ,
 Մօտ է քեզ փորձութիւն .
 Ճակատամարտդ է ահաւոր ,
 Կամ մահ կամ յաղթութիւն :
 Մենք Յիսուսի ենք զինուորներ ,
 Անոր կը հետեւինք .
 Մեր փողը մեզ ետ չըկանչեր ,
 Մինչև որ պըսակուինք :
 Կայ փառաց պսակ մը քեզի ,
 Կայ փառաց պսակ մը ինձի .
 Կայ պսակ քեզի ,
 Կայ պսակ ինձի ,
 Երկնաւոր տանը մէջ պահուած :
- 2 Արթուն կեցիր . խիստ խորամանկ
 է քեզ դարան գործողն .
 Աս ալ յիշէ , որ բուն վըտանդ
 Մեզքն է՝ ներսդ բընակողն :

Քեզի կայ պատերազմ առաջ,
 Բայց ետքը յաղթանակ .
 Հիմա քեզ կըրելու կայ խաչ,
 Անկէ ետև պըսակ :

Կայ փառաց պսակ մը քեզի, Լայն :

3 Օրհներդ ութեամբ և աղօթքով
 Երկայն գիշերն անցուր .
 Հսկողութեամբ ու մաղթանքով
 Զէնքերըդ փայլեցուր :

Եւ բանակէն դուրս չարչարուած
 Քու Զորագլուխդ յիշէ .

Պսակդ երկնից մէջ պատրաստուած
 Աչքիդ առջև պահէ :

Կայ փառաց պսակ մը քեզի, Լայն :

4 Ուրախ լեր, Յիսուսի զինուոր,
 Վերերը կայ քեզի

Սրբոց հանգիստ, փառք երկնաւոր,
 Քընար, արմաւենի :

Հաստատ կեցէր . քու վարձքդ է մեծ,
 Ըստոյդ է յաղթանակն .

Ան որ փրչեայ պսակն կրեց
 Կու տայ փառաց պըսակն :

Կայ փառաց պսակ մը քեզի, Լայն :

THE UNITED PRESBYTERIAN MISSION LIBRARY

475 Riverside Drive, New York 27, N. Y.

126 ԶԻՆՆԵՐ ՔԵԼԵՐՆԵՆԻ • (յատուկ) :

- 1 Ո՛վ ֆրիատոսի օրհնեալ զինուորն ,
Ազէկ քեզ պատրաստէ .
Յխուսս ֆրիատոս մեծ առաջնորդն
Աչքիդ առջին բըռնէ :
Խաչին դըրօշն բըռնած ,
Աշխարհն ետիդ ձըգած ,
Փողին ձայնին մըտիկ ըրէ ,
Եւ միշտ յառաջ վազէ :

- 2 Քու Տէրդ ճամբադ կը պատրաստէ ,
Որ անվրտանդ վազես .
Ինկած ատենդ կը վերցընէ ,
Որ զինք փառաւորես :
Քեզ միշտ կը կերակրէ ,
Վէրքերդ կը բըժշկէ .
Քեզի ալ , երբ փառքովը դայ ,
Փառաց պըսակ կու տայ :

- 3 Քու Թագաւորդ ապստամբներն
Այն օրն պիտի պատժէ .
Եւ անհնազանդ հետեւողներն
Փառքէն պիտի զրկէ :

Ուստի հնազանդ եղիր ,
 Շնորհացը մէջ կեցիր .
 վարձատրութեան օրն երբոր դայ ,
 վարձքդ մեծ պիտի ըլլայ :

127 Գալ կ'ուզե՞ս . (յատուկ) :

- 1 Կը ճամբորդենք տունն երկնային .
 Գալ կ'ուզե՞ս , դալ կ'ուզե՞ս ,
 Որ հոն երգենք սէրն մեր փրկչին .
 Գալ կ'ուզե՞ս , դալ կ'ուզե՞ս :
 Բիւրաւորներ այն տունն հասան ,
 Եւ հոն անդուլ կ'ուրախանան ,
 Ու հիմա բիւր ճամբորդք ալ կան .
 Գալ կ'ուզե՞ս , դալ կ'ուզե՞ս :

- 2 Կ'երթանք Գառնուկը տեսնելու ,
 Գալ կ'ուզե՞ս , դալ կ'ուզե՞ս .
 Իր սուրբ անունը գովելու ,
 Գալ կ'ուզե՞ս , դալ կ'ուզե՞ս :
 Կենաց պըսակ պիտի դընենք ,
 Ու ոսկիէ քընար զարնենք ,
 Յնժում ալ լիովին վայլենք .
 Գալ կ'ուզե՞ս , դալ կ'ուզե՞ս :

- 3 Ով դուռն յողնած բեռնաւորուած ,
 Գալ կ'ուզե՞ս , դալ կ'ուզե՞ս .
 Քեզի հանգիստ կայ պատրաստուած ,
 Գալ կ'ուզե՞ս , դալ կ'ուզե՞ս :
 Քեզ ընդունիլ Տէրն կը բազձայ .
 Ով որ անոր կը հաւատայ՝
 Տէրոջը փառքն պիտի տեսնայ .
 Գալ կ'ուզե՞ս , դալ կ'ուզե՞ս :
- 4 Ասկէ ուրիշ ճամբայ չըկայ .
 Գալ կ'ուզե՞ս , դալ կ'ուզե՞ս .
 Ապաշխարէ ու հաւատա .
 Գալ կ'ուզե՞ս , դալ կ'ուզե՞ս :
 Փրկչիդ այս ձայնն մըտիկ ընես .
 «Խաչդ առ , եկուր իմ ետեէս ,
 Ու փրկուիլունս պիտի տեսնես» .
 Գալ կ'ուզե՞ս , դալ կ'ուզե՞ս :
- 5 Ո՛ւր էր որ այս ձայնն լըսէի .
 Գալ կ'ուզեմ , դալ կ'ուզեմ .
 Շուտով ճամբայ ելլեմ պիտի .
 Գալ կ'ուզեմ , դալ կ'ուզեմ :
 Չար ընկերներս պիտի մերժեմ ,
 Ու լայն ճամբան պիտի ձըգեմ ,
 Տէրոջըս հետ ապրիլ կ'ուզեմ .
 Գալ կ'ուզեմ , դալ կ'ուզեմ :

128 Մէկ ժամ մը կայ, մէկ կէտ մը կայ, (8, 6) :

1 Մէկ ժամ մը կայ, մէկ կէտ մը կայ,
Թէպէտ մեզ անծանօթ .

Ամէն մարդու վրճիուն կու տայ,
Կամ փառք և կամ ամօթ :

2 Գըծով մը անտեսանելի,

Անյայտ մեր աչքերէն,
Տէրօջը դուժը կը զատուի
Անոր բարկութենէն :

3 Բայց մարդը այն դըժէն անցած՝

Գուցէ անհող մընայ,
Մինչև անոյս և կորսըւած՝
Դժոխքի մէջ արթննայ :

4 Տէրն ո՞րչափ պիտի համբերէ

Անոնց որ մեղք դործեն .
Ե՞րբ բարկութեամբ պիտի ըսէ,
«Հանգիստըս չըմտնեն» :

5 Ո՞ւր է այն ահաւոր սահման .

Յոյսն ե՞րբ կը վախճանի .
Ով մեղաւորք, այս պատասխան
Վերէն կու գայ ձեզի .

- 6 «Այսօր ձեր Աստուծոյն ձայնին
 Թէ որ պիտի լըսէք,
 Ձեր սիրտը ապստամբութեան
 Աւ մի խստացունէք» :

129 Չարերուն Իրար . Սաղ . Ծ . (8) :

- 1 Աստուածներուն Աստուածն և Տէր
 Ինք խօսեցաւ բոլոր երկրին,
 Եւ Սիօնէն Տէր մարդասէր
 Կանչեց ամէն ազգ մարդկային :
- 2 Ո՛վ ժողովուրդս, մըտիկ ըրէ,
 Քանզի քեզի պիտի խօսիմ.
 Ո՛վ Իսրայէլ, քու միտքդ պահէ,
 Որ ես քուկին Փրկիչդ կ'ըսուիմ :
- 3 Ես քու տունէդ չեմ ընդունիր
 Ոչ զըւարակ, ոչ նոխազներ,
 Իմն է աշխարհ, բոլոր երկիր,
 Անօթեանամ՝ քեզ չեմ ըսեր :
- 4 Ձըւարակաց միս չեմ ուտեր,
 Ինձ նոխազաց արիւնն պէտք չէ .
 Ձոհն օրհնութեան կ'ուզէ միշտ Տէր,
 Դուն Բարձրելոյն ուխտդ կատարէ :

130 Աստուծոյ եր ժողովուրդն ասած երասը .

Սաղ . 2Ա . (10) :

1

Սրտանց ցնծացէք Տէրոջը առջին ,
 Զի ան է մեզի ոյժ և զօրութիւն .
 Ազաղակեցէք մեր մեծ Արքային ,
 Անով մենք գըտանք կեանք և փրկութիւն :

2

Ով իմ ժողովուրդս , լըսէ ասիկա ,
 Քեզի վըկայեմ թէ որ միտք առնես .
 Օտար աստուածներ քու մէջըդ չըլլայ ,
 Երկրպագութիւն անոնց դուն չընես :

3

Ես եմ Տէր Աստուածդ որ Եգիպտոսէն
 Ըզքեզ հանեցի , քանզի Փրկիչդ եմ .
 Լայն բաց քու բերանդ , ու ես երկինքէն
 Շուտով անիկա պիտի լըցունեմ :

4

Ո՛ւր էր ժողովուրդս մտիկ ինձ ընէր ,
 Եւ իմ ճամբայիս մէջն ալ միշտ մընար .
 Իրեն թշնամին շուտով կը փլչէր ,
 Ու զինք փրկելու իմ ձեռքս կ'երկննար :

131 ՅԻՐԵՐ ԷՐԵՆՆԵՐԻՆԻՆ . (8 , 7 , 4 , 7) :

- 1 Օ՛ն , եղբարք , Տէրօջն դիմենք շուտ
Սըգալի խոնարհ սրտով .
Մեղքերնիա խոստովանինք մենք՝
Շընորհաց Տեառն յուսալով .
Յոյս կայ այս տեղ ,
Շնորհք բաշխող Գահին մօտ ենք :
- 2 Մեղք ըրինք անհող , անսանձ խիատ ,
Սպերախտ եղանք 'ւ անդուծ .
Սատուծոյ անուան ամօթ ենք ,
Թող յիշենք հիմա մեր ուխտ .
Յոյս կայ այս տեղ ,
Շնորհք բաշխող Գահին մօտ ենք :
- 3 Մենք՝ ալ չենք Եկեղեցւոյն փառք ,
Ո՛հ , հաւատարիմ չեղանք .
Սէր միմեանց հաղորդելու տեղ
Թշնամի անհաշտ եղանք .
Յոյս կայ այս տեղ ,
Շնորհք բաշխող Գահին մօտ ենք :
- 4 Հիմա մեզ այցելութեան շնորհք
Շուտ խնդրենք Սուրբ Հողիէն ,

Որ մեզի է զօրութիւնն մեծ
 Չար դիւին նետեց ընդդէմ.
 Յոյս կայ այս տեղ,
 Շնորհք բաշխող Գահին մօտ ենք :

5 Ուխտ ընենք արդ միաբանն նոր,
 Սուրբ սիրով ապրել, դործել
 Միշտ արթուն՝ Տէրոջն այգւոյն մէջ,
 Զինքն այնպէս վառաւորել.
 Յոյս կայ այս տեղ,
 Շնորհք բաշխող Գահին մօտ ենք :

132 “Ա՛ն ո՛ր է յարե՛” . (8 , 7) :

1 Ի՞նչ հողեր չորս դիդ պատած է,
 Ով հողիս . քաղցած դուն ես,
 “Հաց կենաց” քեզ պատրաստուած է,
 Թէ սիրով վառուած յաղթես :

2 Մի վախնար թէ մահը մօտ է,
 Նա զրկել կարող չէ քեզ
 Այն կեանքէն, որ Տէրդ շնորհած է,
 Թէ սատանային յաղթես :

- 3 Օծութիւն ունիս Սուրբէն դուն ,
 «Երկնային ման՛նայ» միշտ քեզ
 կը թափուի առատ յերկնից բուն ,
 կիրքերուդ թէ որ յաղթես :
- 4 Խիստ շնորհա՛ն թշնամիներդ ,
 վախերիով պատա՛ծ ալ ես .
 «Մտող անաւծտեան» փրկիչըդ
 ֆեղ կու տայ թէ որ յաղթես :
- 5 Զդուչացիր ճամբաներուդ դու ,
 Հոս հանդերձըդ չաղտոտես .
 «Մէջ կենաց Գրքին» անուն քո
 Մնայ անջինջ թէ որ յաղթես :
- 6 Խաբերայք պատա՛ծ են չորս դիդ ,
 Մոլորցնել ջանան թող քեզ .
 Քու փառաց «պրսակդ» բունէ պինդ ,
 Միշտ քուկդ է այն թէ յաղթես :
- 7 Խեղճութիւնք ու տառապանք շատ
 Ի խըբատ դիպա՛ծ են քեզ .
 Քահն երկնից կը ժառանդես արդ ,
 Հաւատքով թէ որ յաղթես :

133 Քանանացի կնոջն օրինակը . (8) :

- 1 Մինչև երբ ես խոր հառաչանք
Մեղքէն խոցուած ընեմ պիտի .
Ո՛հ , մատուցի շատ աղաչանք ,
Բայց չըլըսեց Փրկիչս ինձի :
- 2 Կ'աղաղակեմ կրկին կրկին
Թախանձանօք խիստ ողորմուկ .
Չեղայ արժան պատասխանին ,
Դեռ կը մընամ թշուառ խեղճուկ :
- 3 Սրգեօք հիմա յուսահատեալ
Սլ ետ երթամ կորսըլեըլ ,
Քանանացի կինն անարգեալ
Ինձ օրինակ չէ՞ յուսալու :
- 4 Հողիս , չըկայ ուրիշ մէկ յոյս ,
Դիւաց կըրից բռնութենէն
Որ ազատիս , միայն Յիսուս .
Մնով կ'առնուս շընորհք ամէն :
- 5 Դու հաւատքով ել Գողգոթայ ,
Խաչին ոտքը լաց , խոնարհէ .
Սրտանց ըսէ , «Քեզի եկայ ,
Որդի Դաւթի , ինձ ողորմէ» :

6 Իբրև որդի թէ չեմ արժան ,
 Ով Տէր , առատ շընորհքնեբուդ ,
 Թող սեղանէդ ինկած փշրանք
 Ինձ շընորհուի , կ'ուտեմ ես կուշտ :

134 “Քեզն է՞նչ եղաւ , ով Խորունկ բացող ,
 Եւ՛ր .” Յովն . Ա . 6 . (8) :

1 Քեզ ի՞նչ եղաւ . մի քընանար ,
 Մի՛ , Յովնանին պէս մի խորդար .
 Եւ , արթընցիր , ով իմ հողիս ,
 Վըտանդի մէջ կը տեսնեմ դիս :

2 Ահե՛ղ վըտանդ – մահը կու գայ ,
 Արագութեամբ կը մօտենայ ,
 Որ խեղճ մարմինըդ հոս ձըդէ ,
 Քեզ ատեանին առջին հանէ :

3 Ահե՛ղ ատեան սուրբ ու արդար ,
 Ողորմութիւն չիք – չես դտնար .
 Ամենագէտ , ատող չարաց ,
 Բազմի դատել , ՈՐ է՛ն Աստուած :

4 Ահեղ Աստուած , « մաշող կըրակ » ,
 Քննող սրտից , որոց միակ
 Ինքն է տեղեակ , վըկայ չուզեր ,
 Վըճիւ կու տայ , ալ ետ չառներ :

5 Ահեղ վըճիւ անդառնալի ,
 Ծոյլ քընացողն թող կորսըլի ,
 Անյուսութեամբ դըժոխք ձըղուլի ,
 Մինչ յաւիտեան հոն տանջըլի :

6 Ուրեմն ելիր , մի յապաղիր ,
 Փութով այն նեղ դռնէն մըտիր .
 Բնաւ մի շեղիր , յառաջ վազէ ,
 Եւ անդադար շընորհք խնդրէ :



135 Մեղի Խոսքն ընդ ինն . (8) :

- 1 Ինչո՞ւ ասանկ մեղքերս սիրեմ ,
 Ունայն հաճոյք ինչո՞ւ փնտռեմ ,
 Երկնից , դժոխքի վրայ չը խորհիմ ,
 Մոռնամ հոգիս , աղօթք ձրդեմ :

- 2 Ինչո՞ւ քու սուրբ խօսքերդ կարդամ ,
 Եւ միշտ սորվիմ քու օրէնքներդ .
 Ինձ ի՞նչ օգուտ դանոնք ճանչնամ ,
 Չեմ կատարեր սուրբ պատուէրներդ :

- 3 Ի՞նչ խիստ եմ ես քարի նրման .
 Ի՞նչպէս անչա՛հ են խորհուրդներս .
 Տէր , ողորմէ տրկարութեանս ,
 Ներէ բոլոր գործած մեղքերս :

- 4 Բաց ականջներս լրսել քու ձայնդ ,
 Շընորհք տուր ինձ՝ աղօթք սիրել .
 Քանզի , ով Տէր , դուն կը հաճիս
 Մեղաւորաց աղօթքն լրսել :

136 Զղջացեալ Վեղափոխի աղօթք . (8 , 6) :

- 1 Ո՛վ Տէր գըլթած , որ կը լըսես
Աղօթքը խեղճերուն ,
Ամէն արցունք ալ կը սրբես
Աչքէն տրտմածներուն :

- 2 Տես աթոռիդ առջին ինկած
Ծառադ , խեղճ մեղաւոր .
Քեզ փնտրուել չե՞ս հրամայած ,
Ինձի չըսի՞ր « Եկուր » :

- 3 Միթէ մեղքիս վախը կրնա՞յ
Զիս քու քովէդ վարել .
Ինձի միայն յոյս կը մընայ
Շընորհք առջիդ գտնել :

- 4 Թող քու անհուն ողորմութիւն
Իմ յոյսը հաստատէ .
Թող բըժշկող ձայնդ ցնծութիւն
Սրտիս մէջ տարածէ :

137 Մեղադրանքներ Գրեթե Երեւելու (8) :

- 1 Եղովակ եմ ես , ով Տէր , աղքատ ,
Մերկ եմ ու կոյր և յուսահատ .
Քեզմէ 'ի զատ որո՞ւ երթամ ,
Գառն Աստուծոյ , քեզի կու դամ :
- 2 Իմ մէջս չըկայ արդարութիւն ,
Յոյս , փրկութիւն կամ քաւութիւն .
Ինչպէս որ եմ , քու ոտքդ կ'իյնամ ,
Գառն Աստուծոյ , քեզի կու դամ :
- 3 Դուն քու արիւնըդ թափեցիր ,
Եւ խեղճ մեղաւորիս ըսիր ,
“ Բու փրկութիւնըդ ես կ'ըլլամ ” .
Գառն Աստուծոյ , քեզի կու դամ :
- 4 Հողին և հարսն՝ “ Եկուր ” , կ'ըսեն ,
“ Զըրի խըմէ կենաց ջուրէն ” .
Ես կը լըսեմ ու կ'արտորամ ,
Գառն Աստուծոյ , քեզի կու դամ :
- 5 Դուն ալ սիրով զիս ընդունէ ,
Բոլոր մեղքերըս , Տէր , ներէ .
Լըւա զիս որ մաքուր ըլլամ .
Գառն Աստուծոյ , քեզի կու դամ :

138 Մեղաց Խոստովանութիւն . Սաղ . ԾՍ . (10) :

1

Աստուած ողորմած , ինծի ողորմէ ,
 Անհուն գլխութեամբ իմ մեղքըս քաւէ .
 Ամէն յանցանքէս լըւա , զիս մաքրէ ,
 Իմին մեղքերէս , ու Տէր , զիս սրբէ :

2

Քանզի յանցանքներս յայտնի են ինծի ,
 Մեղքս ալ միշտ աչքիս առջին կը կայնի .
 Մինակ քեզի դէմ ես մեղանչեցի ,
 Ու մեծ չարութիւն առջևդ գործեցի :

3

Թէ որ իս պատժես , դուն կ'արդարանաս ,
 Ու դատաստանովդ ամբիծ կը մընաս .
 Քանզի յանցանքով մօրմէս յրդացայ ,
 Ծընած ատենս ալ մեղքի մէջ ծընայ :

4

Մաքրէ մշտիկով որ ես սրբանամ ,
 Զիւնէն աւելի ճերմակ ես ըլլամ .
 Ամէն մեղքերէս դուն զիս ազատէ ,
 Մըխիթարութեամբդ ուրախ զիս ըրէ :

5

Ով Տէր , ներսի դիս սուրբ սիրտ ըստեղծէ ,
 Ինծի նորոգուած հոգի մը շնորհէ .
 Զիս քու երեսէդ բընաւ մի ձրգեր ,
 Ու քու Սուրբ Հոգիդ ինծմէ մի հաներ :


Քանզի, ուլ Տէր, դուն զոհեր չես կամիր,
 Եւ ողջակէզներ բընաւ չես հաւնիր.
 Տէրոջ հաւնած զոհն կոտորած հողին է,
 Խոնարհ սրտին սէրն անոր հաճոյ է:

139 Նշը. Սաղ ԾԱ. (8):

- 1 Ուլ Տէր, ներէ, ցոյց դըթութիւնդ,
 Թող ապստամբն զղջայ, ապրի.
 Զէ՞ անսահման ողորմութիւնդ.
 Զարն չը՞կրնար յուսալ քեզի:
- 2 Յանցանքս մեծ են, բայց քոյդ շնորհաց
 Զօրութենէն չեն գերազոյն.
 Ինչպէս բնութիւնդ չունի սահման,
 Թող սէրդ ըլլայ անոր հանգոյն:
- 3 Ամէն մեղքէս լըւա հողիս,
 Ո՛հ, յանցաւոր խիղճըս մաքրէ.
 Ահա մեծ վիշտ այս է սրտիս,
 Գործած մեղքերս իմ ողբըս է:
- 4 Մեղքս ամօթով կ'խոստովանիմ
 Քու օրինացդ, շնորհացդ ալ դէմ.
 Տէր, թէև ես մահուան դատուիմ,
 Արդար ըլլալդ կը ճանաչեմ:

5 Վրէժխնդրութեամբ թէ շունչս կտրես,
 Ի մահ արդար քեզ դաւանիմ.
 Թէ որ հոգիս դըժոխք ղրկես,
 Արդար օրէնքդ զայն կը հաւնին :

6 Այլ թող խոստմանցդ ապաւինիմ,
 Քու խօսքդ ըստոյդ է յաւիտեան .
 Սաստիկ վախէս թող ազատուիմ,
 Փրկէ, Տէր, անձս թշուառական :



Ա Ղ Օ Թ Ք

140 Աղօթիւն շքոթիւնս և հարկաւորութիւնս .
(7) :

- 1 Աղօթքն է խօսք շատ զօրաւոր ,
Խորին բաղձանք կոտորած սրտի .
Ան է մեզի խիստ շահաւոր ,
Զի Տէրն անով մեզ կ'ընդունի :
- 2 Մարդիկ անով կեանք կը դտնան ,
Ազատութիւն մեզքի ուժէն .
Եւ յազթելով դըրանց մահուան ,
Ուրախութեամբ երկինք կ'ելլեն :
- 3 Անով երկիր , երկինք վերին ,
Մէկզմէկու կը միանան .
Զի Հայր Աստուած , Աստուածորդին
Անով կ'իջնան 'ի մէջ մարդկան :
- 4 Եւ Սուրբ Հոգին մեզ օգնելով՝
Աղօթքներնիս Տէրն կը լրսէ .
Յիսուս իր ուխտը յիշելով՝
Ամէն բան մեզ կը պարզէ :

- 5 Յիսուս , ինձի ականջըդ դիր •
 Ես սիրտս տըլի քեզի բոլոր •
 Դուն որ անդուլ աղօթք ըրիր ,
 Աղօթք ընել ինձ սորվեցուր :

141 Աշխարհիս — Սառանային դէմ աղօթք • (8 , 6) :

- 1 Տէր , դուն տըլիր մեզի խըրատ ,
 Որ միշտ աղօթք ընենք •
 Զի աղօթքով կ'ըլլանք ըզգաստ ,
 Անով մենք կը յաղթենք :
- 2 Արդ ընդունէ զայս մեր մաղթանք ,
 Օգնէ քոյդ որդեգրաց •
 Քու փորձըլիդ տուր օրինակ՝
 Յաղթել ամէն չարեաց :
- 3 Դուն յանապատն Սուրբ Գրոց խօսքով
 Փորձիչը յաղթեցիր ,
 Աշխարհս ու դէր յաղթելով՝
 Աստուած միայն պաշտեցիր :
- 4 Նոյն պատասխան մեզ սորվեցուր ,
 Որ աշխարհիս յաղթենք •
 Նոյն զօրութիւն և շնորհք մեզ տուր ,
 Դիւին ալ դէմ դընենք :

- 5 Աշխարհս է մեզ պանդխտութիւն
 Յաւոց ու փորձութեանց .
 Թէ որ յաղթենք հոս բանասարկուն ,
 Դրախտ է մեզ պատրաստուած :

142 Ժամանակ արժեքի . (8 . 8 տող) :

- 1 Ժամն արժօթքի , Ժամն արժօթքի ,
 Որ աշխարհէս զիս կը զատէ ,
 Որ հօրքս աթոռին գիմեմ ,
 Ու իմ կարօտութիւնս յայտնեմ :
 Երբ ցաւ ու վիշտ վրաս կը տիրէ ,
 Հոգիս հանդիստ միշտ կը դտնէ ,
 Փորձութենէ ալ կ'ազատի
 Քու հասնելովդ , Ժամ արժօթքի :
- 2 Ժամ արժօթքի , Ժամ արժօթքի ,
 Աղերսըս թեւերովդ տարուի
 Շնորհաց աթոռը նստողին ,
 Զղջացողին ձայնն լըսողին :
 Իրեն գիմել կը պատուիրէ ,
 Շընորհք խնդրել կը հրաւիրէ ,
 Հոգերս անոր ձրդեմ պիտի ,
 Քեզ ըսպասեմ , Ժամ արժօթքի :

- 3 Ժամ աղօթքի , ժամ աղօթքի ,
 Մըխիթարիչ ըլլաս ինձի ,
 Մինչև փասդա լեռնէն նայիմ ,
 Տեսնեմ իմ տունըս երկնային :
 Տըկար մարմինս պիտի ձըգեմ ,
 Տէրօջըս քովս պիտի ելլեմ ,
 Ու երթալով երգեմ պիտի ,
 « Ժամս աղօթքի , ժամս աղօթքի » :

143 Աստուծոյ ասէն որդէ . (7) :

- 1 Շընորհաց աթոռն փնտռող
 Զայն ամէն տեղ կը գըտնայ .
 Մենք երբոր ենք աղօթող ,
 Տէրն է միշտ մեզի ներկայ :
- 2 Թէ հարուստ ենք թէ աղքատ ,
 Թէ առողջ կամ թէ տըկար ,
 Երբ մեր ձայնն է անընդհատ ,
 Տէրն է միշտ մեզի ներկայ :
- 3 Երբ ճարերըս կը հատնին ,
 Ու ինձի հանգիստ չըկայ ,
 Եւ ուժերս կը լըքանին ,
 Տէրն է միշտ մեզի ներկայ :

4 Ով հողիս, փրկչիդ եկուր,
 Ինչ տաղնապ ուր վրատդ կու գայ.
 Ան սլարապ քեզ չը թողուր,
 Տէրն է միշտ մեզի ներկայ:

144 Ե. Էջ «Իրէ՛ճ առանձնանալ» (8, 6):

- 1 Ես կը սիրեմ առանձնանալ
 Հողերըս ձըգելով,
 Որ իրիկուան ժամերս անցնեմ
 Յնծմամբ աղօթելով:
- 2 Ես կը սիրեմ ալ առանձին
 Զղջման արցունք թափել.
 Իր խոստամունքներն յիշել, երբ Տէրն
 Միայն կրնայ լըսել:
- 3 Ես կը սիրեմ իմ միտքս բերել
 Ան ուր զիս կը հողայ.
 Հողերս, վիշտերս բոլորն ձըգել.
 Գըլթած Տէրոջըս վրայ:
- 4 Ես կը սիրեմ երկինք նայիլ
 Քաջ հաւատոյ աչքովս.
 Նեղուած հողիս կը զօրանայ
 Այն ցնծալի տեսքովս:

- 5 Եւ վշտալից կեանքիս վերջին
 Օրն երբ իմ վրաս հասնի ,
 Նըման ըլլայ այս մեղմ ժամուն ,
 Ու զիս երկինք տանի :

145 Տերահանան արջի . (8) :

- 1 Ով Եհովայ , Հայր երկնաւոր ,
 Թող քու անունըդ սուրբ ըլլայ .
 Դուն յաւիտեան ես թագաւոր ,
 Քու թագաւորութիւնըդ դայ :
- 2 Քու անարատ կամքդ ալ բարի
 Ամէն մարդիկ թող կատարեն ,
 Ինչպէս որ ան կը կատարուի
 Երկնից մէջ սուրբ հրեշտակներէն :
- 3 Մեր հացը տուր մեզ , կ'աղաչենք ,
 Շնորհէ մեզի դուն թողութիւն ,
 Ով Հայր , ինչպէս որ կը ներենք
 Մենք ալ մեր պարտականներուն :
- 4 Մեզ մի տանիր 'ի փորձութիւն ,
 Այլ ազատէ մեզ , Տէր , չարէն .
 Զի քուկդ է թագաւորութիւն ,
 Եւ զօրութիւն ու փառք . Ամէն :

146 Տէր-ն-հոն-առ-ն- (7) :

- 1 Ով մեր Հայրը երկնաւոր ,
 Քու անունըդ սուրբ ըլլայ .
 Տէրութիւնըդ փառաւոր
 Թող շուտով ամէն տեղ դայ :
- 2 Քու օրհնեալ կամօքդ ալ ինտոր
 Վեր երկինք կը կատարուի ,
 Այդպէս , ով Տէր Թագաւոր ,
 Հոս ալ միշտ 'ի դործ դըրուի :
- 3 Ով Տէր , տուր այսօր մեզի
 Մեր ամէն օրուան հացն ալ .
 Որ առողջութեամբ քեզի
 Ծառայենք , ով Տէր օրհնեալ :
- 4 Սիրելի Որդւոյդ համար ,
 Մի յիշեր մեր յանցանքներն .
 Մենք ալ միշտ կ'ուզենք մոռնալ
 Մեր եղբօրն ամէն պարտքերն :
- 5 Փորձութեան մեզ մի տանիր ,
 Ազատէ մեզ միշտ չարէն .
 Զի քուկդ է փառք և պատիւ ,
 Ով Տէր , յաւիտեանս . Ամէն :

147 Տէրոնական աղօթք • (6) :

- 1 Ո՛վ Հայր մեր երկնաւոր ,
 Անունըդ սուրբ ըլլայ •
 Դուն ես մեծ թագաւոր ,
 Արքայութիւնըդ դայ :
 Քու կամքըդ ալ բարի
 Մարդիկ թող կատարեն ,
 Ինչպէս կը կատարուի
 Երկնից հրեշտակներէն :
- 2 Ձեռքէդ հաց կը խնդրենք ,
 Շնորհէ մեզ թողութիւն •
 Մենք ալ պիտի ներենք
 Մեր պարտականներուն :
 Մեզ մի տար փորձութիւն ,
 Այլ ազատէ չարէն •
 Քուկդ է արքայութիւնն
 Եւ ոյժն ու փառքն • Ամէն :

148 Աստուածային (8, 7, 4) :

- 1 Մի թողուր զիս , ուլ Աստուածըս ,
 Թող քեզմէ չըմուրիս .
 Ուժովցուր , Տէր , իմ քալուածքըս ,
 Եթէ ոչ ես կ'ընկզմիս .
 Պահպանէ զիս ,
 Պաշտպանէ զիս ,
 Որ երջէք չըկորսուիս :
- 2 Աշխարհիս անթիւ հողերը
 կը վաւրնտեն զիս , Տէր , քեզմէ .
 Սատանան իր հրապոյրները
 իմ առջևս կը դնէ .
 Վարմերովը ,
 Նենդերովը
 Թող զիս չըմուրցունէ :
- 3 Ով Յիսուս , ջրուէ վախերըս ,
 Քու խոստմունքդ է հաստատուն .
 Դուն կրնաս ներել մեղքերըս ,
 Ինձ լըսել տուր ձայնդ սիրուն .
 Դուն ես լոյսըս ,
 Դուն ես յոյսըս ,
 Մի միայն Փրկիչըս դուն :

4 Ո՛հ , թէ ես սիրոյդ ուժովը ,
 Տէր Յիսուս , քեզի ձըդուիմ .
 Ինձ օգնէ Հոգւոյդ շնորհքովը ,
 Աշխարհէս հըրաժարիմ .
 Տէր , կանչէ զիս ,
 Ու քաշէ զիս ,
 Ես ալ պիտի հետեւիմ :

5 Իմ ըշտեմարանիս ներսը
 Դուռը ետեւէս գոցեմ .
 Ու սրտիս անկեղծ աղերսը
 Աստուծոյս մատուցանեմ .
 Արարիչըս
 Եւ Փրկիչըս
 Գաղտնի տեղը թող գտնեմ :

149 Պանդոկոն Սաղմոսքը . (8 , 7 , 4) :

- 1 Եհովա , առաջնորդէ զիս ,
 Զի պանդուխտ եմ ու կարօտ .
 Շատ տըկար եմ , զօրացուր զիս
 Ամենակարող ձեռքովդ .
 Դուն , երկնի Հաց ,
 Կերակրէ զիս որ ապրիմ :
- 2 Բաց , ով Տէր , մաքրող աղբիւրը ,
 Այն ջուրով բըժշկըւիմ .

Թող ամսկին , կրակին սիւնովը
 Մինչ վախճան առաջնորդուիմ .
 Դուն , Փրկիչ մեծ ,
 Ինձ եղիր ոյժ և վահան :

- 3 Երբ որ Յորդանան հասնիմ ես ,
 Յուրա մահուան երկիւղն վերցուր .
 Դուն որ մահը մեռուցեր ես ,
 Զիա երկինքը , Տէր , հասցուր .
 Փառք , պատիւ քեզ
 Միշտ պիտի մատուցանեմ :

150 Բ-Ի Հ-Է-Ը . (8 , 7) :

- 1 Քաղցրութեամբ առաջնորդէ մեզ ,
 Մինչ ելլենք ցաւոյ ճորէն .
 Թող շընորհքդ զօրացունէ մեզ ,
 Խափանէ ալ վախն ամէն .
 Զօրացուր մեզ
 Քու անհուն շնորհքովըդ , Տէր :
- 2 Թէպէտ և ցաւ ու շատ դառն վիշտ
 Մեզ ամէն կողմէն պատէ .
 Բայց Յիսուս մեզ կը փրկէ միշտ ,
 Մեղքն ու դժոխքը կը յաղթէ .
 Խօսքն հաստատ է ,
 Տէրն պիտի զայն կատարէ :

- 3 Երանի՛ թէ պաշտէի ես
 Քեզ , Փրկիչ իմ բարերար .
 Ըլլամ երկնային զօրաց պէս ,
 Որ գովեն քեզ անդադար ,
 Երջանիկ են .
 Ե՛րբ պիտի ես հոն հասնիմ :

151 վերստին ծնունդ . (8) :

- 1 Ո՛վ Տէր , ինձի նոր սիրտ շնորհէ ,
 Բողորովին քեզի դառնամ .
 Վերստին ծընունդ ինձ պարգևէ ,
 Հոգւով , սրտով փոխուած ըլլամ :
- 2 Ինձ կը սեպեմ մեծ օրհնութիւն ,
 Երբ Սուրբ Հոգւովդ զիս նորոգես .
 Ո՛վ Տէր , ի՛նչ մեծ երջանկութիւն ,
 Զայս նորոգում երբ ինձ շնորհես :
- 3 Յայնժամ հոգիս ազատ կ'ըլլայ
 Ամէն տեսակ վըտանգներէն .
 Մարմին , աշխարհ և Սատանայ
 Ինձ ոչ երբէք յաղթել կարեն :

- 4 Մեղքն Ադամայ նախաստեղծին
 Մեզ բարկութեան զաւակ ըրաւ .
 Հոգենորոգ շընորհք փրկչին
 Իր արիւնովն մեզ Դրախտ բացաւ :
- 5 Ով Տէր Յիսուս , դուն պարզեւէ
 Ինծի շընորհք նոր ծըննդեան .
 Հոգւով Սրբով մեղքերս սրբէ ,
 Որ սիրաս , հոգիա քուկինդ ըլլան :

152 ՈՎ ՍՈՒՐԲ ՀԱՅՐ • (8 , 7) :

- 1 Ով Սուրբ Հայր , ինձ ցուցուցեր ես ,
 Յոյսըս է միայն քեզմէ .
 Օրէ օր զիս անցուցեր ես
 Բազմաթիւ վըտանդներէ :
 Դուն , Տէր , մոլորած ատենըս
 Առաջնորդեցիր ինծի .
 Միշտ եղիր , Տէր , ապաւէնըս ,
 Թող ապրիմ միայն քեզի :
- 2 Խորամանկ թըշնամիներըս
 Միշտ կը յարձակին վըրաս .
 Ես գիտեմ բոլոր օրերըս
 Կռիւ պիտի շըլլայ պակաս :

Երկնաւոր շնորհաց աթուղ ,
 Հոն միայն պիտի դիմեմ ,
 Որ իմ նեղութեանըս օրը
 Զօրութիւն քեզմէ դտնեմ :

- 3 Հայրըս , քու պաշտպանութեանըդ
 Տուր որ միշտ ապաւինիմ ,
 Եւ քու առաջնորդութեանըդ
 Զաւկիր պէս թող հետեւիմ :
 Քու աչքովըդ , Տէր , ուղղէ զիս ,
 Փորձիչն քեզի դառնամ .
 Թւերուդ տակ , Տէր , պահէ զիս ,
 Միշտ քու քովըդ թող կենամ :

153 Զիս ալ , Տէր . (8 , 7 , 8 , 7 , 3 , 3 , 7) :

- 1 Տէր , այցելութեամբդ երկիրը
 Շուտ կ'ընես խիստ պըտղաբեր .
 Հիմա օրհնութեանդ անձրևը
 Թող կաթի իմ վրաս ալ , Տէր .
 Վրաս ալ , Տէր ,
 Վրաս ալ , Տէր ,
 Թող կաթի իմ վրաս ալ , Տէր :

- 2 Մի անցնիր ինծմէ , ուլ Հայրըս ,
 Կորսըւածըս դունն փնտռէ ,
 Չրիապէս ներէ մեղքերըս ,
 Գըլթութիւնդ ինձ պարգևէ ,
 Ինձ ալ , Տէր ,
 Ինձ ալ , Տէր ,
 Գըլթութիւնդ ինձ պարգևէ :
- 3 Մի անցնիր ինծմէ փրկիչըս ,
 Քեզ սիրեմ , քեզի յարիմ .
 Քաղցըր ձայնդ լըսէ ահանջըս ,
 Ձիս կանչէ , քեզ հետևիմ .
 Ձիս ալ , Տէր ,
 Ձիս ալ , Տէր ,
 Ձիս կանչէ , քեզ հետևիմ :
- 4 Ուրիշներ քու ձայնդ լըսեր են ,
 Եւ գըտեր են փրկութիւն ,
 Քու շընորհքըդ ընդուններ են .
 Տուր ինծի ալ օրհնութիւն .
 Ինձ ալ , Տէր ,
 Ինձ ալ , Տէր ,
 Տուր ինծի ալ օրհնութիւն :
- 5 Թէև քեզ շատ հեղ մոռցած եմ ,
 Սուրբ Հոգի , մ'անցնիր ինծմէ .

Քեզ մեղքովս վշտացուցած եմ,
 Ո՛հ, ներէ և զիս փրկէ .
 Ձիս ալ, Տէր,
 Ձիս ալ, Տէր,
 Ո՛հ, ներէ և զիս փրկէ :

154 Քու կեցիք . (8, 7) :

“Մեր քովը կեցիր, ինչու որ իրիկունը մօտ է, և օրը
 իջած է” . Ղու-ի . ԻԴ . 29 :

- 1 Ով փրկիչըս, օրն իջած է,
 Կ'աղաչեմք քեզ, քովս կեցիր .
 Թանձըր մութն արդէն կոխած է,
 Այս գիշեր իմ հիւրս եղիր :
 Երբ պակսին օգնականներըս,
 Դուն միայն ես օգնական .
 Երբ շատուոր են վրտանդներըս,
 Ո՛հ, եղիր ինձի պաշտպան :
- 2 Այս երկրիս պայծառութիւնը
 Շատ չանցած կը մըթննայ .
 Փառքն ու մեծվայելչութիւնը
 Շուտ աներևոյթ կ'ըլլայ .
 Բայց դուն ես յուսոյս արևը,
 Յաւիտեան դուն չես փոխուիր ,
 Ճառագայթներուդ պարզևը
 Շընորհէ ինձ, քովս կեցիր :

3 Ես շատ հեղ, Տէր, քեզ մոռցած եմ,
 Սակայն դուն զիս մի մոռնար .
 Շատ անգամ քեզ թողուցած եմ,
 Բայց ինձմէ մի հեռանար :
 Ո՛վ Յիսուս, հողւոյս փրկիչը,
 Հետս կենալ խոստմունք տրուիր .
 Երբոր զօրաւոր փորձիչը
 Յարձակի վրաս, քովս կեցիր :

4 Եւ վերջին թշնամիին վրայ
 Տուր որ յաղթանակ երգեմ .
 Իմ վրաս յարձակած ատենը՝
 «Ո՛ւր է քու խայթոցդ» ըսեմ :
 Մահուանէն որ ազատուիմ ես՝
 Դառն մահուան քեզ յանձնեցիր .
 Թող մահուան մէջ չընկղմիմ ես,
 Մինչև վերջը քովս կեցիր :

155 Ք- շնորհք Տէր . (8) :

1 Քու շնորհքըդ, Տէր, թող ինձ ներէ .
 Ո՛վ իր մեղքերն կը հասկընայ,
 Կամ իր յանցանքը միտք կ'առնէ .
 Ո՛վ քու առջիդ կ'արդարանայ :

- 2 Քու շնորհքըդ , Տէր , թող զլիա «բէնե»
 Քու բնութիւնդ ինծի ալ տուր ,
 Ճշմարտութեամբըդ զլիա մաքրէ ,
 Ինչպէս որ է Փրկիչս մաքուր ։
- 3 Քու շնորհքըդ , Տէր , թող ինձ օգնէ ,
 Քանզի ես ինքս եմ խիստ տրկար օ
 Թշնամիէն միշտ պաշտպանէ ,
 Երբէք ինծմէ մի հեռանար ։
- 4 Քու շնորհքըդ , Տէր , թող զլիա «սահնե»
 Ինձ պատուիրեր ես որ հսկեմ ,
 Դուն ալ քու բազուկովդ բռնէ ,
 Որ փորձութեան մէջ չըմտնեմ ։
- 5 Քու շնորհքըդ զլիա «ընդհանե»
 Զիս կերակրէ երկնից հացով .
 «Քու խորհրդովդ առաջնորդէ ,
 Ու վերջն ալ ընդունէ փառքով» ։

156 Պաշտպանութեան համար աղօթք . Սաղ . Գ .

(8) ։

- 1 Իմ թշնամիքըս , Տէր , շատցան ,
 Վրաս ելլողներն խիստ բազմացան .
 Վշտացս ատեն վրայովս կ'ըսեն ,
 «Ստոր չըկայ յոյս Սատուծմէն» ։

- 2 Սակայն , Տէր , փրկութեանս համար ,
 Նիզակ առիր , վահան , ասպար .
 Զայնուիս Աստուածըս կանչեցի ,
 Շուտ պատասխան անկէ առի :
- 3 Ես պառկեցայ ու քընացայ ,
 Խաղաղութեամբ ալ արթնցայ .
 Թող վրաս ելլեն ժողովուրդներ ,
 Իմ ապաւէնըս դուն ես , Տէր :
- 4 Քու Սիօնիդ , Տէր , երևցիր ,
 Ու մեր պաշտպանը դուն եղիր .
 Ամէն վարմէ մեզ ազատէ ,
 Քու ժողովուրդդ փրկէ , օրհնէ :

157 Օգնութեան համար աղօթ . Սաղ . Դ . (8) :

- 1 Տէր , հիմա օգնական եղիր ,
 Ինծի ողորմութիւն ըրէ .
 Արդէն զիս ընդարձակեցիր ,
 Նորէն աղօթքըս դուն լրսէ :
- 2 Բայց մինչև ե՞րբ , որդիք մարդկան ,
 Իմ փառքս ամօթ կը դարձընէք ,
 Կը փափաքիք ունայնութեան ,
 Եւ սըտութիւն կը փնտրուէք :

- 3 Գիտցէք որ Տէրը կ'որոշէ
 իրեն համար խոնարհ հոգին .
 Զանոնք իրեն համար կ'ընտրէ ,
 Որոնք անոր կը նըւիրուին :
- 4 Շատերը անձկութեամբ կ'ըսեն ,
 «Ո՛վ բարութիւն կը ցուցընէ” .
 Դուն , Տէր , եղիր մէզ ապաւէն ,
 Քու լոյսը թող մեր վրայ ծագէ :
- 5 Ողորմութիւնդ ինձ յայտնելով
 Ամէն վախէ զիս կը պահես .
 Քանզի միայն դուն ապահով
 Զիս , Տէր , կը բընակեցընես :

158 Արդար դատաստանի համար աղօթք . Սաղ . Ե . (8) :

- 1 Իմ ձայնըս , Տէր , կը վերցընեմ ,
 Առտուն քեզի կ'աղաղակեմ .
 Ով թագաւոր , սիրով լըսէ
 Եւ պատասխան շուտով շնորհէ :
- 2 Նայէ ինձի , ով Տէր Աստուած ,
 Արդարասէր և ողորմած ,
 Արդարութեամբ առաջնորդէ ,
 Եւ քու ճամբադ առջիս շտկէ :

- 3 Սմբարիշտներն միշտ կը խնդրեն
Որ զիս քեզմէ մոլորցընեն .
Անոնց ճամբուն մէջ թող չերթամ ,
Եւ փորձութեան մէջ թող չկնամ :
- 4 Զանոնք , Տէր , յանցաւոր հանէ ,
Քու երեսէդ միշտ հալածէ .
Քեզի դէմ ապրտամբեցան ,
Լեզուով նենդաւորներ եղան :
- 5 Քեզ յուսացող մարդիկ յնծան ,
Եւ յաւիտեան ուրախ ըլլան .
Քանզի զանոնք կը պաշտպանես ,
Արդարը դուն , Տէր , միշտ կ'օրհնես :

159 Ողորձոթեան համար աղօթք . Սաղ . 2 . (10) :

1

Ո՛վ Տէր , բարկութեամբ զիս մի խըրատեր ,
Ու սրտմըտութեամբ մի յանդիմաներ .
Տըկար է մարմինս , ինծի ողորմէ ,
Համայն կը դողամ , ո՛վ Տէր , բըժշկէ :

2

Մեռեալք չեն կրնար քեզ փառաւորել .
Մահունն մէջ չըկայ քեզ յիշատակել .
Քեզ ծառայելու , ո՛վ Տէր , թող ապրիմ ,
Ու միշտ քու անհուն սիրոյդ վրայ խօսիմ :

3 Ով չարագործներ, ինծով հեռացէք,
Դուք որ իրաւունքն կ'ատէք, կ'անարդէք,
Քանզի տրկար ձայնս Սատուած ընդունեց,
Իմ Տէրս ու Փրկիչս աղօթքըս լըսեց :

160 Ողորմութեան համար աղօթե՛ք • Սաղ. ԻԵ •
(8) :

- 1 Ով Տէր, քեզի զիս կը յանձնեմ,
Քու վրադ յոյսերըս կը դընեմ •
Տուր որ բընաւ ես չամըհնամ
Թշնամիէս, ու որս չըլլամ :
- 2 Ով Տէր, ճամբադ ինծի ցուցուր,
Ճշմարտութիւնդ ինձ սորվեցուր •
Քանզի դուն ես Տէր փրկութեան,
Մեր ապաւէնը յաւիտեան :
- 3 Գըթութիւններդ յիշէ, ով Տէր,
Ձի յաւիտեան ես բարեսէր,
Ողորմութեամբդ այց ընելով,
Եւ հին մեղքերս չըյիշելով :
- 4 Տէրն հեզերուն կ'առաջնորդէ,
Եւ իր ճամբան կը ցուցընէ •
Իրեն պատուէրն պահողներուն
Պիտի յայտնէ ճշմարտութիւնն •

5 Ո՛վ Տէր , ներէ անուանդ համար
 իմին մեղքերըս անհամար .
 Սուրբ Խօսքըդ ինձ կանոն ըրի ,
 Քու կամքդ արդար յայտնէ ինծի :

161 ՆԵՂՆԻՆԻ ԱՉՆՆԵՐԻ • Սաղ . ԽԳ . (8) :

- 1 Ո՛վ Տէր Աստուած , դուն զիս դատէ ,
 Եւ իրաւունքս արդարացուր .
 Նենդաւորէն զիս ազատէ ,
 Եւ պիղծ աչքէն ալ հեռացուր :
- 2 Տէր , ապաւէն ինծի դուն ես ,
 Ինչո՞ւ համար մոռցար , Տէր , զիս .
 Ինչո՞ւ տրտում քալեմ այսպէս ,
 Երբոր նեղէ զիս թշնամիս :
- 3 Ճշմարտութիւնդ և լոյսդ խրկէ ,
 Անոնք ինծի առաջնորդեն .
 Սուրբ լեռըդ , Տէր , դուն զիս հանէ ,
 Եւ թող քու փառքդ աչքերս տեսնեն :
- 4 Ինչո՞ւ տրտում ես , ով հողիս ,
 Ինչո՞ւ համար զիս կը տանջես .
 Տէրոջն յուսա , փառք տուր Փրկչիս ,
 Զի փրկութիւնս է իմ Փրկչէս :

162 Աստուծոյ օգնութեանը համար աղօլիտ . Սաղ . ԽԳ . (10) :

- 1 Ո՛վ Տէր , լըսեցինք մենք ականջովն իս
Գործքերդ , պատմեցին մեզ ի հայրերն իս .
Որ հին ատեններն կամօք դործեցիր ,
Անոնց աչքերուն առջին ցոյց տըւիր :
- 2 Դուն հեթանոսներն ձեռքովդ քըչեցիր ,
Անոնց տեղերնին քու ազգդ տնկեցիր .
Ոչ թէ սուրերով զայն ժառանգեցին ,
Հապա զօրաւոր թւովդ յաղթեցին :
- 3 Ո՛վ Տէր , դուն ինքդ ես ինծի թաղաւոր ,
Իմին փրկութեանս շուտով հրաման տուր .
Քեզմով թշնամին պիտի մենք յաղթենք ,
Եւ քու անունովդ ոտքի տակ առնենք :
- 4 Քանզի աղեղիս բընաւ չեմ յուսար ,
Եւ զիս ազատել իմ սուրս չըկընար .
Թշնամիներէն դուն մեզ կը փրկես ,
Ու մեզ ատողներն ուժովդ կը ցրուես :
- 5 Քայց , Տէր , ամէն օր մենք կը տանջըւինք ,
Եւ մորթըւելու ոչխար կը սեպուինք .
Քու ողորմութեամբդ ելիր մեզ օգնէ ,
Եւ սուրբ անունիդ համար մեզ փրկէ :

163 Մեղաց Բողոք-Դեան համար աղօթի . Սաղ . ՀԹ . (8 , 6) :

- 1 Ով Տէր Աստուած , հեթանոսներն
Տաճարըդ պղծեցին .
Քու սուրբ քաղքիդ բոլոր հիմերն
Աւերակներ ըրին :
- 2 Մինչև ե՞րբ , Տէր ողորմութեան ,
Միշտ բարկանաս պիտի .
Եւ քու նախանձդ կրակի նրման
Պիտի միշտ բորբոքի :
- 3 Տէր , հին մեղքերն մեր մի յիշեր ,
Շընորհքըդ շուտ հասնի .
Օգնէ մեզի , Փրկիչ և Տէր ,
Որ մեղքերնիս քաւուի :
- 4 Բայց մենք քուկին ընտրեալ ազգդ ենք ,
Հօտիդ ալ ոչխարներ .
Քու դովութիւնդ պիտի պատմենք
Ազգէ մինչև ազգ , Տէր :

164 Ողորմութեան համար աղօթի . Սաղ . 26 . (8) :

- 1 Տէր , հաւնեցար քուկին երկրիդ ,
 Իր դերութիւնը դարձուցիր .
 Դուն ներեցիր ժողովուրդիդ ,
 Յանցանքներնին դուն ծածկեցիր :
- 2 Դարձուր երեսդ քու հաճութեան ,
 Ու բարկութիւնդ թող դադարի .
 Չըբարկանաս մեզ յաւիտեան ,
 Սրտմտութիւնդ շատ չերկարի :
- 3 Դարձիր , Տէր , մեզ կենդանացուր ,
 Որ ժողովուրդդ քեզմով հրճուի .
 Ողորմութիւնդ մեզի ցուցուր ,
 Ու փրկութիւնդ շուտ տուր մեզի :
- 4 Պիտի լըսեմ Տէրով խօսքին ,
 Խաղաղութիւն նա կը խօսի .
 Մօտ է Փրկիչն երկիւղածին ,
 Որ զայն ընէ ուրախ , բարի :
- 5 Ողորմութիւն , ճշմարտութիւն
 Պատահեցան 'ի միասին .
 Արդարութիւն , խաղաղութիւն
 Իրար դըտան , համբուրեցին :

165 Մեղեք զանոթ զանոթ զանոթ . Սաղ . ՃԺԹ . (7)

- 1 Տէր , սրտանց քեզ կանչեցի ,
Պատասխան շնորհէ ինձի ,
Որ օրէնքըդ միշտ պահեմ ,
Զի ճամբադ ես ընտրեցի :
- 2 Կը կանչեմ քեզ , իս փրկէ ,
Մեղքերէս զիս ազատէ .
Ես Սուրբ Խօսքըդ սիրեցի ,
Մի ձըգեր զիս երեսէ :
- 3 Ես կանուխ քեզ կանչեցի ,
Քու խօսքիդ , Տէր , յոյս դըրի .
Գիշերանց ես արթնցայ ,
Որ խորհիմ խօսքդ սիրալի :
- 4 Հետևողքն չարութեան ,
Որ սուրբ օրէնքներդ մոռցան ,
Մօտեցան որ զիս խաբեն .
Տէր , եղիբ ինձ պահապան :

166 Աստուծոյ Լուսն-Լինն Խնորել Խոնարհու Լեամբ . Սաղ . ՃԼ . (8) :

- 1 Ով բարերար Փրկիչ Աստուած ,
Քեզ կանչեցի խորունկ տեղաց .
Տէր , աղօթքիս ձայնին լըսէ ,
Եւ թողալիս մըտիկ ըրէ :
- 2 Ով Տէր Փրկիչ , թէ որ յիշես
Մեր չարութիւնն , ու մեղք սեպես ,
Տէր , ո՞վ կրնայ առջիդ կենալ ,
Եւ փրկութիւն քեզմէ յուսալ :
- 3 Բայց թողութիւն քովդ է լեցուն ,
Պատրաստըւած ամէն մարդուն ,
Որպէս զի ան քեզմէ վախնայ ,
Ամէն բարիք քեզմէ յուսայ :
- 4 Ես միշտ Տէրոջըս կը սպասեմ ,
Իմ սիրտս անոր կը նըւիրեմ .
Անոր խօսքին միշտ կը յուսամ ,
Զի ես անով կեանք կ'ունենամ :
- 5 Ամէն մարդ թող Տէրոջն յուսայ ,
Զի փրկութիւն անկէ կու գայ .
Ան զխարայէլն պիտի փրկէ
Ամէն մեղքէ ու տանջանքէ :

167 Մեղաց Բողոքեան և Էրկոթեան համար աշնէր . Սաղ . ՃիսԳ . (8) :

- 1 Ո՛վ Տէր , լըսէ ի՛նձ աղօթքիս ,
Եւ դիր ահանջ աղաչանքիս .
Եւ ծառայիդ տուր պատասխան ,
Ո՛վ Տէր Աստուած արդարութեան :
- 2 Քու ծառայիդ հետ մի մտներ
Դատաստանի , Տէր մարդասէր .
Քանզի բընաւ մարդ մ'ալ չըկայ ,
Որ քու առջիդ արդարանայ :
- 3 Իմ ձեռքս քեզի կ'երկնցընեմ ,
Ձի քեզ միայն իմ Տէրս դիտեմ .
Չորցած երկրի պէս՝ անձս քեզի
Մեծ փափաքով կը ծարաւի :
- 4 Ինծի սուրբ կամքըդ սորվեցուր ,
Կատարելու շընորհքդ ալ տուր .
Ձի անձս քեզի եմ վերցուցած ,
Դուն ես ինծի մինակ Աստուած :
- 5 Բարի Հողիդ առաջնորդէ ,
Ուղիղ երկիրդ զիս մտցունէ .
Ձիս ապրեցուր անուանդ համար ,
Չարէն փրկէ , Աստուած արդար :

168 Երանելի օր • (8 • 8 տող) :

1 Երանելի այն օրն է , Տէր ,
Որ ես բաժինըս քեզ ըրի •
Ուրախ հողիս անդուլ իր սէրն
Ու ցնծութիւն պատմէ պիտի :
Երանելի այն օրն ըսուի ,
Որ Տէրն մեղքերս ներեց ինձի •
“Արթուն կեցիր , աղօթք ըրէ ,
Ու միշտ ցնծա” , ինձի կ'ըսէ :

2 Իմ սիրտս բոլոր անոր կու տամ
Որ իմ սիրոյս է արժանի •
Իր սեղանին երբ մօտենամ ,
Ուրախ երգով իր տունն լեցուի :
Երանելի այն օրն ըսուի , Լայն :

3 Ահա Փրկչիս ես ուխտ ըրի ,
Տէրոջն եմ ես ու իմն է ան •
Չիս ան կանչեց , անոր դացի
Ես ճանչնալով ձայնն պատուական :
Երանելի այն օրն ըսուի , Լայն :

4 Փրկչիդ վերայ յոյս դընելով ,
 Խուովեալ հողիս , հանդիստ ըլլաս ,
 Ամէն բարիք վայլես իրմով
 Աւ իր քովէն չըհեռանաս :
 Երանելի այն օրն ըսուի , Լայն :

5 Իմ ուխտըս , ո՛վ Փրկիչ Յիսուս ,
 Ամէն օր նորոգեմ պիտի .
 Ու երբ հասնիմ մահուան ժամուս ,
 Երգեմ պիտի « Ուխտ սիրելի » :
 Երանելի այն օրն ըսուի , Լայն :

169 « Եկե՛ք Ի՞նչե՛ք » . (8 , 6) :

1 Ես կը լըսեմ ձայնդ , ով Յիսուս ,
 Անոր համար կու դամ .
 Սիրուն քու ձայնդ ականջս լեցուց .
 Ի՞նչպէս ես չարտորամ :
 Կու դամ , կու դամ , դիս մի մերժեր ,
 Յոյժ կ'աղաչեմ , ով Տէր .
 Արժանացուր յողնած հողիս
 Սուրբ հանգըստեան երկնից :

- 2 Հողիս կեանքէս է ճանճրացած
 Այս չոր ձորին եզերքն .
 Սիրտս ներսի դիս է խրուոված
 Մեղքիս ճնշող բեռէն :
 Կու գամ, կու գամ, Լայն :
- 3 Ունայն տեղ մինչ ցարդ ջանք ըրի
 Փրկել զիս իմ ուժովս .
 Յանցանքս սրբել ես չըկրցի
 Բարեգործութիւնովս :
 Կու գամ, կու գամ, Լայն :
- 4 Քու սուրբ արիւնըդ թափուեցաւ
 Խաչափայտին վըրայ .
 Ամէն մեղքերս հոն քաւուեցաւ
 Արդար գլխուդ վըրայ :
 Կու գամ, կու գամ, Լայն :
- 5 Ո՛րչափ սուրբեր արդէն եկան
 Քու տեսութիւնդ վայլել .
 Դուն ես ճամբան որով կրցան
 Այն սուրբ հանդիստն մտնել :
 Կու գամ, կու գամ, Լայն :

170 Կը հասարակ. (8, 6) :

- 1 Ես յաւիտեան հանդիստ կ'ըլլամ
Միայն քու քովդ, Յիսուս.
Քու վէրքերէդ կեանք կը ստանամ,
Փրկիչ, դուն ես ինձ յոյս :
Կը հաւատամ, կը հաւատամ
Որ Յիսուսի մահուամբ,
Եւ իր արեամբ, անդին արեամբ,
Մեղքէն ազատ կ'ըլլամ :
- 2 Խաչեալ Փրկիչս և իմ Աստուածս,
Մեղքի բացուած աղբիւր,
Քու արիւնէդ սրսկէ վըրաս,
Պահէ զիս միշտ մաքուր :
Կը հաւատամ, Եպան :
- 3 Լըւա զիս, Տէր, և քուկդ ըրէ,
Լըւա, եղիբ դուն իմս.
Ոչ թէ միայն ոտքերս մաքրէ,
Զեռքերըս, գլուխս և սիրտս :
Կը հաւատամ, Եպան :
- 4 Քու արիւնովդ իմ սիրտս սրբէ,
Մինչ քեզ տեսնեմ աչքով.
Փառաց յուսով աչքերս դոցէ,
Հողիս լեցուի սիրով :
Կը հաւատամ, Եպան :

171 Խաչը գանձիւ (8 , 6) :

- 1 Միթէ Յիսուս լոկ խաչն տանի ,
Եւ մարդս ազա՞տ ըլլայ .
Ո՛չ . խաչ մը կայ ամէն մէկուն ,
Ինծի ալ խաչ մը կայ :
- 2 Ի՞նչ երջանիկ վերի սուրբերն ,
Որք հոս կը տրտմէին .
Բայց հոն անխառն սէր կը վայլեն ,
Ցնծում ալ լիովին :
- 3 Օրհնեալ է խաչս , պիտի տանիմ ,
Մինչև որ մահն ինձ գայ .
Ու վեր ելլեմ , պըսակս առնեմ ,
Ինծի պըսակ մը կայ :

172 Անյո՞ւրացո՞ւնի՞ն . (8) :

- 1 Յիսուս , աշխարհքը եմ ճըգած ,
Ու խաչս առի որ առ քեզ գամ .
Մերկ և ազքատ ու անարդուած ,
Հերիք է ինձ որ քեզ ճանչնամ :

- 2 Այս աշխարհիս սուտ բարիքներ ,
 Որոնց վըրայ կը յուսայի ,
 Ինձի եղան պարապ բաներ ,
 Ու քեզ միայն ես իմս ըրի :
- 3 Թող աս աշխարհն իս անարդէ ,
 Նոյնպէս ալ մեր Տէրոջն ըրաւ .
 Մարդոց դատումն իս կը մերժէ ,
 Բայց դուն զիս մի մերժեր բընաւ :
- 4 Բարեկամներս թող զիս ձըգեն ,
 Բայց , Տէր , դուն ես հաւատարիմ .
 Երբոր իմ յոյսս քու վրադ դընեմ ,
 Շատ ցնծումով ես կը լեցուիմ :
- 5 Թող մարդոցմէ միշտ տանջըւիմ ,
 Բայց իմ հոգիս քեզ կը յանձնեմ
 Քանի որ հոս կը փորձըւիմ ,
 Փրկչիս սէրն ես կը վայելեմ :
- 6 Կարող չէ վիշտ ինձ վընասել ,
 Երբոր Քրիստոս իմ հետըս է .
 Ցաւ , նեղութիւն , տանջանք քաշել՝
 Ինձ բերկրութիւն , ցնծում ալ է :

7 Ով իմ հոգիս , ուրախ եղիր ,
 Առջևդ փառք կայ անդադար ,
 վըսեմ կոչումըդ լաւ ճանչցիր ,
 Մարմնոյ վիշտէն ալ մի վախնար :

173 Խաչին շինուող . (8 , 6) :

1 Եթէ գինուոր եմ ես խաչին ,
 խաչէն ալ ամհնամ .
 Թէ հետևող եմ Գառնուկին ,
 Զինք դաւանիլ վախնամ :

2 Ես ծաղկազարդ մահճի մը վրայ
 Երկինք կրնամ տարուիլ .
 Արդեօք ինձ թշնամի չըկայ ,
 Ինձ հարկ չըկայ կռուիլ :

3 Արեան չափ կռուելով առին
 Շատերը մրցանակն .
 Ծառայելով ես մարմինին
 կ'առնեմ փառաց պըսակն :

4 Ո՛չ . եթէ ես կ'ուզեմ յաղթել ,
 Պէտք է պատերազմիմ .
 Հաճէ , Տէր , զիս շնորհքովդ ընել
 Քաջ և հաւատարիմ :

5 Այս փառաւոր մարտին մէջ, Տէր,
 Սուրբերդ պիտի յաղթեն.
 Հեռուանց ալ հաւատոյ աշքերն
 Պըսակը կը տեսնեն :

174 Պանդեոն-Նեան երգ • (7, 6) :

- 1 Եւ, հողիս, թևերդ լայն բաց,
 վերի կոչումդ յիշէ.
 Այս կեանքիս բաներն ձըդած՝
 Դէպ 'ի երկինք թռչէ :
 Արեգակն, լուսինն, աստղերն,
 Եւ աշխարհս ալ շուտ կ'անցնին
 Եւ, հողիս, ասկէ վերերն,
 'ի կողմն Տէր Յիսուսին :
- 2 Գետն 'ի ծովը կը վազէ
 Բընաւ կանկ չառնելով .
 Ծառն դէպ 'ի երկինք կ'ելլէ
 Ըստեղծողին կամքով :
 Եւ այսպէս հողւով ծընածն
 վեր կ'ելլէ արտորալով,
 Որ տեսնէ փառաց Աստուածն,
 Հանգչի հոն ապահով :

3 Ինչ է փառք, հարըստութիւն,
 Երբ վեր աչքերս տնկեմ.
 Փուճ աշխարհ, մարմին, արիւն,
 Հընարքներնին կ'ատեմ:
 Պանդուխտներ տուն չեն շիներ,
 Օտար մարդն առտուն կ'երթայ.
 Երբ անցնի լոկ մէկ գիշեր,
 Կ'ուզէ ելլել ճամբայ:

4 Պանդուխտներ, ալ մի տրտմիք,
 Առէք ձեր յաղթանակն.
 Շուտ ձեր Տէրը, սիրելիք,
 Ձեզի կուտայ պըսակն:
 Քիչ ատեն համբերելով՝
 Վայելքնիդ ալ կը տրուի.
 Յաւերնիդ հոս թողելով՝
 Հանդչիք ծոցն Յիսուսի:

175 Քրիստոնէայ պանդուխտը . (7, 6) :

1 Պանդուխտն իր հայրենեացը
 Հեռուէն շատ կը ցանկայ.
 Հոն է հողւոյն փափաքը,
 Հանգիստ հոն կը յուսայ:

- 2 Սիրելիներն հեռու են ,
 Հեռու բարեկամներն .
 Ո՛հ , ի՞նչպէս ցանկալի են
 Անոնց յիշատակներն :
- 3 Այլ քրիստոնեայ պանդուխտը
 Աչքերն երկինք կ'ուղղէ ,
 Որ հոն սիրելիները
 Նորէն գիմաւորէ :
- 4 Եւ ուշ կամ շուտ իրեն վրան
 Երբ մահը յարձակի ,
 Կ'ուղէ ճրգել ամէն բան ,
 Որ վեր երկինք թռչի :
- 5 Ո՛հ , ի՞նչ ուրախութիւն մեծ ,
 Երբ սիրելիք տեսնէ .
 Անոնց հետ հոն երկնից մէջ
 ՂԱստուած փառաբանէ :

176 Քրիստոնէան Ռեւու աշխարհի • (8) :

- 1 Եթէ աշխարհ է գեղեցիկ ,
 Ու իր փառքերն են շողշողուն ,
 Հարըստութիւն , պատիւ , բարիք
 Կը գըրաւեն ըզսիրտ մարդուն ,

- 2 Զըւարճութիւնք հեշտացուցիչ ,
 Էն ցանկալի հաճոյք մարմնոյն ,
 Անարդ սէր իբր դոհացուցիչ
 Թէ կը խաբեն ըզսիրտ մարդոյն ,
- 3 Թող ինձ ըլլայ մեռած ամէն .
 Ոչ գեղեցիկ , ոչ շողշողուն
 Բընաւ ինձի չընեղորձեն ,
 Զի են խաբող ունայնութիւն :
- 4 Աշխարհ ինձի է խաչ ելած ,
 Ես աշխարհի բոլորովին .
 Ով Սուրբ Հոգի , օգնէ բարձանց ,
 Կենդանացու զիս երկինքին :
- 5 Իմ փառքս ըլլայ խաչն Յիսուսի ,
 Զըւարճութիւնս՝ անոր խօսքերն .
 Թող ես ապրիմ միշտ կենդանի
 Կատարելու իր պատուէրներն :

177 Յնձոմնով վաղէն+ . (10 յատուկ) :

1

Մենք ցնծումով , ցնծումով միշտ վաղէնք ,
 Մինչ Սուրբերուն փառաւոր տեղն ելլենք .
 Մեր Յիսուսին ճայնն լըսենք ու ցնծանք ,
 Եւ ցնծումով , ցնծումով քովն երթանք :
 Կարճ է ճամբան , շուտ պիտի վերջանայ ,
 Միշտ տուններնիս Աստուծոյ քովն ըլլայ .

Տէր Յիսուսով փրկութեան , ո՛հ , հասնինք ,
 Հոն ցնծումով , ցնծումով միշտ հանդչինք :

2

Մեզմէ առաջ դացողներ շատ եղան ,
 Եւ մեզ ալ հոն տեսնելու կը ցանկան .
 Ու Գառնուկին քաղցրաձայն երգ երգենք ,
 Միշտ ցնծումով , ցնծումով զայն օրհնենք ,
 Քաղցր ձայներ ականջնիս կը հասնին ,
 Օրհնեալներուն քրնարներն կը լսուին .
 Սուրբ հրեշտակաց երգերնին կը լըսենք ,
 Հոն ցնծումով , ցնծումով կը վազենք :

3

Մահը շուտով թէև մեզ հոն տանի ,
 Չըլախնալով վեր ելլենք Յիսուսի .
 Գերեզմանին մէջ Անոր պէս պառկինք ,
 Եւ ցնծումով Անոր հետը ննջենք :
 Սուրբ յարութեանն առաւօտըն ելլենք ,
 Մահը յաղթած խափանած ալ տեսնենք .
 Սուրբ երկնային քաղաքին մէջ շրջինք ,
 Հոն ցնծումով , ցնծումով բընակինք :

178 Քրիստոնէի Դո-բե-նը . (8) :

- 1 Որչափ օրհնած է այն կապանք ,
 Որ մենք անով կը միանանք .
 Այս շնորհք տուաւ մեզի Յիսուս ,
 Աղբիւր շնորհաց , Փրկիչն հողւոյս :

- 2 Մեր յոյսն ու վախն է հաւասար ,
 Նաև խնդում զըւարթարար .
 Մեր մտմբառք , հոգ , նեղութիւն
 Զունին բընաւ տարբերութիւն :
- 3 Մենք մեր եղբօր բոլոր վշտաց
 Ենք մասնակից ջըրով աչաց .
 Թէ եղբայրնիս մեզմէ զատուի ,
 Մեզ ցաւ կու տայ անտանելի :
- 4 Բայց հաստատուն մեծ յոյս ունինք
 Զայն տեսնելու վերին երկինք .
 Այս աներկբայ յոյս անարատ
 Կ'ընէ մեզ հոս քաջ և ազատ :
- 5 Եւ միացած ուրախ սրտով
 Կը սպասենք այն օրուան սիրով .
 Մեզք , վիշտ և հոգ յայնժամ փախչի ,
 Եւ սէր մաքուր 'ի մեզ հանգչի :

179 Ճամբաս դուն , Տէր , ընտրէ . (6) :

- 1 Ճամբաս դուն , Տէր , ընտրէ ,
 Թող ինձ խաւար ըլլայ .
 Զեռքովդ առաջնորդէ ,
 Ընտրէ ինձի ճամբայ :
 Ես չեմ համարձակիր
 Բընաւ վիճակս ընտրել .

Գուն կառավարս եղիր ,
Ուղղիչս շխտակ քալել :

- 2 Խնդրած արքայութիւնս
Է քուկըդ , ով Տէր իմ .
Քուկդ ալ ըլլայ շաւիղս ,
Այլուտ կը մոլորիմ :
Գուն որոշէ վիճակս
Անհուն իմաստութեամբ .
Առ և յեցուր բաժակս
Վիշտով կամ վայելմամբ :

- 3 Ընտրէ բարեկամներս ,
Ախտերս , առողջութիւնս ,
Փորձանքըս ու հողերս ,
Եւ կամ հանգստութիւնս :
Ինձի խոստմունք տըւիր
Որ ազատես չարէն .
Տէր , առաջնորդս եղիր ,
Իմաստութիւնս . ամէն :

180 Քրիստոս Ներ հասարակութեանը . (6, 6, 4,
6, 6, 6, 4) :

- 1 Հաւատքս քեզ կը նայի ,
Ով Գառն Գողգոթայի .
Փրկիչ , իմին
Չայնիս մըտիկ ըրէ .

Իմ մեղքըս , Տէր , քաւէ .
 Ըլլամ ես յայսմհետէ
 Միայն քուկին :

2 Թող քու շընորհքդ անհուն
 Ընէ սիրտս հաստատուն ,
 Նախանձս վառէ :
 Մահուամբդ իս կը փրկես .
 Ուստի բոցի մը պէս
 Իմ սէրըս սաստկապէս
 Վառիլ կ'արժէ :

3 Աս մուժ ճամբուս վախճանն
 Մինչև աչքերս տեսնան ,
 Յառաջ տար զիս :
 Խաւարըս լոյս ըրէ ,
 Աչքիս արցունքն սրբէ .
 Եւ մի թողուր քեզմէ
 Զատուի հոգիս :

4 Կեանքիս երազն անցած՝
 Երբ մահն իմին վըրաս
 Կը յարձակի ,
 Օրհնեալ Փրկիչ , սիրովդ
 Ամէն վախ յաղթելով
 Վեր առ զիս ապահով ,
 Որ անձս ապրի :

181 Ինչպէս որ եմ. (8) :

- 1 Ինչպէս որ եմ մեղքով լեցուած ,
 Խեղճ մեղաւոր ու կորսուած ,
 Աչքերս դէպ 'ի Փրկիչդ ուղղած ,
 Գառն Աստուծոյ , քեզի կու դամ :
- 2 Ինչպէս որ եմ , չսպասելով
 Հոգիս սրբել պարապ յուսով ,
 Քու արիւնիդ լոկ նայելով ,
 Գառն Աստուծոյ , քեզի կու դամ :
- 3 Ինչպէս որ եմ , շատ տանջուած ,
 Ու բազմաթիւ մեղքով պատած ,
 Ասդիս անդին միշտ տատանած ,
 Գառն Աստուծոյ , քեզի կու դամ :
- 4 Ինչպէս որ եմ՝ դուն , Տէր , զիտես ,
 Իմ մեծ մեղքերըս կը ջնջես ,
 Ազտոտ հոգիս զուտ կը սրբես .
 Գառն Աստուծոյ , քեզի կու դամ :
- 5 Ինչպէս որ եմ՝ այնպէս կու դամ .
 Շնորհէ որ միշտ քու քովդ ըլլամ
 Ու յաւիտեան երեսդ տեսնամ .
 Գառն Աստուծոյ , քեզի կու դամ :

182 Մատթ 22:5. (6, 5) :

1 Ո՛հ թէ սուրբ ըլլամ ես,
 Միշտ ալ աւելի
 Սիրտս, հողիս և միտքըս
 Քեզ հընազանդի.
 Օրէ օր պարտքերըս
 Աւելի սիրով
 Կատարեմ, ով Տէրըս,
 Քու Հողւոյդ շնորհքով :

2 Քու Հողիդ, ով Հայրըս,
 Անդադար ինձ տուր,
 Որ մաքուր ընէ զիս,
 Աւելի մաքուր.
 Եւ իմ հառաչանքըս
 Դէպ 'ի վեր երթայ,
 Միշտ իմ պաղատանքըս
 Աստուծոյս ըլլայ :

3 Երբ շատնան վիշտերըս
 Վախս ու տարակոյսս,
 Ո՛հ, յանձնեմ հողերըս
 Միշտ իմ Աստուծոյս.
 Ինք բոլոր խաւարըս
 Լոյս պիտի ընէ,
 Ինչ որ հիմա մութ է
 Պիտի բացատրէ :

4 Բարձրը և ալ բարձրը
 Գիշերէս թռչիմ,
 Մինչ երկնից սուրբ լոյսը
 Բերկրութեամբ հասնիմ.
 Թող ըլլայ մաղթանքըս
 Քեզ ընդունելի.
 Այս է, Տէր, իմ ջանքըս.
 Դունն օգնէ ինձի :

183 Աստուածոյ հետ հաղորդութիւն. (6, 6,
 8, 6) :

- 1 Տէր իմ, քեզ կը սիրեմ,
 Միայն քեզմով կ'ապրիմ.
 Թէ որ Աստուածըս ես մերժեմ,
 Շուտով կը կորսըւիմ :
- 2 Քու սէրդ այնչափ քաղցր է
 Որ բանտն պալատ կ'ըլլայ.
 Ուր ես ներկայ՝ դրախտն հոն է,
 Ուր չես՝ դըժոխք կ'ըլլայ :
- 3 Քրնար թող անդադար
 Անթիւ հրեշտակք զարնեն.
 Երկինք հոն չըկրնար ըլլալ,
 Թէ որ քեզ չըտեսնեն :

4 Եւ տիեզերքն ամէն
 Ինծի իրաւցընէ
 Հաճոյք մը տալ կարող ոչ են ,
 Թէ հեռանաս ինծմէ :

5 Սիրոյ ծովն , անսահման
 Ուրախութեամբ լեցուն ,
 Դու ես , Տէր , և սրտիս շրջան ,
 Հողւոյս ցնծմանց կեդրոնն :

184 ԲՅԵՐԻՐՈՒԹԻԱՆ ԱՄ ՊԱՆՉԿԱՏՈՒՆԱՍ . (8) :

1 Ո՛վ մեծ Աստուած , շնորհէ հայցուածքս ,
 Խաղաղութիւնս , լի՛յոյսս և կեանքս .
 Երբ օրհնութիւն տալ ինձ հաճիս ,
 Յայնժամ փառօք ճոխ երեւիս :

2 Բարի , արդար , մեծ , իմաստուն ,
 Աստուած և Հայրս միայն ես դուն .
 Քուկդ եմ եղած սուրբ կապերով ,
 Որդիդ զիս դնեց իր արիւնով :

3 Սրտով , աչքով , բաղկատարած
 Քեզ կը նայիմ յոյժ փափաքած .
 Ինչպէս ճամբորդք անջուր տեղուանք
 Զով ջրբերու ունին տենջանք :

- 4 Ո՛հ , շատ կանուխ դալ ես կ'ուզեմ
Սրբոցդ հետ որ երեսդ խնդրեմ ,
Քու փառքըդ հոն յաճախ տեսի ,
Եւ զօրաւոր շնորհքդ ըզդացի :
- 5 Մինչ շունչ կ'առնում , աչքերըս վեր
Փառք տալ պարտիմ կամ աղօթել .
Ասով իմ սիրտս ուրախ կ'ըլլայ ,
Այսպէս իմ կեանքս թող վերջանայ :

185 Հան-իւն աւ ընկերական պաշտամունս . (8) :

- 1 Ի՛նչ հաճելի թողուլ աշխարհ ,
Խնդրել Տէրօջ ներկայութիւն .
Յոյց սէրդ հօտիդ , Տէր բարերար ,
Հաւատարիմ խոստմանդ հանդոյն :
- 2 Արդ կը ձրդենք դործք , ըզբաղանք ,
Որ խօսակից քու հետդ ըլլանք .
Տէր , մեզ նայէ ոտիցըդ տակ ,
Այս տեղս ըլլայ մեզ դուռն 'ի կեանք :
- 3 “ Ընտրեալն 'ի բիւրս ” արդ կ'երեւի ,
Կրնանք տեսնել զԱյն հաւատքով .
Ո՛հ , ձայնդ ըրէ մեզ լըսելի ,
Հոս լից ներկայութեանդ փառքով :

186 Մէր Քրիստոսի • (8) :

- 1 Ունայնութիւն ունայնութեանց ,
Բոլոր աշխարհ է վուճ և սուտ .
Միայն Փրկիչ Քրիստոս Աստուած
Եւ սէր նորին է ինձ օգուտ :
- 2 Պէտք է որ ես զայն շատ սիրեմ ,
Զի նա այնչափ նախ զիս սիրեց .
Պէտք է իրեն սիրտս նըւիրեմ ,
Քանզի նա զինքն ինձի շնորհեց :
- 3 Հոգւոյս համար նա զինք զոհեց ,
Որպէս զի ես արդարանամ .
Մեղքիս համար մահ ճաշակեց ,
Որպէս զի ես անմահանամ :
- 4 Արդեօք ո՞ր մարդ՝ կամ ո՞ր հրեշտակ ,
Փրկչիս նրման ինձ սէր ցուցուց .
Կըրեց վասն իմ վիշտ դըժնդակ ,
Եւ վրկութեան ինձ յոյս թողուց :
- 5 Տէր , քու սիրովդ իմ սիրտս վառէ ,
Որ քեզ միայն սրտանց սիրեմ .
Եղբարցս համար յիս սէր ազդէ ,
Որ սէրս սիրոյդ նրմանցունեմ :

187 Սէր ~-~ Քրիստոս . (8) :

- 1 Ո՛ւ Տէր Յիսուս , քեզ կը սիրեմ ,
Քանզի քու սէրդ շատ քաղցրը է .
Զայն բարձրաձայն պիտի երգեմ ,
Բոլոր աշխարհըս թող լըսէ :
- 2 Այո , քաղցր ես հոգւոյս իմին ,
Յոյս , վրկութիւն , կեանք ես ինծի .
Անարգ բան են դո՛հարք անդին ,
Ոսկին ալ ինձ չնչին փոշի :
- 3 Քու մեծ շընորհքդ սրտիս վրայ , Տէր ,
Միշտ կեանք տըւող հոտ կը բուրէ .
Կը բըժշկէ ամէն ցաւեր ,
Բոլոր իմ անձս կը նորոգէ :
- 4 Ոչ նեղութիւնք , ոչ հալածանք
Զիս քու սէրէդ կրնան գատել .
Ու ոչ ալ մահ և ոչ ալ կեանք
Զիս քու անձէդ կրնան բաժնել :
- 5 Պիտի պատմեմ սէրն մեծ փրկչիս ,
Մինչև վերջին շունչս ալ հատնի .
Յայնժամ , օրհնեալ փրկիչ , հոգիս
Քու սուրբ գրկիդ մէջ թող հանգչի :

188 Անյն-ահն-Բի-ն . Սաղ . ԻԶ . (8 , 6) :

1 Ո՛վ Տէր , ամէն սրտերն քննող ,
 Իմ սիրտըս դունն փորձէ .
 Ճշմարտութեանդ եմ հետևող ,
 Ինձի միշտ ողորմէ :

2 Ունայն մարդոց հետ չընատայ ,
 Կեղծ մարդը ատեցի .
 Չար ժողովքէն ետ կայնեցայ ,
 Անկրօնն ալ մերժեցի :

3 Ո՛վ Տէր , քու սուներդ սիրեցի ,
 Տաճարը քու փառքիդ .
 Ճշմարտութիւնըդ ընտրեցի ,
 Կեցայ ես միշտ առջիդ :

4 Շիտակ ճամբու մէջ կը կենամ ,
 Իմ ոտքս չըսասանի .
 Ժողովներու մէջ յարաժամ
 Տէրն ես գովեմ պիտի :

189 Գանգար հոգեոր Բնոր-Բնան համար . (8 , 6) :

1 Ո՛վ իմ հողիս , ի՞նչ կը թմրիս ,
 Ելիր մահուան քունէն .
 Ասկէ մեծ գործ բընաւ չունիս ,
 Քու փրկութեանդ գործէն :

- 2 Տկար մըջիւնք խիտո կ'աշխատին
 Փոքրիկ հատի համար .
 Կը լեցունեն համբարներնին
 Զանքով մը անդադար :
- 3 Մենք որ ունինք ժառանգելու
 Երկինք մը անլախճան ,
 Ի՞նչպէս անփոյթ ենք առնելու
 Պըսակն յաւերժական :
- 4 Մեզի համար աշխարհն եղաւ ,
 Արև լուսին , աստղեր .
 Կ'իջնեն վար երկինքէն անբաւ
 Սուրբ հրեշտակաց խումբեր :
- 5 Աստուածորդին իջաւ վերէն ,
 Մեզի բարիք ըրաւ .
 Ո՛րչափ անհոգ ենք ան թագին
 Զոր իր արեամբն առաւ :
- 6 Այսպէս թմրած մընա՞նք , ուլ Տէր ,
 Մեր գործը չըգործե՞նք .
 Ո՛վ Սուրբ Հոգի , առ մեզ իջիր ,
 Որ մենք նոր կեանք առնենք :
- 7 Յայնժամ երկինք պիտի ելլենք՝
 Առնել փառաց պըսակն .
 Սերոյ թևով պիտի թռչինք՝
 Առնել սուրբ մրցանակն :

190

Ո՞չ Բէ անցեալ արեւններուն պէս ըլլայի՝
(8, 6) :

- 1 Քաղցր էր այն ժամն երբ նախ տեսայ
Քաւիչ արիւնն փրկչիս ,
Որով մեղքէս մաքրըւեցայ ,
Գլտաւ զՍատուած հոգիս :
- 2 Առտուն արևն երբ կը ծագէր ,
Ղեզուս իմ Տէրս կ'օրհնէր .
Մուժն իրիկուան երբ կը կոխէր ,
Իր սէրն՝ բոլոր երգս էր :
- 3 Հոգիս ըղձիւ կ'ընէր աղօթք ,
Տէրոջ փառքն կը տեսնէր .
Կը կարդայի երբ իր սուրբ խօսք ,
Ամէն խոստմունքն իմս էր :
- 4 Սակայն հիմա մուժն երբ կոխէ ,
Կ'ողբամ 'ի խաւարի .
Եւ երբ առտուն լոյս կը ծագէ ,
Սրտիս լոյս ոչ փայլի :
- 5 Հիմա աղօթքս է ձայն սնոտի ,
Տէրս է երեսն ծածկեր .
Մեծ մեծ խոստմունք ես կարդացի ,
Բայց վիճակիս չօգներ :

6 Տէր , ինձ շնորհէ ոյժ զօրութեան ,
 Ո՛հ , մի մոռնար հողիս .
 Քու գըթութիւնդ է յաւիտեան ,
 Անով կանգնէ արդ զիս :

191 Թ-դ-դ-ի շ-ր-հ-ո-յ կ-ր-դ-դ-ի-ն . (8) :

- 1 Կարօտ եմ , Տէր , մեծ զօրութեան ,
 Որ սրբութեամբ քեզ ծառայեմ .
 Քանզի սիրտս է բոյն ցանկութեան ,
 Շատ մեղքերու բեռան տակ եմ :
- 2 Անշուշտ պիտի ես կորսըւիմ
 Այս բընական վիճակիս մէջ ,
 Թէ որ շուտով չընորոգուիմ ,
 Չըմաքրըւիմ շնորհօքըդ մեծ :
- 3 Գիտեմ որ ես եմ անարժան
 Աստուածային քոյդ շընորհաց .
 Ձի անարդեր եմ շատ անգամ
 Ո՛հ , Սուրբ Հոգիդ ինձ պարգևուած :
- 4 Ուխտիւք կրկին քեզ կ'աղաչեմ ,
 Տէր , Սուրբ Հոգիդ ինձ պարգևէ .
 Ես միաբան իրեն քալեմ՝
 Ըզգուշացեալ ամէն մեղքէ :

192 «Աշխարհի լայն է՛» • Յուլի • Թ • 5 • (8) :

- 1 Այո , լոյս ես , Տէր սիրելի ,
Քեզ չըզըտած ես կոյր էի .
Լըսեր էի թէ սիրտս է չար ,
Վա՛յ եղկեւոյս , չէի ըզգար :
- 2 Լըսեր էի թէ մեղք ունիմ ,
Եւ թէ դըժոխք բաժինս է իմ .
Հոն կ'երթայի ես չարաչար ,
Վա՛յ եղկեւոյս , չէի ըզգար :
- 3 Լըսեր էի թէ սէր ես դու ,
Կեանք ու հանգիստ կու տաս մարդու ,
Եւ թէ ըզչարն կ'ընես արդար .
Վա՛յ եղկեւոյս , չէի ըզգար :
- 4 Բայց երբ ըզքեզ իմինս ըրի ,
Իմ սիրտս ու սէրս քեզի տուի ,
Հաւատացի , տեսայ , կը զգամ .
Օգնէ ինձ որ ալ չըկուրնամ :
- 5 Ինձի նըման շատեր ալ կան ,
Որ տակաւին կոյր կը կենան .
Բայց աչքերնին որ քեզ տեսնեն ,
Եւ նեղ դունէն շուտ ներս մտնեն :

193 Մ Լ Ե Ե Լ Ե Ե . (6 , 6 , 8 , 6) :

- 1 Մ ո լ ա ր ո շ խ ա ր է ի ,
 Հ օ ա ր չ է ի ս ի ր ե ր .
 Զ է ի ան ս ա ր Հ ո վ ու լ ի ա ձ ա յ ն ի ն ,
 Ու ղ զ ու ի լ չ է ի ու ղ ե ր :
 Ե ս ան ա ու ա կ է ի ,
 Տ ու ն ը ս չ է ի ս ի ր ե ր .
 Հ օ ր մ է ս հ ե ո ու կ ը փ ա խ ս չ է ի .
 Մ ը ա ի կ չ է ի ը ն ե ր :
- 2 Զ ո ր ան ա պ ա տ և մ ե ծ ,
 Ա ն տ ա ո խ ի ս տ , ա հ ա գ ի ն .
 Փ ն ա ու ե ց Հ ո վ իւ ը ի ր ո շ խ ա ր ն ,
 Ու Հ ա յ ր ը ի ր ո ր գ ի ն :
 Մ ա հ ու ա ն մ օ տ զ ի ս գ ը տ ա ն՝
 Մ ա ս ա ի կ ղ ի ր աւ ո ր ու ա ծ .
 Զ ի ս փ ա թ թ ե ց ի ն ս ի ր ո յ կ ա պ ու լ ,
 Եւ ղ ե ր ա ու ի ն մ ա ր ա ծ :
- 3 Գ ը լ ու լ ի ս է ր ն ը ա ղ ա ծ ,
 Գ ու թ ու լ բ ա ր ձ ր ա ց ու ց ի ն .
 Զ օ ր ա ց ու ց ի ն մ ա ր ա ծ հ ո գ ի ա ,
 Վ է ր ք ե ր ս բ ը ժ շ կ ե ց ի ն :
 Լ ու ա ց ի ն զ ի ս ա ղ տ ե ր է ս ,
 Մ ա ր մ ի ն ա հ ա գ ու ե ց ու ց ի ն .
 Տ ու ն ը ս բ ե ր ի ն զ ի ս ա պ ա հ ո լ ,
 Ս ի ր ու լ խ ը ն ա մ ե ց ի ն :

- 4 Յիսուս է իմ Հովիւս ,
 Ինքն էր որ զիս սիրեց .
 Որ զիս լըւաց իր արիւնով ,
 Հողիս ալ դարմանեց :
 Մոլար ու կորսըւած ,
 Ինկած , ան զիս գըտաւ .
 Չիս ան առաւ ուսին վըրայ ,
 Եւ իր փարախն բերաւ :
- 5 Ալ չեմ մոլար ոչխար ,
 Փարախըս կը սիրեմ .
 Հովուիս ձայնն ալ ինծի քաղցր է ,
 Ուղղուիլ յօժար ալ եմ :
 Չեմ անառակ որդի ,
 Իմ տունըս կը սիրեմ .
 Քաղցր է ինծի իմ Հօրըս ձայնն ,
 Ու մօտ կենալ կ'ուզեմ :

194 Մուր «Էր» . (6) :

- 1 Մոլար ոչխար էի .
 Հօտը չէի սիրեր ,
 Հովիւս կ'անարգէի ,
 Լըսել չէի ուզեր :
 Ես անառակ էի ,
 Տունըս չէի սիրեր ,
 Հօրմէս կը փախչէի ,
 Մըտիկ չէի ըներ :

- 2 Հովիւը իր ոչխարն ,
 Եւ Հայրը իր որդին
 Աղատելու համար
 Ամէն ճիգ յանձն առին :
 Մահուան մօտ զիս դըրտան
 Տըկար , ծարաւ , անյոյս .
 Զիս սովամահ տեսան ,
 Եւ դըլժացան հողւոյս :
- 3 Զարմանալի սիրով
 Աղտերըս մաքրեցին .
 Եւ տունըս ապահով
 Խաղաղութեամբ տարին :
 Յիսուս է իմ Հովիւս ,
 Ան իմ հողիս սիրեց .
 Լըւաց իր արիւնով ,
 Լըւաց և բըժշկեց :
- 4 Ալ անառակ որդի ,
 Մողար ոչխար մը չեմ .
 Հովիւս քաղցր է ինձի ,
 Փարախը կը սիրեմ :
 Եւ միշտ իմ Հօրըս տունն
 Կենալ կը փափաքիմ .
 Ան ինձ է տեղ սիրուն .
 Մէյմ'ալ չըլթափառիմ :

195 Տէր , ինչպէս որ կ'ուզես . (6) :

1 Տէր , ինչպէս որ կ'ուզես .
 Քու կամքըդ իմն ընեմ .
 Սիրոյ ձեռացըդ մէջ
 Ամէն բան կը յանձնեմ .
 Առաջնորդէ ինձի ,
 Ընտրէ ինձի ճամբայ .
 Թող միշտ սրտանց երգեմ ,
 «Քու կամքըդ , Տէր , ըլլայ» :

2 Տէր , ինչպէս որ կ'ուզես .
 Թէ տաս ուրախութիւն ,
 Թէ լաւագոյն սեպես
 վիշտ , ցաւ ու նեղութիւն ,
 Եւ արտասուաց մէջէն
 Թէ աստղըս երևնայ ,
 Թող յոյսըս չըմարի .
 «Քու կամքըդ , Տէր , ըլլայ» :

3 Տէր , ինչպէս որ կ'ուզես .
 Ինչ որ ըլլայ վիճակս ,
 Զիս քեզ նրման ընես ,
 Եղիր դուն օրինակս .
 Երկրիս վրայ դուն լացիր ,
 Ծառադ ալ հոս թող լայ ,
 Միայն իմ հետս եղիր .
 «Քու կամքըդ , Տէր , ըլլայ» :

4 Տէր , ինչպէս որ կ'ուզես .
 Գուն հետս ըլլաս , իրաւ
 ինչ որ ալ որոշես
 Ինծի ամէնն է լաւ ,
 Ամէն բան ապահով
 Ներկայ և ապագայ .
 Կ'երգեմ միշտ ցնծումով ,
 «Քու կամքըդ , Տէր , ըլլայ» :

196 Աղօթի գագաթան . (10 • 8 տող) :

1

Ես կը խնդրէի բարի Աստուծմէ ,
 Որ սէրս ու հաւատքս աճեցուցանէ
 Ինծի ճանչցունէ իմին փրկութիւնս ,
 Իրմէ փնտուել տայ իմ արդարութիւնս :
 Ան ինձ սորվեցուց ինչպէս աղօթեմ ,
 Աղօթքըս լըսեց ան , ես լաւ գիտեմ .
 Բայց ինքըն ըրաւ անանկ մէկ կերպով ,
 Որ շուտ ես ինկայ անյուսութենով :

2

Ես կը յուսայի որ ինք զիս օրհնէ ,
 Եւ յանկարծակի խնդիրքս կատարէ .
 Սանձէ իմ մեղքերս անյաղթ շընորհքով ,
 Հողիս լեցունէ հանգստութենով :
 Սակայն ան բոլոր ներհակըն ըրաւ ,
 Սրտիս ցաւալի խոցերը բացաւ .

Թողուց որ կատղած զօրքերն դըժոխքին
Ամէն կողմանէ իմ վրաս յարձակին ։

3

Այսչափս հերիք չէ . բայց ինք զիս նեղեց ,
Չեռքովը վըրաս վիշտ բեռնաւորեց .
Ոտքի տակ կոխեց խորհուրդն հողիս ,
Չորցուց կործանեց հաւնած դդմենիս ։
Ահով ու դողով աղաղակեցի ,
« Ինչո՞ւ , Տէր , կու տաս ասանկ վիշտ ինծի .
Աս որդն մինչև մահ պիտի հալածես .
Ի՞նչ փառք է քեզի թէ որ զիս յաղթես » ։

4

Տըւաւ պատասխան Աստուածըն բարի ,
Թէ « Քու աղօթքներդ այսպէս կ'ընդունուի .
Իմ իմաստութիւնս և սէրս աս կ'ընէ ,
Որ սէրդ և հաւատքդ աճեցուցանէ ։
Ներքին փորձերով ես քեզ կը փորձեմ ,
Հըպարտ անձնասէր կիրքէդ կ'ազատեմ .
Այսպէս կը ցրուին ունայն հաճոյքներդ ,
Որ դուն ընդունիս ինծմէ բարիքներդ » ։

197 Նեղութեան Դժ Ռիկարտիւն . (8 , 6 ,
8 , 6 , 8 , 8) ։

1 Տրամած ատենս երբ կարենամ
Իմ անձս Տէրոջ յանձնել ,

Եւ ցած սրտով կարող ըլլամ
 Պատժող Աստուածս օրհնել,
 Շուտով վըրաս ցնծում կու դայ,
 Տըխուր հողիս կ'ուրախանայ:

2 Եւ փրկիչին ոտքերն իյնալ
 Դառն վիշտերով պատած,
 Եւ հոն աղօթք ընել ու լալ
 Շատ արցունքներ թափած՝
 Անոյշ կու դայ իմ հողիս,
 Զի Տէրն լըսող է իմ ձայնիս:

3 Օրհնեալ է ան երբոր կու տայ,
 Օրհնեալ երբ ետ կ'առնէ.
 Սիրով ինծի այցի կու դայ,
 Սիրով ալ կը պատժէ.
 Աստուած արդար է և բարի,
 Իր կամքը միշտ թող կատարուի:

198 Նեղո-Բեան Ռջ Ռիկարո-Բի-ն. (8, 6):

1 Յիսուս, դուն մեզ մըխիթարէ
 Մեր նեղութեանը մէջ.
 Աստուած փրկիչ, մեզ պաշտպանէ
 Մինչ մեր կենաց ալ վերջ:

2 Դուն Սուրբ Խօսքովդ ըսիր մեզի ,
 «Եկէք ինձ , յողնածներ ,
 ինծմէ գրտէք հանգիստ սրտի ,
 Թշուառ ըստեղծուածներ» :

3 Ով Տէր Յիսուս , ես առ քեզ դամ ,
 Տուր ինձ հանգըստութիւն .
 Սրտիս ցաւերն քեզ կը բանամ ,
 Տուր ինձ դուն ցնծութիւն :

4 Քեզմէ ուրիշ որո՞ւ երթանք ,
 Զի դուն ես փրկութիւն .
 Քեզի գալով կեանք կը գտնանք
 Եւ սուրբ խաղաղութիւն :

5 Դուն մեզ օգնէ 'ի մէջ վշտաց ,
 Յիսուս , քեզ կ'աղաչենք .
 Որ քու անունդ միշտ գերապանծ
 Անդուլ փառաւորենք :

199 Նեղո-Բեան Չի Աստուծոյ վրայ յոյս .
 (8 , 6 , 8 , 6 , 8 , 8) :

1 Խռովեալ հողիս , հանդարտ կեցիր ,
 Երբ Տէրն քեզ կը խրատէ .
 Անոր կամքին հնազանդ եղիր ,
 Թէպէտ ճամբադ մութ է :
 Տէր , չեմ կրնար դործքերդ քննել ,
 Հերիք է անձս քեզի յանձնել :

2 Ես քու սիրոյդ միշտ յուսաւով՝
 Ուզած ճամբովդ կ'երթամ.
 Կորսընցուցածս չխորհելով՝
 Թէ շատ ալ զուրկ մընամ.
 Ինձի անհուն բարիք ալ կան,
 Քանզի դուն իմս ես յաւիտեան ։

200 Աստուած Եր աղօթէնք . Սաղ . ԽԶ . (8, 7) :

1 Տէր Աստուած մեր ապաւէնը
 Ու մեր զօրութիւնն ալ է .
 Ինք մեզ նեղութեան ատենը
 Կը սփոփէ և կը վրկէ ։

2 Մեր Տէրոջը ժողովուրդը
 Թող ուրեմն չըվախնայ .
 Զի իր յոյսը հաստատուած է
 Ճշմարիտ հիման վըրայ ։

3 Թէպէտ և դողան ջուրերը ,
 Ու ծովուն ալ մէջ ձգուին
 Յաւիտենական լեռները ,
 Բայց պիտի ան չըշարժի ։

4 Մէր Սիօնը ապահով է ,
 Զի իր Տէրը կը տիրէ .
 Եւ իր յոյսը Աստուծամով է .
 Անիկա կ'առաջնորդէ :

5 Եհովայ Զօրաց Աստուածը
 Օգնական մեզի կ'ըլլայ .
 Ինքը Յակոբին Աստուածը
 կը տիրէ երկրիս վըրայ :

6 Տէր Աստուած մեր ապաւէնը ,
 Ու մեր զօրութիւնն ալ է .
 Ինք մեզ նեղութեան ատենը
 կը սփոփէ և կը փրկէ :

201 Նեղութեան ժամ արթնի . Սաղ . Կթ . (8) :

1 Զիս ապրեցուր , ով Տէր Աստուած ,
 Քանզի ջուրերն անձիս հասան .
 Խորունկ ցեխի մէջ եմ ինկած ,
 Եւ հեղեղներ զիս կուլ կու տան :

2 Քեզ յուսացողք թող չամբնան ,
 Ով Տէր փրկիչ , Տէր զօրութեանց .
 Քեզ խնդրողներն հաստատ մընան ,
 Ով երկնաւոր և Սուրբ Աստուած :

- 3 Տուր պատասխան ինձի , ով Տէր ,
 Ձի դուն գըթած ես յաւիտեան .
 Երեսդ ինձմէ , Տէր , մի ծածկեր ,
 Ձի եմ ինկած 'ի նեղութեան :
- 4 Անունդ երդով գովեմ պիտի ,
 Բարձրացընեմ ամէն ատեն .
 Ձի ան է քեզ ընդունելի
 Ձըւարակին , եզին զոհէն :
- 5 Երկինք , երկիր գովեն թող Տէրն ,
 Ձի ինք Սիօնն պիտի փրկէ .
 Եւ իր անունը սիրողներն
 Հոն յաւիտեանս պիտի պահէ :

202 Տեւը եր ժողովուրդը երենց Բնութեանն էր
 պաշտպանէ . Սաղ . ԾԶ . (8) :

- 1 Ով Տէր Ստուած , ինձ ողորմէ ,
 Քանզի չար մարդ գիւ կը կլլէ .
 Թշնամիներս գիւ կը նեղեն
 Մարտնչելով ամէն ատեն :
- 2 վախցած ատենս քեզ կը գիմեմ ,
 Ու քու Սուրբ Խօսքդ պիտի գովեմ .
 Քեզ յուսալով ես չեմ վախնար ,
 Ինձ վընասել մարդ չըկրնար :

3 Ես աներկբայ աղէկ գիտեմ,
 Որ երբ զԱստուած ես կը կանչեմ,
 Իմ թշնամիս ետ կը դառնայ,
 Քանզի Աստուած իմ հետս կ'ըլլայ ։

4 Ես Աստուծով պիտի դովեմ
 Իրեն անսուտ խօսքերն վըսեմ .
 Ով Տէր , ուխտերդ իմ վրաս առի ,
 Սրտանց կու տամ ես փառք քեզի ։

5 Տէր , փրկեցիր զիս չար մահէն ,
 Ոտքերըս ալ վար իյնալէն ,
 Որ քու առջիդ միշտ պըտըտիմ ,
 Եւ կենդանեաց լուսովս հրճուիմ ։

203 Տերը Բեր Փրկեալ Սաղ . ԾԷ . (8) ։

1 Ինձ ողորմէ , ով Տէր Աստուած ,
 Ինձ ողորմէ , Փրկիչ գըթած .
 Հոգիս քեզի կ'ապաւինի ,
 Մինչև ամէն փորձանք անցնի ։

2 Բարձրեալ Աստուածն ես կը կանչեմ ,
 Փրկիչ Տէրօջս ես կը դիմեմ .
 Ան երկինքէն պիտի խրկէ ,
 Ու ոստիսէս պիտի փրկէ ։

- 3 Ողորմութիւն պիտի խրկէ ,
 ճշմարտութիւնն պիտի յայտնէ .
 Պիտի ընէ միշտ խայտառակ
 ինձ դէմ դընող չարն անառակ :
- 4 Ո՛վ Տէր , երկինք դուն բարձրացիր .
 փառքդ տարածուի ամէն երկիր .
 Քու սուրբ անունդ մարդիկ ճանչնան ,
 Երկրպագու քեզի ըլլան :
- 5 Պատրաստ է սիրտս , փրկիչ Աստուած ,
 Քեզ օրհնելու , դի ես գըթած .
 Չարթիւր , քընարս , սաղմոսարանս ,
 Հիւսեւ Տէրոջս երգ օրհնութեանց :

204 Հասարակեալն յոյսը Աստուծոյ վրայ հասարակեալ է . Սաղ . ԿԱ . (10) :

1

Ո՛վ Տէր իմ Աստուած , ճայնիս դուն լըսէ ,
 Միտ դիր աղօթքիս , ինծի ողորմէ .
 Երկրիս ծայրերէն քեզի կը կանչեմ .
 Ինծմէ բարձր վէմին ինձ առաջնորդէ :

2

Ես , Տէր , քու տաճարդ պիտի բընակիմ ,
 Պիտի թևերուդ շուքին տակ նստիմ .
 Քանզի դուն եղար ինծի աշտարակ ,
 Որ ես թչնամուսս ձեռքէն ազատիմ :

3

Եւ դուն, ով փրկիչ, ուխտերս լըսեցիր,
ինձի մեծամեծ բարիք հատուցիր .

Եւ քու անունէդ երկրնչողներուն
Ժառանգութիւններն ինձ պարգևեցիր :

4

Ես քու անունիդ մինչև յաւիտեան
Պիտի միշտ երգեմ սաղմոս օրհնութեան,
Եւ ես ամէն օր ուխտերս կատարեմ,
Որոնք խոստացայ քեզ 'ի նեղութեան :

205 Տոց երևո՞ւեանք զայ . Սաղ . ՀԸ . (8) :

1 Ով ժողովուրդս, ականջ դրրէք
Իմ օրէնքիս պատուէրներուն .
Բոլոր սրտով մըտիկ ըրէք
Իմ բերանիս պատգամներուն :

2 Տէրոջ հրաշքներն լըսած ենք մենք,
Եւ մեր հայրերն մեզ պատմեցին .
Պէտք է մենք ալ զանոնք պատմենք
Մեր ետևէն եկող ազգին :

3 Օրէնք դրրաւ իսրայէլին,
Եւ հաստատեց վրկայութիւն,
Որ իր գործքերն ամէնք սորվին,
Հայրերն պատմեն զաւակներուն :

4 Որ յոյսերնին Տէրոջ դընեն ,
Անոր գործքերն ալ չըմոռնան .
Իրենց սրտերն Տէրոջ շիտկեն ,
Եւ հայրերնուն պէս չար չըլլան :

206 Հասարակեաներուն ազանովութիւնը . Սաղ .
ՂԱ . (10) :

- 1 Ով որ կը յուսայ Բարձրեալ Տէր Փրկչին ,
Եւ զայն ապաւէն կ'ընէ իր անձին ,
Տէրն ամենակալ զայն իր շուքին տակ
Խաղաղ կը պահէ ամէն ժամանակ :
- 2 Որողայթներէն ինք քեզ կը փրկէ ,
Իրեն թևոց տակ քեզ միշտ կը ծածկէ ,
Իր ճշմարտութիւնն կ'ըլլայ քեզ ասպար ,
Որ քեզ չըդըպչին նետեր փնասակար :
- 3 Նետեր բիւրաւոր դէպ 'ի քեզ կու գան ,
Հողիք անհամար քովերըդ կ'իջնան .
Բայց դուն անվրնասս պիտի միշտ տեսնաս
Անզեղ չար մարդոց պատիժ պատուհաս :
- 4 Դուն Տէրն ըրիր քեզի ապաւէն ,
Վրնաս չես կըրեր ոչ մէկ չար բանէն .
Ձի ան պատուիրեց իրեն հրեշտակաց ,
Որ քեզ ճամբուդ մէջ պահեն անվրնաս :

- 5 Իրենց ձեռքերուն վըրայ վերցունեն ,
 Չըլլայ որ ոտքերդ քարի մը զարնեն .
 Առիւծն ալ պիտի ոտքիդ տակն առնես ,
 Եւ չար վիշապն ալ պիտի կոխկըռտես :
- 6 Քանզի ինքն ինծի իր սիրտը տըլաւ ,
 Ինծի հաւատաց , անունըս գիտցաւ .
 Պիտի ան փրկեմ և բարձրացունեմ ,
 Ի փառս երկնային պիտի զայն առնեմ :

207 Տ երբ եր Բ Բայն Մեկնարեւը . (8) :

- 1 Նեղեալ հոգւոյս դուն պահապան ,
 Երբ տրտմութիւնք վըրաս կու գան ,
 Երբ զիս պատէ ծով նեղութեան ,
 Քեզ կը դընեմ իմ յոյսս միայն :
- 2 Կ'ուզեմ ցաւերս քեզի յայտնել ,
 Որ դուն կարող ես բըժշկել .
 Քու խօսքդ միայն զիս կ'ազատէ
 Վըրաս եկած ամէն ցաւէ :
- 3 Բայց երբ իմ ներսըս կ'երկմտիմ ,
 Իմն ես ըսել կը զարհուրիմ .
 Ուրախութիւնըս կը կըտորի ,
 Բոլոր յոյսերըս կը հատնի :

4 Արդ ո՞ւր երթամ, Տէր սիրական,
 Դուն ես միայն ինձ օգնական.
 Հողիս քեզի կ'ապաւինի,
 Յաւոց մէջէն քեզ կը նայի :

208 Քրիստոնէական ուրախութիւն . (6, 6, 9) :

1 Երջանիկ անոնք են,
 Որ Փրկչին կը լըսեն,
 Եւ իրենց դանձը վեր դիզեր են.
 Լեզուներ կարող չեն
 Սրբոց փառքը պատմել,
 Որ Փրկչին սիրոյն համն առեր են :

2 Իմ կենացըս օրերն
 Ես պիտի օրհնեմ Տէրն .
 Փրկութիւնը իրմով է միայն .
 Ամէնքն ալ հաւատան
 Եւ հասնին փրկութեան,
 Մէկ ցնծում ու մէկ երգ ունենան :

209 «Ա.Գ. Բ. 3երէ Է» . (8) :

ՄԱՍՆ Ա

1 Ըսքանչելի Տէրոջն անուն,
 Իւր բարութիւնըն է անհուն .
 Ինք կը հողայ ըստեղծուածներն՝
 Միշտ դըթալով ամենեցուն :

- 2 կը կարգադրէ զօրքն աստեղաց ,
 Որ լոյս կու տան մութ աշխարհաց .
 Ծովու , երկրի կենդանիներն
 Անով կ'ապրին միշտ զօրացած :
- 3 Դաշտերն ծաղկօք կը զարդարէ ,
 Թռչուններն ինք կը խընամէ .
 Անոնց երգն ալ քաղցրանըւադ
 Զիւր բարութիւնն կը քարոզէ :
- 4 Աշուն , գարուն , ամառ , ձմեռն
 Ճոխ կերակուր կը պատրաստեն .
 Անասուններն , բոյսերն և որդ`
 Զարդ ու հանդերձ անոնց նիւթեն :
- 5 Երկինք , երկիր , այս ամենայն
 Ըրաւ մինակ , տարաւ խընամ ,
 Ինծի յանձնեց , «վայլէ» , ըսաւ ,
 «Ինձ ծառայել ջանա միայն» : -

Մ Ա Ս Ն Բ

- 6 «Բայց այսչափ չէ պատրաստութիւն ,
 Շնորհաց յաւէտ կարօտ ես դուն .
 Քու մեղքերովդ կորսըւեցար ,
 Ահա Փրկիչ մը քեզ սիրուն» : -

- 7 “Որդիւ է այս, կու տամ քեզի •
 Եւ ոչ մէկ բան խընայեցի,
 Ամէնն ըրի քեզի համար,
 Քեզ ինձ համար ըստեղծեցի” :
- 8 Տե՛ս, իմ հողիւ, աղէկ խորհէ
 Ազնըւութիւնդ ուրիշներէ •
 Դուն որդի ես մեծ Աստուծոյն,
 Երկինք, երկիր քուկինըդ է :
- 9 Ի՞նչ է մարդ փուճ, Աստուած փառաց,
 Որ կը յիշես, կ’ընես դու այց •
 Բարձրաստիճան զայն պատուեցիր,
 Սէր ցուցուցիր խիստ գերազանց :
- 10 Ի՞նչպէս մոռնամ, Հայր իմ գթած,
 Քու սէրդ, դորժքերըդ հիասքանչ •
 Թող քեզ պաշտեմ բոլոր սըրտով,
 Յիսուս փրկչիս միշտ հետեւած :

210 Աստուծոյ ցոսացողին վարչքը • Սաղ • Խ •
 (8) :

- 1 Ներդութեանց մէջ համբերեցի,
 Տէրն ծըռեցաւ, լըսեց ինձի •
 Զիս կորստեան փոսէն հանեց,
 Ոտքս ալ վէմի վրայ հաստատեց :

- 2 Եւ իմ բերանս նոր երգ դըրաւ ,
 Հոգիս Տէրոջ մեծ փառք տըլաւ .
 Թող շատ մարդիկ աս իմանան ,
 Ու վախնալով Տէրոջ յուսան :
- 3 Կու տամ անոր ես երանի ,
 Որ հըպարտաց բընաւ չնայի .
 Կ'ատէ դարձողն չար սըտութեան ,
 Ու Տէրն կ'ընէ իր ապաստան :
- 4 Քուկին հրաշքներդ շատ են , ով Տէր ,
 Քու խորհուրդներդ խելքէ են վեր .
 Ես չեմ կրնար զանոնք պատմել ,
 Ձի չէ հընար զանոնք համրել :
- 5 Տէր , փրկութիւնդ քարոզեցի ,
 Ճշմարտութիւնդ չըծածկեցի .
 Տէր , գթութեամբդ ինծի օգնէ ,
 Ճշմարտութեան մէջ զիս պահէ :

211 Ընդանէկան օրհնութիւնը Աստուծոյ պարգևն է .
 Սաղ . ՃԻԷ . (8) :

- 1 Թէ որ Աստուած տունն չըշինէ ,
 Զուր կ'աշխատին զայն շինողներն .
 Թէ որ քաղաքն ինք չըպահէ ,
 Զուր կը հսկեն պահապաններն :

- 2 Զուր է կանուխ ելլել առտուն ,
 Եւ ոչ հանդչիլ ու քիչ ուտել .
 Զի Տէրն կ'ուզէ իր սիրելոյն
 Հանգստութիւն միայն շնորհել :
- 3 Ահա տղաք ու աղջիկներ
 Եւ առանգութիւն են Աստուծմէ .
 Քեզի յանձնենք մեր զաւակներն ,
 Եւ օրհնութիւն խնդրենք քեզմէ :

212 Տ Ե Պ Է Ա Լ Կ Գ Ե Յ Ի Խ Ա Ղ Ա Ղ Ա Բ Ի Լ Ե Ն Ը . (8 . 6 տող) :

- 1 Խաղաղութիւն ըլլայ քեզի ,
 Ով վշտալից տրտմեալ հոգի .
 Արդ աղաղակդ թող դադարի ,
 Եւ արցունքներդ շուտով կտրի .
 Ահա քեզ դեղ գտնըւեցաւ ,
 Որ վերցընէ կսկիծդ և ցաւ :
- 2 Թէ և սրտիդ հառաչանքէն ,
 Դառնակսկիծ սաստիկ ցաւէն
 Սորված են պինդ ապառաժներ
 Ողբերգական եղանակներ ,
 Բայց Տէրն վերքերդ կը բըժշկէ ,
 Բոլոր մեղքերդ արդ կը քաւէ :

3 Ով մարդ մեղքով բեռնաւորուած ,
 Եկ համարձակ առ Տէր գըլթած .
 Քու ծանրը բեռդ մէկ դի ձրդէ ,
 Եւ ապաւէնդ Քրիստոս ըրէ .
 Տէրն է փրկիչդ . ի՞նչ խօսք օրհնած .
 Դուն միշտ սիրէ , օրհնէ զՍտուած :

213 Տէրը +ւ՛ջ Հո՛ւն . Սաղ . ԻԳ . (10) :

- 1 Ինձ Տէրը եղաւ Հովիւ կառավար ,
 Եւ բանի մը ես կարօտ չեմ ըլլար .
 Օրեր անվախճան դաշտերն խոտաւէտ
 Պիտի ճարակիմ ընտրեալ հօտիդ հետ :
- 2 Հանդարտ ջուրերուն զիս կ'առաջնորդէ ,
 Ծարաւը հոգւոյս կը յագեցընէ .
 Հողիս իր խօսքովն միշտ կը նորոգէ ,
 Ուղիդ ճամբուն մէջ հաստատ կը պահէ :
- 3 Մահուան շուքին ալ ձորին մէջ քալեմ ,
 Չարէն չեմ վախնար ու վախնալու չեմ .
 Քանզի , ով Տէր , դուն միշտ ինձի հետ ես ,
 Եւ դաւազանովդ կը մըխիթարես :
- 4 Քու ողորմութիւնդ իմ հետըս կու դայ ,
 Բոլոր կեանքիս մէջ ինձի սիրտ կու տայ .
 Տէրոջը տաճարն պիտի ես հանդչիմ
 Երկար ժամանակ , և հոն բընակիմ :

214 Խոր Յորը • (8, 7, 8, 4) :

- 1 Ով տառապանաց աշխարհը ,
 Ի՞նչ սուր են փուշերդ ինձի •
 Ո՛ւր էր որ զիս տանէր մէկը
 Աս խոր ձորէն :
- 2 Ով Իսրայէլի տանողը ,
 Եկ ամալի կրակի սիւնովն •
 Անվլրտանդ անցուր մեր անձը
 Աս խոր ձորէն :
- 3 Քաջ Հովիւ դուն , Տէր Յիսուս իմ ,
 Բաց քու սիրոյդ բազուկներն •
 Հետս եղիր զօրեղ պաշտպան իմ
 Աս խոր ձորէն •
- 4 Սուրբ Հոգի , հրզոր Աստուած մեր ,
 Թշնամեաց յաղթէ ուժովդ •
 Մի թողուր զիս դեռ չելած վեր
 Աս խոր ձորէն :
- 5 Ո՛հ , ի՞նչ վիշտ ու ցաւ քաշեմ ես
 Հոս կեանքիս բաժին եղած ,
 Ընդունէ զիս երբ ելլեմ ես
 Աս խոր ձորէն :

215 Տէրը կ'աշտի Բեղ Վրասնէն • Սաղ • ՃԻԴ •

(8) :

- 1 Թող իսրայէլ ըսէ հիմա ,
Թէ որ Աստուած մեր հետ չըլլար
Երբ թշնամին եկաւ մեր վրայ ,
Մեզ բարկութեամբ ողջ կուլ կու տար :
- 2 Զուրեր մեր վրայ կը թափէին ,
Կը պատէին մեզ հեղեղներ •
Կատղած յորձանք մեր հողին
Եւ մարմինին վըրայ կ'անցնէր :
- 3 Օրհնեալ ըլլայ Աստուածն արդար ,
Որ մեզ անոնց որս չըտըլաւ •
Տէրն ողորմած եղաւ ասպար
Մեզի փրկիչ , օգնիչ եղաւ :
- 4 Մեր հողիներն թռչնոյ մը պէս
Լարուած ցանցէն ազատեցան •
Որոգայթնին Տէրն կոտորտեց ,
Հողիներնիս փրկըւեցան :
- 5 Մեր օգնութիւնն է Տէրոջմէ ,
Երկինք , երկիր Ստեղծողէն •
Մեր զօրութիւնն է Աստուծմէ ,
Որ շատ մեծ է արարածէն :

ՔՐԻՍՏՈՆԻԱԿԱՆ

ՊԱՐՏԱԻՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

216 Քրիստոնէին հորժը • (6 , 6 , 8 , 6) :

1 Գործ կայ ինձ յանձնըւած ,
Երկնից յարմարցընել
Անմահ հոգիս , և իմ Աստուածս
Վարքովս փառաւորել :

2 Բոլոր ընկերներուս
Հոգիներուն համար
Աշխատելով , ներկայ դարուս
Ըլլամ միշտ օգտակար :

3 Ո՛վ Տէր , ինձի օգնէ
Առջևըդ քալելու ,
Եւ քու շնորհքովդ զիս պատրաստէ
Վերջին հաշիւս տալու :

4 Վառէ զիս նախանձով .
Հսկեմ , աղօթք ընեմ .
Զըկայ ասկէ զատ ապահով
Ուրիշ ճամբայ , դիտեմ :

5 Եթէ քեզի անսամ,
 Ինձ կայ կեանք անվախճան .
 Բայց եթէ ուխտադրուժ ըլլամ,
 Մահ յաւիտենական :

217 Աւետիսն Կենալու հարկաւորութիւնը .
 (6 , 6 , 8 , 6) :

1 Հոգիս , ըզդոյշ կեցիր ,
 Թշնամիներդ շատ են .
 Մեղաց զօրքն ալ , դըժոխք , երկիր
 Քեզ կործանել կ'ուզեն :

2 Աղթքը մի ձրգեր ,
 Արթուն կեցիր միշտ դուն .
 Պատերազմէն ետ մի քաշուիր ,
 Խնդրէ Տեառն օգնութիւն :

3 Յաղթող քեզ չըկարծես ,
 Զէնքերըդ մի ձրգեր .
 Զի դործդ պիտի չըհատցունես ,
 Մինչև հասնիս դուն վեր :

THE UNITED PRESBYTERIAN MISSION LIBRARY

475 Riverside Drive, New York 27, N. Y.

218 Այստեղ ասինքն զի գործէ . (12, 9) :

1

Օրին մէջ մեզմ լըուիկ , բայց ազդու ձայն
մը կայ ,

Երբ խաղանք ազանջնուս կը հնչէ .

Առտըւանց , թէ և մենք չենք գիտեր , ան
կու գայ .

Կէս օրին , իրիկունն ալ մեր շուրջը կ'ըլլայ .

“ Այսօր այդիկս մէջ գործէ ” :

2

Եւ այս ձայնն ուղղապէս երկինքէն իջնելով՝

Մեզ , ուր որ թափառինք , կը դանէ ,

թէ դաշտի թէ քաղքի մէջ մեզի հասնելով ,
թէ լըսենք և թէ ոչ , անդադար գոչելով ,

“ Այսօր այդիկս մէջ գործէ ” :

3

Ան մեր Հայրն է որ մեզ յոյժ սիրով կը կանչէ .

Իր ձայնին հընազանդ ըլլանք մենք .

Անդադար օրհնութիւն իր ձեռքէն մեզ
կ'իջնէ .

Մենք , ուրեմն , իր սիրոյն նըւիրուած 'ի սրտէ՝

Այսօր այդիկն մէջ գործենք :

219 Մտաւորականութիւն . (8, 6) :

1 Քրիստոս Աստուած մեզ պատուիրեց
Որ ընկերնիս սիրենք ,

- Ոչ երեսանց՝ այլ մեզի պէս ,
Անկէ վարձք չըսպասենք :
- 2 Յիսուս Փրկիչ , մեզի օգնէ ,
Քեզի միշտ նըմանինք .
Քու օրինակդ մեզի յայտնէ ,
Անոր միշտ հետևինք :
- 3 Դուն ես Աստուած միշտ մարդասէր ,
Ներող ամէն մեղաց .
Թող մի տար որ մարդ մեղսասէր
Ըլլայ միշտ մարդատեաց .
- 4 Դուն քու արևդ միշտ կը ծագես
Ամէն մարդոց համար .
Եւ դուն քու սէրդ կը ցուցնես
Ամենուն հաւասար :
- 5 Արդ տուր մեզ սիրտ սիրանըւէր ,
Որ անխըտիր սիրենք .
Ըսուինք որդիք Հօրդ մարդասէր ,
Զիրար եղբայր կոչենք :
- 220** “Դո՛ւ՛ս ասին՞դ եղբայր ե՛ս” . Մատ . ԻԳ .
8 . (8) :
- 1 Եղբայր ենք մենք , մէկ Հօր որդիք ,
Զըկայ մեր մէջ մեծ ու պզտիկ :
Մէկ ուսուցիչ ունինք Յիսուս ,
Մէկ մեր հաւատք , և մէկ մեր յոյս :

- 2 Մէկ ճամբայով կ'երթանք մէկ տուն ,
Տուն լուսեղէն , յաւերժ սիրուն .
Ուր մահ կամ վախ չըկայ մեզի ,
Սմէնքը հոն սիրով են լի :
- 3 Ի միասին հոն յաւիտեան
Պիտի բնակինք մենք համաձայն .
Ուստի հոս մէկըզմէկ սիրենք ,
Մէկ սիրտ և մէկ խորհուրդ ըլլանք :

221 Երգայր-Եր-Են-Են . Սաղ . ՃԼԳ . (7) :

- 1 Ո՛վ Տէր , ո՛րքան է բարի ,
Ո՛րչափ շատ է ցանկալի ,
Որ եղբարք 'ի միասին ,
Միարան ալ բընակին :
- 2 Աս նըման է այն ցօղին ,
Որ կ'իջնէ դլուխն Հերմոնին .
Այն շաղին ալ որ կու դայ
Սուրբ Սիօն լեռան վըրայ :
- 3 Զի հոն Տէրը հաստատեց
Օրհնութիւն և վարձք ալ մեծ .
Եւ անոնց կեանք անվախճան ,
Որ իրեն կը հաւատան :

222 Գրեալսն էս հան յարտաբերան . (6, 6, 8, 6) :

1 Եկէք , Տէրն սիրողներ ,
 Պատմենք ցնծութիւնն իս .
 Մէկտեղ ելլեն մեր քաղցր երգեր
 Մինչև ակթուն փրկչիս :

2 Եւ թող անոնք չերգեն ,
 Որ Տէրը չըճանցան .
 Բայց Արքային որդւոցն ամէն
 Վայել է որ փառք տան :

3 Հոս իր սուրբ Սիօնին
 Ցնծումն կը վայելենք .
 Մինչև հասնինք երկնաւորին ,
 Իր փառքն անհուն տեսնենք :

4 Ուստի մենք միշտ երգենք ,
 Բընաւ տրտմեալ չըլլանք .
 Էմմանուէլին հողէն կ'անցնինք ,
 Դէպ 'ի երկինք կ'երթանք :

223 ՍՐԲ ԸԼԼԸՔ ԲՆՆՅՈՒՄ (8, 6) :

- 1 Ո՛ւ՛ Տէր , մեզի պատուիրեցիր
 Որ սուրբ ըլլանք սրտով .
 Սրբոց միայն երնեկ տըւիր ,
 Որ քեզ տեսնեն աչքով :
- 2 Ո՛ւ՛ Սուրբ Աստուած , դուն զիս սրբէ
 Ամէն տեսակ մեղքէն .
 Անմահ հոգիս դուն ազատէ
 Մեղաց պատճառներէն :
- 3 Դուն իմ սրտիս նոր սէր ազդէ ,
 Որ սուրբ ըլլալ ջանամ .
 Եւ իմ հոգիս լուսաւորէ ,
 Որ սուրբ օրէնքդ ճանչնամ :
- 4 Իմ սիրտըս , Տէր , քեզի դարձուր ,
 Որ միշտ մեղքէն փախչիմ .
 Դուն Սուրբ Հոգւովդ ինձի շնորհք տուր ,
 Որ քեզ միայն փակչիմ :
- 5 Ես կը բաղձամ սուրբ ըլլալու ,
 Որպէս զի քեզ տեսնեմ .
 Ես կը ցանկամ սուրբ ըլլալու ,
 Որպէս զի դրախտդ մտնեմ :

224 Անյնադննո-բէնն . (7) :

ՄԱՍՆ Ա

- 1 Գիտելու մէկ կէտ մը կայ ,
 Որ մտքիս տանջանք կու տայ .
 Արդեօք Տէրը կը սիրե՞մ ,
 Ես իրե՞նն եմ , կամ թէ չեմ :
- 2 Թէ սիրեմ , այսպէս կ'ըլլամ
 Յրտացած և անկենդան .
 Իւր անուան ծանօթ չեղողք
 Վատ ինձմէ կ'ըլլա՞ն արդեօք :
- 3 Սիրտս այսպէս խիստ կը մընա՞ր ,
 Ինձ աղօթքը բեռ կ'ըլլա՞ր ,
 Ցաւ կու տա՞ր ինձ բան չնչին ,
 Գիտնայի նէ սէրն Փրկչին .
- 4 Ներսըս երբ աչք դարձունեմ ,
 Զիք հաւատք , մեղք կը տեսնեմ .
 Մութ բոլորն , ունայն , անսանձ .
 Զիս սեպե՞մ որդի մ'եղած :
- 5 Ընթերցմունք , քարոզ , աղօթք ,
 Ինչ ընեմ ալ է մեղօք .
 Դուք , սրտանց Տէրն սիրողներ ,
 Ա՞ն է , ո՞հ , վիճակըն ձեր :

Մ Ա Ս Ն Բ

- 6 Խըստացած սիրտս դեռ կ'ողբամ,
Մեղքը վիշտ, կապանք կը զգամ,
Ըզդացումըս վիշտ կու տա՞ր,
Ատէի նէ մեղքն խապառ ։
- 7 Կ'ընտրէի՞ չուղած ճամբաս,
Կ'ըլլայի՞ սրբոց յարած,
Ինձ խոստմունքն երբէք քա՞ղցր էր,
Եթէ Տէրն չէի սիրեր ։
- 8 Տէր, լուծէ իմ տարակոյս,
Դու, սրբոցդ արևն ու լոյս,
Լոյս ծագէ գործոցդ շնորհաց,
Եթէ այն է ըսկըսուած ։
- 9 Քեզ որչափ սիրած ալ եմ,
Տուր որ աւելի սիրեմ.
Ո՛հ, սիրած չեմ նախ թէ որ,
Ինձ օգնէ, սկըսիմ այսօր ։

225 Սերոբ Աստուծոյ Բանալ. (6, 6, 8, 6) ։

- 1 Ամենատես սուրբ աչք
Մինչև խորերն զննէ .
Տէրն ըստեղծեց ըզսիրտ մարդոց,
Ծածուկ չէ այն իրմէ ։

2 Բազմիցըս այն կեղծեօք
 Խաբէ՛ թէ ես սուրբ եմ .

Ո՛հ , կը հաւտամ խաբող սրտիս ,
 Աւա՛ղ , մեղք կը սիրեմ :

3 Չար մեղաւոր գործքերն
 Են ատելի ինծի .

Գաղտուկ իմ մէջս մեղք կը պահուի ,
 Կ'ըսէ Չեմ զեն քեզի :

4 Զիս դու փորձէ , ով Տէր ,
 Տես ինչ ճամբու մէջ եմ .

Քննէ իմ սիրտս , յայտնէ մեղքերս ,
 Ճանչնամ թէ ես չար եմ :

5 Մաքրէ սիրտս մեղքերէս ,
 Ինձ առաջնորդ եղիր .

Քու սուրբ ճամբուդ մէջ դէպ յերկինս
 Վազեմ , ըլլամ թող ժիր :

226 Հասարակն յաղհո-րիւնը . (Տ . 5 տող) :

1 Ունայն աշխարհս ալ կը ճըգեմ ,
 Հիմա երկինք երթալ կ'ուզեմ .

Հոն է ամէն բան լուսաւոր ,
 Սուրբ , պատուական և փառաւոր ,
 Ով Տէր Յիսուս , շուտ եկ . Ամէն :

- 2 Իմ սիրելի եղբարք , միլաք .
 Ուրախ եղէք , իմ բարեկամք .
 Մեզքէն ազատ եմ , ոչ թշուառ .
 Եմ երջանիկ միշտ կատարեալ .
 Ով Տէր Յիսուս , շուտ եկ . Ամէն :
- 3 Խաւարն գնաց , է արշալոյս ,
 Ո՛հ , սուրբ քաղաք սրբուեց ըզլոյս .
 Արդարութեան ծագէ արև ,
 Հողիս տեսաւ դրախտն արդարև .
 Ով Տէր Յիսուս , շուտ եկ . Ամէն :
- 4 Ո՛հ , այս ժողով է սրբազան ,
 Գառն է անոր գըլլուխ , իշխան .
 Որոնց փափաքն սուրբ ջերմեռանդ
 Երգէ Տէրոջ նոր երգ զըւարթ .
 Ով Տէր Յիսուս , շուտ եկ . Ամէն :
- 5 Կարդամ և ես երգ յաղթութեան ,
 Ըլլամ այն սուրբ հօտին անդամ ,
 Լուսոյ ըզգեստ հագնիմ փայլուն ,
 Ընկերանամ երգիչ սլարուն .
 Ով Տէր Յիսուս , շուտ եկ . Ամէն :

227 Տերօղը յեռօին ասիլը խոնարհիլ • (8, 6) :

- 1 Հըզօր արքայ երկնի , երկրի ,
Որ կը տիրես դու միայն ,
Արդարութեան , իրաւունքի
Աթուղ է յաւիտեան :
- 2 Օրհնեալ ըլլայ քու սուրբ անուն ,
Ողորմութիւն ունիս •
Հաւատարիմ է քու խոստումն
Հընար չէ որ ծըռիս :
- 3 Ես մեղաւոր և չար , տըգէտ ,
Իրաւ եմ պատժապարտ •
Չուզեմ փախչիլ արդար ձեռքէդ ,
Խոնարհ մնամ 'ի խըրատ :
- 4 Շընորհք են ինձ այն պատիժներն
Որոնք գան 'ի գըթոյ •
Թող հոս սաստիկ գիս չարչարեն ,
Փրկուիմ գալիք պատժոյ :
- 5 Ուրախ եմ արդ՝ որչափ տանջուիմ ,
Ձի Տէրըս է գըթած •
Ձիս սէրն առատ աստուածային
Սրբեւ է կամք ըրած :

6 Տըկար հաւատք ունիմ դիտես ,
 Տէր , վշտակրիս օգնէ .
 Կը հաւատամ փրկչիդ միշտ ես ,
 Զիս դըժոխքէն փրկէ :

228 Ասորո-ժոյ կամայն հոյսորակէլ (6, 6, 8, 6) :

1 Ի՞նչ խոր քու խորհուրդներն ,
 Իմ խելքըս չըհասնիր .
 Բայց դուն ինչ որ կ'ընես , ուլ Տէր ,
 Բարի է սիրալիր :

2 Կը փափաքիմ ըլլալ
 Ազատ ամէն չարէ ,
 Փորձանք դըլխէս պակաս չըլլար ,
 Զի քեզ հաճոյ այն է :

3 Ինձ արդեւքներ կան շատ
 Գործքիդ մէջ աշխատիլ .
 Որչափ կրնամ , ընեմ զըլարթ ,
 Պարտիմ քեզ հնազանդիլ :

4 Ինչո՞ւ իմ աղօթքներս
 Անպատասխան ըլլան .
 Ար հաճելին առջիդ սյսպէս ,
 Պէտք է ես դո՛հ ըլլամ :

- 5 Յոյժ կ'աղաչեմ, Տէր, քեզ,
 Լից զիս քոյդ շընորհքով.
 «Քու կամքդ ըլլայ ինչ որ ընես»,
 Ըսեմ ես դո՛հ սըրտով:

229 Սրբոյ օրինակը . (8, 7) :

- 1 Տուր ինձ հաւատոյ թևերը,
 Որ թռչիմ ու վեր ելլեմ.
 Երջանիկ անթիւ սուրբերը,
 Երկնաւոր փառքն այ տեսնեմ:
- 2 Հոս երբեմն իրենց մահիճը
 Արցունքով կը թրջէին,
 Եւ մեղացն ու փորձութեանցը
 Դէմ կը պատերազմէին:
- 3 «Ո՞ւսկից էր ձեր յաղթութիւնը»,
 Հարցընեմ, ալ միաբան
 Յաղթանակն ու փրկութիւնը
 Յիսուսի խաչին կու տան:
- 4 Դիտեցին անոր քայլերը,
 Եւ անոնց հետևեցան.
 Մինչև որ երկնաւորները՝
 Իր սուրբ հանդստեան հասան:

5 ԳՈՆՈՒԹԻՒՆ քեզի, մեր Տէրը,
 Քու քայլերը մեզ կ'ուզեն,
 Եւ վրկաներուդ խումբերը
 Նոյն ճամբան կը ցուցնեն :



ԱՐԴԱՐՆԵՐՈՒՆ ԵՐԱՆՈՒԹԻՒՆՆ

ՈՒ

ԶԱՐԵՐՈՒՆ ԹՇՈՒԱՌՈՒԹԻՒՆԸ

230 Բարէ և զար ճարդոց արբերութիւնը .
Սաղ. Ա. (8) :

- 1 Ճշմարտապէս երանելի
Միայն ան մարդը թող ըսուի ,
Որ չարերուն ճամբան չերթար ,
Ծաղրաբանից հետ չըկենար :
- 2 Այլ սուրբ օրէնքը կը սիրէ ,
Անոր վրայ միշտ կը մըտածէ՝
Տէրոջը կամքը սորվելու ,
Եւ զանիկայ կատարելու :
- 3 Իրաւ ան պիտի նըմանի
Ջուրի քով տնկըւած ծառի ,
Որ անպակաս պըտուղ կու տայ ,
Տէրէն ալ պիտի չըչորնայ :
- 4 Ամբարիչտները այնպէս չեն .
Եհովային բարկութենէն
Անոնք յանկարծ պիտի ցրուին՝
Նըման հովէ ցրուած շիւղին :

5 Թող ամբարիշտը չը յուսայ
 Դատաստանին մէջ որ կենայ .
 Զի Տէրն արդարը կը սիրէ ,
 Բայց չարը բընաջինջ կ'ընէ :

231 Աստուծոյ ծառաներուն աղանձութիւնը .
 Սաղ. ՃԻԱ. (7) :

1 Ես աչքերս ուղղեմ պիտի
 Դէպ ան լեռներուն՝ ուրկէ
 Օգնութիւն ինձ կը հասնի ,
 Զի միայն Տէրն ինձ կ'օգնէ :

2 Ան քու ոտքըդ չըսարսեր ,
 Պահապանդ է միշտ հսկող .
 Զի բընաւ չըմբրաբեր
 Իր ծառայքը պահպանող :

3 Ան քեզի է միշտ պահակ ,
 Քու աջ կողմդ է հովանի .
 Ոչ լուսին , ոչ արեգակ
 Տալ կընան վընաս քեզի :

4 Տէրն չարէն քեզ կը փրկէ ,
 Քու անձիդ է պահապան .
 Մուտ և ելքըդ կը պահէ
 Այժմ և մինչև յաւիտեան :

232 Ասորի-ձօ՛ղ վախճանների օրհնեալ են . Սաղ .
ԿԷ . (8) :

- 1 Աստուած, գըլթա ու մեզ օրհնէ ,
Լոյսդ երեսաց մեր վրայ ծագէ .
Եւ փրկութեան ուղիդ ճամբան
Ամէն ազգ թող շուտ ճանաչէ :
- 2 Տէր , քեզ փառք տան ժողովուրդներ ,
Ուրախանան , ցնծան ազգեր .
Զի դուն շիտակ պիտի դատես ,
Առաջնորդես ազգաց , ով Տէր :
- 3 Երկիրն պըտուղ պիտի բերէ ,
Եւ մեր Աստուածն ըզմեզ օրհնէ .
Եւ աշխարհիս ամէն ծայրեր
Պիտի դողան , վախնան անկէ :

233 Ասորի-աձ զղջացողներուն ողորձութիւն է՝ ընէ .
Սաղ . ՃԷ . (8) :

- 1 Տէրն օրհնեցէք . ան է բարի ,
Իր գըլթութիւնն է յաւիտեան .
Ասանկ ըսեն մարդիկ երկրի ,
Որ Տէրովմով փրկըւեցան :

- 2 Չար մարդիկներ դէմ դընելով,
Տէրոջ խորհուրդն անարդեցին .
Անոր համար ցածցան շուտով,
Եւ օղնական մը շունէին :
- 3 Ի մէջ վշտաց Տէրն կանչեցին,
Տառապանքէն զանոնք փրկեց .
Տէրն կտորտեց կապանքներնին,
Մահուան շուքէն զանոնք հանեց :
- 4 Թող Տէրոջմէն միշտ դոհանան
Ամէն մարդոց աչաց առջին .
Տէրոջ հրաշքներն ողորմութեան
Թող յաւիտեան փառաւորուին :
- 5 Ով որ նաւով ճամբայ կ'ընէ
Եւ առուտուր ծովու վըրայ,
Տէրոջ դործքերն նա կը տեսնէ,
Եւ իր հրաշքներն հոն կ'իմանայ :
- 6 Արդար մարդիկ պիտի խնդան,
Չար մարդ բերանն պիտի դոցէ .
Մարդ իմաստուն մինչ յաւիտեան
Պիտի վախնայ ու Տէրն դովէ :

234 Ասորո՞՞նք խաչաորո՞ւմիւնք . Սաղ . ԻԴ .
(8) :

- 1 Տէրոջ լեռն . ո՞վ պիտի ելլայ ,
Սուրբ տեղը ո՞վ պիտի կենայ .
Ձեռքով , սրտով մաքուր եղողն ,
Սուտ չըճանչցող , երգում չընողն :
- 2 Ան կ'ստանայ իր Տէրոջմէն
Սուրբ օրհնութիւնն ամէն ատեն .
Եւ Աստուծմէն իր փրկութեան
Ձըրի շընորհք արդարութեան :
- 3 Վեր համբարձէք , ով սուրբ դռներ ,
Որ ներս մտնէ փառաց մեծ Տէր .
Ո՞վ է փառաց աս թագաւոր .
Զօրաց Տէրն է , Աստուած հըզօր :

235 Ասորո՞՞նք յոսացողներուն ապահովումիւնք .
Սաղ . ՃԻԵ . (10) :

1

Այն որ , Տէր , սրտովն քեզի կը յուսայ ,
Նըման Սիօնի հաստատ կը մընայ .
Լեռան մը պէս իր յուսոյն առարկան
կարող չէն շարժել դարերն ապագայ :

2

Ինչպէս որ լեռներն են շրջապատած
 Երուսաղէմայ քաղաք գերապանծ,
 Այնպէս ալ Աստուած մինչև յաւիտեան
 Իր ժողովուրդին չորս կողմն է պատած:

3

Ո՛վ Տէր, դուն բարիք ըրէ բարիին,
 Ու նաև սրտով ուղիղ եղողին.
 Սակայն այն ամէնք որ Տէրը կ'ատեն,
 Անոր երեսէն պիտի մերժուին:

4

Դուն, Տէր, կը ջնջես ազգերն անօրէն,
 Որոնք չարութիւնն առջիդ կը դործեն.
 Բայց կեանք մը անդորր ըրեր էս պատրաստ
 Քու խօսքըդ սիրող սրբոցդ համօրէն:

236 Տերը երէն յայտնուեալ էր կ'աշտի . Սաղ. ՃԻԶ. (8):

- 1 Երբոր դարձուց մեր Տէր Աստուած
 վատ գերութիւնն իր Սիօնի,
 Յայնժամ եղանք մը խիթարուած,
 Նըմանեցանք երազողի:
- 2 Մենք ան ատեն ուրախ լեզուով
 երգ երգեցինք մեծ ցնծութեան.
 Ազգերն ըսին մէկ բերանով,
 Թէ Տէրն ասոնց ըրաւ մեծ բան:

3 Իրաւ Աստուած մեզի համար
Մեծ, սխրալի բաներ ըրաւ .
Ուրախ եղանք որ Տէրն արդար
Ազատութիւն մեզի տրաւ :

4 Արցունքներով սերմ ցանողներ
Ցնծութիւնով պիտի հնձեն .
Ողբով, լալով սերմ տանողներ
Խնդութիւնով պիտի ժողվեն :

237 Աստուծոյ վսիմալուն և անոր շարայելան
Երանուիւնը . Սաղ . ՃԻԸ . (8, 6) :

1 Բիւր երանի Տէրոջ երկիւղն
Կըրող ամէն մարդուն .
Որ կը քննեն անոր շաւիղն,
Ըզգոյշ են վարքերնուն :

2 Զի ան ատեն պիտի ուտես
Վաստակըդ քու ձեռաց .
Եւ ապրելով երջանկապէս՝
Կ'ըլլաս միշտ յաջողուած :

3 Ահա այսպէս մարդ կ'օրհնուի,
Երբ Տէրոջմէ վախնայ .
Զաւկիդ զաւակն տեսնես պիտի,
Եւ կեանքդ իսողաղ կ'ըլլայ :

238 Տերը շեղանդեր է եր ժողովուրդին . Սաղ . ՃԻԹ . (7) :

- 1 Իսրայէլն արդ թող ըսէ ,
 Իմ մանկութենէս հետէ
 Շատ անգամ դիւ նեղեցին ,
 Բայց ինձի չըյաղթեցին :
- 2 Հերկողներ դիւ հերկեցին ,
 Ակօսնին երկընցուցին .
 Տէրն արդար է . ան դիտեց ,
 Չըւաննին ան կտորտեց :
- 3 Ատողներն սուրբ Սիօնի
 Ամօթով լեցունին պիտի .
 Տանիքին խոտին նըման
 Չորնալով կը փճանան .

239 Չարերուն խնամք չե՞նալ . Սաղ . ԼԶ . (8) :

- 1 Իմին սրտիւ ըսել կու տայ
 Չար նենգութիւն մեղաւորին ,
 Թէ Աստուծոյ երկիւղն չըկայ
 Անոր հողւոյն աչաց առջին :

- 2 Իր մահիճին մէջ կը փնտռէ
Ծուռ անխրաւ նոր ճամբաներ ,
Մոլի գործքեր կը հընարէ ,
Եւ զինք չարէն ետ չըքաշեր :
- 3 Ո՛վ Տէր Աստուած ճշմարտութեան ,
Ողորմութիւնդ է գերազանց ,
Արդարութիւնդ լեռան նըման ,
Զի դուն եղար Փրկիչ մարդկանց :
- 4 Տէր , գըթութիւնդ է անսահման ,
Քու քովըդ կայ աղբիւր կեանքի .
Քու թեերուդ պաշտպանութեան
Հաւատացեալն կ'ապաւինի :

240 Չարերուն ահաւոր վեճակը . Սաղ . Խթ . (8) :

- 1 Մըտիկ ըրէք , ամէն ազգեր ,
Եւ աշխարհիւ բընակիչներ ,
Բոլոր հարուստ , ազքատ մարդիկ ,
Ազնըւական նաև ուամիկ ,
- 2 Իրենց ուժին յուսացողներ ,
Հարըստութեամբ պարծենցողներ ,
Մարդ չէ կարող եղբայրն փրկել ,
Եւ կամ փրկանք հատուցանել :

- 3 Անոնք այսպէս խորհուրդ ունին ,
 Թէ յաւիտեան պիտի ապրին ,
 Իրենց տուներն պիտի մընան ,
 Անուններնին քաղքի կու տան :
- 4 Բայց մարդ պատուոյ մէջ չըմընար ,
 Խեղճ անասնոց կ'ըլլայ հաւասար .
 Երբոր չընարեր Տէրոջ ճամբան ,
 Անոր Սուրբ Խօսքն և պատուիրան :
- 5 Թէ և չար մարդն հարըստանայ ,
 Եւ իր տունին վառքն ալ շատնայ ,
 Դուն մի վախնար՝ զի երբ մեռնի ,
 Իր հետ ոչինչ պիտի տանի :
- 6 Սակայն Աստուած պիտի փրկէ
 Իմին հոգիս չար մահուանէ .
 Քանզի Տէր իմ զիս ընդունեց ,
 Գրաւն փրկութեան ինձի շնորհեց :

241 Աստուած չարերուն դէմ է . Սաղ. ԴԲ. (7) :

- 1 Սուրբ անուանըդ , ուլ Աստուած ,
 Միշտ երդեղն է շատ բարի .
 Գըթութիւնդ , Տէր ոլորմած ,
 Թող գիշեր ցորեկ դովուի :

- 2 Տէր , դորժքերըդ են շատ մեծ ,
 Խորհուրդներըդ շատ խորին .
 Շնորհք փրկչին հոգիս փրկեց ,
 Բայց չարերը կը փլչին :
- 3 Այլ , ով Տէր , դուն շատ բարձր ես ,
 Թշնամիքըդ կը ցրուին .
 Տէր , իմ ոյժըս շատցունես ,
 Ձի ես հաւտացի փրկչին :
- 4 Տանըդ մէջը տնկուած ,
 Արդարները կը ծաղկին .
 Հետևողք սուրբ օրինաց
 կը մեծնան միշտ և կ'աճին :
- 5 Ծերութեան մէջ պողաբեր ,
 Գէր , կանաչ ալ կը մընան ,
 Որ պատմեն թէ Սուրբ է Տէր ,
 Անձանօթ է չարութեան :



242 Օձեւը եւ Բեռքերէ . Սաղ . Բ . (8) .

1 Աղգերն ինչո՞ւ խռոված շարժին .
 Ինչո՞ւ Հրէայք միտարանին .
 Հրէայ եւ հեթանոս կ'ուզեն
 Որ Տէրն ու իր Օձեալն մերժեն :

2 Ինչո՞ւ իշխանք մէկտեղ խորհին ,
 Եւ իրարու ինչո՞ւ խօսին ,
 Ըսեն , Տէրոջ կապերն կտարենք ,
 Ու լուծն ամէնքս մեզմէ ձրգենք :

3 Երկինք նստողը կը տեսնէ .
 Բոլոր ջանքերն ինք կ'անարգէ .
 Օձեալն կարող է յաղթելու ,
 Եւ Սիօնի մէջ իշխելու :

4 Ով իշխաններ , խըրատուեցէք ,
 Տէրոջն առջևը դողացէք .
 Զըլլայ որ շուտ կորուստ հասնի ,
 Երբ բարկութիւնը բորբոքի :

5 Երանելի և ապահով
Միայն անոնք են, որ սրտով
Փրկիչն ընտրած են ապաստան,
Անոր շնորհացը կը յուսան:

243 Երբեք որոշան չարք (7, 6):

1 Թող Սիօնի որդիքը
Ուրախութեամբ ցնծան.
Պիտի անցնին չարիքը,
Բարի օրեր կու դան.
Ահա ետքի օրերը
Լերանց գլխուն վըրայ
Սիօն Տէրօջը լեռը
Պիտի խիստ բարձրանայ:

2 Ազգաց շատ բազմութիւնը
Անոր պիտի դիմեն.
“Երթանք Տէրօջը տունը”
Պիտ’ իրարու ըսեն,
“Ելլենք Տէրօջը լեռը,
Ինք զինք մեզի յայտնէ.
Աստուած իր ճամբաները
Մեզի սորվեցընէ”:

3 Մարդիկ իրենց սուրերը
 Խօփեր պիտի շինեն,
 Նիզակներուն աէգերը
 Յօտոցներու փոխեն.
 Ոխով եղբարք եղբարց վրայ
 Պիտի չը յարձակին.
 Պատերազմին արհեստը
 Բընաւ ալ չըսորվին:

4 Ո՛հ թէ մեր աչքն այս յոյսը
 Ի գործ դրուած տեսնէ,
 Եւ Սիօնին սուրբ լոյսը
 Սշխարհք լուսաւորէ.
 Յայնժամ Տէրոջ տաճարը
 Յնծմամբ երկըրպագենք.
 Ալ ցրուեցաւ խաւարը,
 Անոր լուսոյն քալենք:

244 Սեծի տրուելու (11, 10):

1

Ով Սիօնի բերկրալից արշալոյսը,
 Թանձրը խաւարը և սուգը կ'անցնի.
 Հիմա մարդոց ցնծութիւնը և յոյսը,
 Եւ անքն անխաճան մեռելոց կը տրուի:

2

ՈՎ Սիօնի բերկրալից արշալոյսը,
 Հին դարերու մէջ որ գուշակուեցաւ,
 Մարգարէից խօսքին պէս, ահա կոյսը
 Բէթլէհեմի մէջ Փրկիչը ծընաւ :

3

Գերութենէն կը դառնան գերիները,
 Ծառայութեանը տունէն կ'ազատին .
 Պատը քակուած է, և հեթանոսները
 Հիմա Հրէից հետ մէկտեղ կը բերկրին :

4

Անապատին մէջ՝ շուշանը և վարդը,
 Չոր երկրին մէջ կ'երևին վրտակներ .
 Պատերազմներն դադարած են, և մարդը
 Իր ընկերին դէմ ա՛լ կուր չըհաներ :

5

Ի՞նչ կը լըսենք . հեռաւոր կղզիները
 Փառք Աստուծոյ 'ի բարձունքս՝ կ'ըսեն .
 Մենք անոնց հետ լըսել տանք մեր ձայները,
 Փառք Աստուծոյ յաւիտեանքս . Ամէն :

245 “Ե- իսպէց զանիւս” : Յայտ . Ի . 2 .
 (8 . 6 տող) :

1 Տէրոջ խոստմունքն է թէ կու գան
 Անանկ օրեր, որ Սատանան
 Պիտի կապուի անքակտելի
 Շղթաներով, դըժոխք ձրգուի :

Ուրախացիր, ով իմ հողիս,
Որ բեկրալի յոյսեր ունիս:

2 Յայնժամ մարդիկ երկրիս բոլոր
Իբրև որդիք մէկ հօր ու մօր
Սիրով մէկտեղ բընակելով՝
ԶԱստուած պիտի օրհնեն սրտով:
Ուրախացիր, Եւայն:

3 Մեղքն աշխարհէս պիտի վերնայ,
Սուրբ սէրն անոր տեղ պիտի դայ,
Որով յաւերժ պիտի սիրուին
Հայրն ու Որդին և Սուրբ Հոգին:
Ուրախացիր, Եւայն:

4 Քու խոստմունքիդ ապաւինած
Այս յոյսն ունիմ, ով Տէր Աստուած.
Հաւատարիմ ըլլալդ գիտեմ,
Միայն շուտ գալըդ կը խնդրեմ:
Ուրախացիր, Եւայն:

246 Քրիստոսի յանդէնակն Մտաորոհիւնը .
Սաղ . ԽԵ . (10) :

1 Բարի խօսքերով իմ սիրտըս կ'եմիլի,
Պիտի արդ գովէ զանուն Արքայի .
Լեզուս շուտ գըրող գըրչի է նըման,
Եւ միշտ քարոզող սուրբ ճշմարտութեան:

- 2 Քեզի պէս աղուոր չըկայ մարդ բընաւ ,
 Շրթունքիդ վըրայ շընորհք թափեցաւ .
 Անոր համար քեզ Տէրոջը բերան
 Օրհնեց բարձրացուց մինչև յաւիտեան :

- 3 Ով դուն Տէր հըզօր , սուրդ մէջքըդ կապէ ,
 Ու քու մեծ փառքովդ մեր մէջը փայլէ .
 Քուկին զօրաւոր խօսքովդ սրբազան
 Ամէն ժողովուրդ քու տակըդ կ'ըյնան :

- 4 Աստուած , քու աթոռդ է մինչ յաւիտեան ,
 Քուկին տէրութիւնդ է միշտ անսահման .
 Քու սուրբ դաւազանդ մարդոց է ուղղիչ ,
 Արդար դաւազան՝ մարդկան ազատիչ :

- 5 Դուն զարդարութիւն խիստ շատ կը սիրես
 Ամէն չար դործքերն կ'ատես , կը հերքես .
 Անոր համար քեզ , ով Տէր Աստուած մեր ,
 Աստուածըդ օծեց ամէն մարդէ վեր :

- 6 Քուկին սուրբ անունդ ամէն ազգաց մէջ
 Պիտի հռչակուի միշտ և մինչև վերջ .
 Եւ աս պատճառաւ ազգերըն ամէն
 Մինչև յաւիտեան պիտի քեզ դովեն :

247 Սէնթի 1-րդ. Սաղ. ԽԸ. (10):

1

Տէրն է խիստ շատ մեծ, ինքն է միշտ օրհնած,
 Եւ մեր Աստուծոյ քաղքին մէջ նստած.
 Յնժում աշխարհիս է լեռն Սիօնին,
 Անկէ կու տայ Տէր շընորհք՝ խնդրողին:

2

Ինտոր լըսեցինք՝ անանկ ալ տեսանք,
 Բոլոր աշխարհի Սիօնն է պարծանք.
 Քանցի հոն նստած է մեր մեծ Արքան,
 Հիմնեց զանիկայ Աստուած յաւիտեան:

3

Քու ողորմութիւնդ մեզի շնորհեցիր,
 Քու սուրբ տաճարէդ դուն մեզ փրկեցիր.
 Ամէն տեղ անուանդ տրուի դովութիւն,
 Արդարութիւնով աջ ձեռքդ է լեցուն:

4

Մեր սուրբ լեռն Սիօն ուրախ թող ըլլայ,
 Որ մարդ փրկութիւն շընորհք կը ստանայ.
 Զի Տէրն շընորհեց մեզ արդարութիւն,
 Ու մեղաւորին մեղաց քաւութիւն:

5

Ան է մեր Աստուածն միշտ և յաւիտեան,
 Հովիւ առաջնորդ մինչև ՚ի վախճան.
 Անով կը ստանանք մենք մեր փրկութիւն,
 Որ ինք խոստացաւ իր ծառաներուն:

248 Եկեղեցւոյն համար աղօթք . Սաղ . 2 . (8) :

- 1 Ո՛վ քաջ Հովիւ Իսրայէլի ,
Եւ Յովսեփին առաջնորդող ,
Լըսէ ու քեզ ցուցուր մեզի ,
Քերովբէից վըրան նստող :
- 2 Ո՛վ Տէր Աստուած , դուն մեզ դարձուր ,
Երեսդ յայտնէ որ մենք ապրինք .
Ո՛վ Տէր զօրաց , մեզի շնորհք տուր .
Մի բարկանար՝ երբ պաղատինք :
- 3 Եղևպտոսէն այդի բերիւր ,
Զայն անկեցիւր , աշխարհ լեցուց .
Անոր ըստուերն ծածկեց զերկիր ,
Մինչև 'ի ծով ճիւղ երկնցուց :
- 4 Ինչո՞ւ ցանկերն դուն փլցուցիր ,
Որ անցնողներ զայն փրցունեն .
Խողն անտառի և դազաններ
Ապականեն զայն և ուտեն :
- 5 Քեզ կ'աղաչեմ , Տէր բոլորին ,
Մեզ երկինքէն նայէ գըլթովդ .
Եւ այցելու եղիր որթին ,
Որ անկըւած է քու ձեռքովդ :

249 Քրիստոսի Լուսորոշեանը համար ազնիւ :

(8 · 8 տող) :

- 1 Զարթիր , զարթիր , աջ տիրական ,
Շարժէ ուժովըդ զազգ մարդկան .
Որ զօրութիւնդ աշխարհ տեսնէ ,
Եւ յաղթութիւնդ դովաբանէ :
Ես Եհովայ եմ Տէր Աստուած ,
Գոչէ թող ձայնդ հեթանոսաց .
Ձայնէդ մեհեանք թող կործանին ,
Եւ պիղծ սեղանք թող տապալին :

- 2 Մարդու արիւն ալ չթափուի ,
Ունայն զոհեր չըլլան մեղքի .
Որդիք մարդկան ապաւինին
Մեղաւորաց միակ փրկչին .
Յոյց զօրութիւնդ , աջ տիրական ,
Որ չարութիւնք բնաջինջ ըլլան .
Ճշմարտութեանդ լոյսն ալ թող դայ ,
Որ սրտութիւն անհետ ըլլայ :

- 3 Բեր Սիօնին յաջող ատենն ,
Ժողով հօտիդ ցրուածն ամէն .
Թող աչքերնիս տեսնեն ապշած՝
Բոլոր աշխարհ մէկ հօտ եղած .

Ամենակալ բարի Աստուած ,
 Խրկէ շընորհք բոլոր մարդկանց .
 Որ այն յաղթէ դիմամարտից ,
 Տէրէ Քրիստոս , Տէրն ամենից :

250 Քրիստոսի Լազարոս-Դէան Կարածուիւք .
 Սաղ . ՀԲ . (8) :

1 Ո՛վ Տէր Աստուած արդարութեան ,
 Արդարութիւնդ տուր Արքային .
 Պիտի ընէ նա դատաստան ,
 Եւ իրաւունք ժողովուրդին :

2 Մարդիկ պիտի վախնան անկէ ,
 Արև , լուսին քանի որ կան .
 Ազգէ ազգ ալ պիտի տևէ
 Իր զօրութեանըն գաւազան :

3 Պիտի իջնէ անձրևի պէս՝
 Հնձած՝ կտրած խոտին վըրայ .
 Երկիր թրջող շաղերուն պէս
 Պիտի ցօղէ դէտնի վըրայ :

4 Այն օրն արդարն պիտի ծաղկի
 Խաղաղութիւնն ալ միշտ տևէ .
 Տերամբ ամէն ազգ օրհնելի ,
 Ինք յաւիտեան պիտի տիրէ :

5 Անուն փրկչին փառաւորուի ,
 Եւ յաւիտեան մարդիկ օրհնեն ,
 Անոր փառքոյն երկիր լեցուի ,
 Բոլոր ազգերն ըսեն , Ամէն :

251 Նոյն . Սաղ . ՀԲ . (6, 6, 6, 6, 8, 8) :

1 Տէր , հիմա մեր փրկչին
 Արքայութիւնը սուր ,
 Շուտով Տէր Յիսուսին
 Աթոռը բարձրացուր .

Որ ինք միայն է արժանի ,
 Տիեզերաց աթոռն նստի :

2 Անհուն արդարութեամբ
 Պիտի կառավարէ ,
 Եւ մեծ խաղաղութեամբ
 Մեր վրայ թագաւորէ ,
 Տընանկը շուտ ազատելով
 Եւ բռնաւորը ջարդելով :

3 Աղօթք իրեն համար
 Պիտի միշտ մատուցուի ,
 Անունն ալ անդադար
 Պիտի փառաւորուի .
 Արքայութիւնն պիտի մընայ ,
 Մինչև որ ալ լուսին չըլլայ :

4 Շաղի կամ անձրևի
 Նըման պիտի տեղայ .
 Իր շնորհքն պիտի թափի
 Հնձուած խոտին վըրայ .
 Երկրիս պըսուզն պիտի ելլէ ,
 Ու մեր Աստուածը մեզ օրհնէ :

5 Դարձեալ թող հրեշտակներն
 Երկրիս վրայ երևնան ,
 Եւ մահկանացուներն
 Թող բարձրաձայն ցնծան .
 «Փառք 'ի բարձունըս» թող երգեն ,
 Բոլոր երկիրն ըսէ , Ամէն :

252 Քրիստոսի Լազարոս-Լիւնը հօր . (8) :

1 Հասաւ ահա օրհնեալ ատեն ,
 Աւետարան աշխարհ ամէն
 Կը քարոզուի մաքուր և պարզ ,
 Որ փրկըւին մեղաւորներն :

2 Անցաւ խաւար ժամանակներն ,
 Զախճախեցաւ Նեռին թևերն .
 Ազատութիւն կը տարածուի ,
 Կ'ուրախանան ամէն ազգերն :

- 3 Հազարամեայն հիմա մօտ է ,
Աշխատութեան ճիշտ ատենն է .
Ո՛վ Քրիստոնեայք , ժլր , ջերմեռանդ
Եղէք , տըւէք ինչ որ պէտք է :
- 4 Քուկդ է այս դործ , ո՛վ Տէր զօրաց ,
Քեզ կը մաղթենք բոլոր սրտանց .
Տուր Սուրբ Հոգիդ եկեղեցւոյդ՝
Գործել խնամով միշտ ձեւքն 'ի մաճ :
- 5 Շատ պատրաստէ մըշակս անկեղծ՝
Աշխատելու հունձքիդ 'ի մէջ .
Լցուի երկիր քա գիտութեամբ ,
Գոչեն մարդիկ , Քրիստոս տիրեց :

253 Աստուծոյ Բնութեանը հոգևոր . (8) :

- 1 Երկնի , երկրի Տէր թագաւոր ,
Արքայութիւնդ է հոգևոր .
Սուրբ Հոգիէդ որ չէ ծընած՝
Յարմար չէ նա , օտար անոր :
- 2 Աթոռըդ է արդարութիւն ,
Եւ օրէնքներդ միշտ սրբութիւն .
Ձեն մուտ դաներ սուրբ սահմաններդ
Ձրկանք , չարիք , ամբարշտութիւն :

- 3 Դուն աշխարհի լոյս ծագեցար ,
 Խաւարն քեզի հաղորդ չըլլար :
 Ճշմարտութեան ես թաղաւոր ,
 Երկնից մէջ սուտ՝ տեղ չըդտնար :
- 4 Արքայութիւնդ է սրբութիւն ,
 Եւ անլրդով խաղաղութիւն .
 Կրնա՞յ մտնել հոն որ սիրէ
 Մարմին , կիրքերն և պղծութիւն :
- 5 Արդ մենք ալ , Տէր , ենք մարմնաւոր ,
 Խնդրենք , ըրէ մեզ հոգևոր ,
 Արքայութեանդ ըրէ ժառանգ ,
 Եւ ողորմէ մարդկանց բոլոր :

254 Ա-ե-ր-ան-ին +արող-ի-ն-ը . (8) :

- 1 Պատուէր տըլաւ Փրկիչն մարդկան
 Բոլոր իրեն աշակերտաց ,
 Որ քարոզեն Աւետարան
 Ամէն երկիր , ամէն ազգաց :
- 2 Զայս պատուիրան դուն միշտ յիշէ ,
 Ո՛վ Քրիստոսի Եկեղեցի ,
 Խաչեալ Փրկիչն միշտ քարոզէ
 Անհաւատի : հեթանոսի :

3 Բոլոր աշխարհք փրկչին հաւտան ,
Անով դանեն յոյս , փրկութիւն .
Եւ հասկընան թէ նա միայն
Է կեանք , ճամբայ , ճշմարտութիւն :

4 Տէր , քու խօսքովդ լուսաւորէ
Ամէն մարդիկ բոլոր երկրի .
Բոլոր աշխարհքեղ ճանաչէ
Իբրև մէկ հօտ միոյ Հովուի :

5 Քու սուրբ խոստմունքդ յաւերժական
Մեղաւորներն դարձի բերեն .
Որ բերկրանօք քեզ յաւիտեան
Երկինքի մէջ փառաւորեն :

255 Աւետարանին Կարողութիւնը . (8 , 7 , 4) :

1 Յուդայի լերանց վրայովը
Աւետիս բերող կ'ելլէ .
Քաջալերական խօսքովը
Գերի Սիօնին կ'ըսէ ,
Քու Աստուածըդ
Հիմա լուծըդ կը քակէ :

- 2 Վայ , երկարեցա՞ւ գիշերըդ ,
 Քու ցաւերըդ բազմացա՞ն .
 Քաշուեցա՞ն բարեկամներըդ ,
 Թշնամիք դուռովացա՞ն .
 Քաջ լեր հիմա ,
 Բարիքի օրեր հասան :
- 3 Քու արևդ հիմա ծագած է ,
 Գիշերուան խաւարն անցաւ .
 Հալածիչըդ ամբշցած է ,
 Թագաւորըդ բարձրացաւ .
 Յաղթանակըդ
 Հիմա կատարեալ եղաւ :

256 Ա-ե-ր-ար-ան-ը + ար-ող-ղ-ն-ե-ր-ո-ւ-ն հաս-ար ար-ը-ն-ի .
 (8 , 6) :

- 1 Տէր , քաղցրութեամբ վերէն նայէ
 Քու քարողիչներուդ .
 Անոնց սիրտ տուր , և միշտ օգնէ
 Շնորհքով քու Սուրբ Հոգւոյդ :
- 2 Ազդու ձայնով թող քարողեն
 Աւետարան Փրկչիդ .
 Բոլոր աշխարհս քեզ դարձունեն ,
 Մեծնայ Եկեղեցիդ :

3 Ամէն ազգաց հասկըցունեն ,
 Թէ լոկ Յիսուս Փրկիչ
 Մեզի համար էջ երկինքէն ,
 Եւ է մեղաց քաւիչ :

4 Ո՛վ Տէր , թէ որ հունձքեր շատ կան ,
 Եւ խիստ քիչ մը շակներ ,
 Ոյժ տուր անոնց քարոզութեան ,
 Ըլլան շատ պտղաբեր :

5 Փրկչիդ անուն , անհուն ալ սէր
 Ամէն մարդիկ ճանչնան .
 Որով ամէն կըռապաշտներ
 Շուտով քեզի դառնան :

257 “Երանի յերե որ առն ըրերն տի կը ց-
 նէ” . (6 , 6 , 8 , 6) :

1 Առտուն քու սերմից ցանէ ,
 Զէս օրն ու իրիկունն .
 Առատ չեռքով միշտ տարածէ
 Կենաց տեղեկութիւնն :

2 Անշուշտ պիտի բուսնի
 Կանանչ ու դեղեցիկ .
 Խոտը , հասկը , ցորենն ալ լի ,
 Հասուն , բիւրապատիկ :

3 Փուճ տեղ դուն չես կրնար
 Սուրբ սերմը սերմանել .
 Կարող է Տէրը և յօժար
 Պըտուղն յառաջ բերել :

4 Ուստի ցանէ յուսով
 Խօսքը ճշմարտութեան ,
 Որ օրն հնճոց փառաց թագով
 Երգես երգ ցնծութեան :

258 Առաւելահան երգ . (7 , 6 . 8 տող) :

* 1 Երկրիս ամէն ծայրերը
 Մեզի կ'աղաղակեն .
 Մութի մէջ նատողները
 Դառն արցունքով կ'ըսեն ,
 Տուէք մեզի ան լոյսը ,
 Ահա կը կորսըւինք .
 Ճանչնանք մեր մեծ Փրկիչը ,
 Որ յաւիտեան ապրինք :

- 2 Հնդկաստանի հովերը
 Թող քաղցրաշունչ փրչեն .
 Եւ հոտաւէտ լեռները
 Թող համեմներ բուրեն .
 Թէպէտ և բընութիւնը
 Ազնիւ է և պայծառ ,
 Ահա խեղճ մարդկութիւնը
 Ինկած է և թշուառ :
- 3 Ամէն բան հոն անոյշ է ,
 Սիրուն , բայց ի՞չ օգուտ
 Որ հեթանոսն ապուշ է ,
 Ու չարագործ և սուտ .
 Իր Արարիչ Աստուածը
 Բընաւ ալ չըճանչնար .
 Եւ ի՞նչ է իր պաշտածը .
 Անխօս , կոյր փայտ և քար :
- 4 Դուք որ լուսաւորուած էք
 Լուսով մը երկինքէն ,
 Ճշմարտութիւն սորված էք
 Մեր մարդասէր Փրկչէն ,
 Կրնա՞ք կենաց ճըրագը
 Եղբայրներնէդ պահել .
 Կրնա՞ք մարդոց որդիքը
 Անյոյս կորուստ խրկել :

- 5 Ոչ, այլ ձեր ունեցածը
 Կարօտներուն տըէք •
 Եւ ձեր ձըրի առածը
 Ձըրի հաղորդեցէք •
 Մեծ փրկութեանը լուրը
 Փութով թող քարոզուի •
 Մեծ փրկութեանը ջուրը
 Ծարւողներուն տրուի :
- 6 Ով դուք, երկնից հովերը,
 Սւետարան տարէք •
 Եւ դուք, ծովուց ջուրերը,
 Մնոր ճամբայ ըրէք •
 Շուտով երկրիս ծայրերը
 Թող բարձրաձայն ցնծան •
 Կոտրեն բոլոր ազգերը
 Մոլորութեան շղթան :

259 Հեթանոսներն աղաղակ • (6, 5) :

- 1 Մեզի ողբի ձայն մը՝
 Երկրի ծայրերէն,
 Սուգի աղաղակ մը
 Կու գայ ազգերէն •
 Կ'ըսէ, Եղբայրներ մեր,
 Մեզի շուտ եկէք •
 Խիստ շատ են ցաւերն մեր,
 Մեզի օգնեցէք :

2 Մեղքով խիստ կապուած ենք
 Ու դատապարտուած .

Մահուան մէջ նստած ենք
 Յոյսէն կտրըւած .

Մէկ անձ մը չըկայ ալ
 Մեզ մը խիթարող ,

Ըրած աղօթքնուս ալ
 Չըկայ միտք դընող :

3 Դուք որ Յիսուսինն էք ,
 Մեր ձայնն լըսեցէք .

Չըրի դուք առած էք ,
 Չըրի ալ տըւէք .

Ճամբան վրկութեանը
 Մեզ սորվեցուցէք ,

Մեղքի մեծ դարմանը
 Մեզի ճանչցուցէք :

4 Անմահ հոգիները
 կրակէն հանելու՝

Բողոր ձեր ջանքերը
 Արժան է տալու :

Արժաթ և ոսկի ալ
 Բնաւ մի խընայէք ,

Եւ ձեր անձերնիդ ալ
 կամաւ զոհեցէք :

Ե Կ Ե Ղ Ե Յ Ի Ն

260 Մաղթանո՛ք ընդհանուր Եկեղեցւոյ համար •
(8 • 8 տող) :

- 1 Եկեղեցիդ ընդհանրական
Որ քու սիրոյդ է առարկայ ,
Տէր իմ , շընորհքըդ հայրական
Յուցուր այսօր անոր վըրայ :
Աշակերտներըդ կ'աղօթեն
Մեծ հաւատքով ամէն տեղեր ,
Իրենց յոյսէն դատարկ չելլեն ,
Դուն , ով Յիսուս , կաց 'ի մէջ մեր :

- 2 Տէր , քու բանիդ խոստումն յիշէ ,
Եւ հաճեսձիր զայն կատարել .
Թող Սուրբ Հոգիդ մըխիթարէ ,
Սորվեցունէ ըղքեզ օրհնել .
Բացուին աչք մեր առ լոյս Փրկչիդ ,
Ու սիրտերնիս դարձուր , շխտէ .
Եւ աղօթող Եկեղեցիդ
Թող երջանիկ դար վայելէ :

- 3 Աւետարան թող տարածուի
 Մինչև երկրիս վերջին ծայրեր .
 Ամէն տեղ ալ լըսուի թող ձայն
 Նոյն օրհնութեան և նոյն երգեր :
 Եւ ժողովուրդք խիստ վայրենի
 Խաչին առջև դան ժողովին ,
 Պատիւ տան մեր անյաղթելի
 Թագաւորաց Թագաւորին :

261 ԲԵՆԵՎԵՆԻ ԵԿԵՂԵՑԻՆ՝ ԵՊԻՍԿՈՍՆ ԵՍՏՆԻՆ (8) :

- 1 ՈՎ ՏԵՐ , քու Սուրբ Եկեղեցիդ
 է մի միայն և անսասան .
 Ձի զայն հիմնեց քու Սուրբ Հոգիդ ,
 Առաջնորդող ճշմարտութեան :
- 2 ՈՎ ՏԵՐ , քու Սուրբ Եկեղեցիդ
 Ձը սըխալիր մինչ յաւիտեան ,
 Երբ հետևող է Սուրբ Խօսքիդ ,
 Եւ անձանօթ է սըտութեան :
- 3 ՈՎ ՏԵՐ , քու Սուրբ Եկեղեցիդ
 Քու Սուրբ անուամբդ է ժողոված .
 Հոն քարոզուի խօսք Սուրբ Գրքիդ ,
 Մարդկանց պատուէր հոն չէ մըտած :

- 4 Ով Տէր , քու Սուրբ Եկեղեցիդ
 Քաղքի անուամբ չէ որոշուած .
 Այլ կատարողն ըզխօսք Փրկչիդ՝
 Նա է անոր մէջ հաստատուած :
- 5 Տէր , մեզ պահէ յԵկեղեցիդ ,
 Ի սուրբ փարախ ընտրեալ դասին .
 Մեզ հասցունէ քու Սուրբ Հոգիդ
 Այն երանեալ յաղթականին :

262 Եկեղեցւոյն ապահովութիւնը ու փառքը , (7) :

- 1 Ով սուրբ հարսըն Քրիստոսի ,
 Նոր Սիօն Եկեղեցի .
 Միշտ Տէրով սէրն է քեզի ,
 Աջ թևն ալ քեզ հովանի :
- 2 Ինք Բարձրեալն կը պաշտպանէ ,
 Քեզ աչքին պէս կը սիրէ .
 Իր դըրժովը կ'ազատէ
 Չարիքէ , չարութենէ :
- 3 Փառաւոր բաներ կ'ըսեն
 Քու վըրադ՝ թէ Սուրբ ազգ են .
 Պարծանքով պիտի ըսեն ,
 Ասիկա է անոնցմէն :

- 4 Երբ քու գեղեցիկ պատկեր
 կը տեսնեն ամէն ազգեր ,
 կը զմայլին , կ'ըսեն , Ո՞ւր էր ,
 Բախտերնիս քեզի կցուէր :
- 5 Շատ ժողովուրդներ խումբով
 կը գիտեն քեզ ընծայով .
 Ձի ազրիւր մը կայ քու քով
 կենդանի յատակ ջուրով :

263 Մեր առ Եկեղեցին . Սաղ . ՃիԲ . (8) :


- 1 Ար խնդայի երբ կ'ըսէին ,
 Երթանք Տէրոջ տաճարն վրսեմ .
 Մեր ոտուըներն պիտի կայնին
 Քու գրանըդ մէջ , Երուսաղէմ :
- 2 Երուսաղէմ աղուոր շինուած ,
 Շիտակ , ողորկ քաղքի նրման .
 Տէրոջ ցեղերն հոն են ժողված ,
 Որ միշտ փառք տան Տէրոջ անուան :
- 3 Դուք խնդրեցէք խաղաղութիւն
 Երուսաղէմ քաղքին համար .
 Ու թող գտնեն յաջողութիւն
 Քեզ սիրողներն միշտ անդադար :

- 4 Եղբարցս համար պիտի ըսեմ,
 “Խաղաղութիւն ըլլայ քեզի” •
 Քեզ բարութիւն պիտի ուզեմ,
 Ձի Տունն Տէրոջ հոն կը կայնի :

264 Եկեղեցի՝ Աստուծոյ բնակարանն է • Սաղ • ՃԼԲ • (8) :

- 1 Ո՛վ Տէր Աստուած, Տէր բոլորին,
 Քու սուրբ տաճարդ մտնենք սիրով •
 Եւ սուրբ ոտքիդ պատուանդանին
 Երկրպագենք բոլոր սրտով :
- 2 Պաշտօնեաներդ թող միշտ հաղնին
 Արդարութիւն և ուղղութիւն •
 Եւ քու սուրբերդ թող միշտ հրճուին՝
 Քեզ երգելով սուրբ օրհնութիւն :
- 3 Աստուած երդում ըրաւ Դաւթի,
 Ճշմարտութեամբ է հաստատուած •
 “Գահիդ վըրայ պիտի նստի
 Որովայնիդ պըտուղն օրհնած” :
- 4 Պաշտօնեաներն պիտի հաղնին
 Իր փրկութիւնն աստուածական •
 Տէրոջ սուրբերն միշտ խնդաղին
 Պիտի երգեն երգ յաղթութեան :

5 Դաւթէն եղջիւր պիտի բուսնի,
Ուր տեղ որ է իմ սուրբ տաճար,
Ճըրագ պիտի պատրաստուի
Իմ Օծելոյս փառքին համար:



265 Տէրոնական օրը • (8 , 6) :

- 1 Այս է այն օրն որ Տէրն օրհնեց ,
Երկինքը թող ցնծայ •
Այս օրն իրեն սեպհականեց ,
Երկիրն ուրախանայ :
- 2 Այս օր մեր Տէրն սատանային
Յաղթեց , երբոր յարեաւ •
Ննջեցելոց երախայրին
Գերեզմանէն ելաւ :
- 3 Այս օր սուրբերն կը ժողվուին ,
Որ զինք սիրով յիշեն •
Իրենց փրկչովը կը զմայլին ,
Իր փառքը կը յայտնեն :
- 4 Ահա մեզ օրհնելու կու գայ
Մեծ Դաւիթին Որդին •
Յիսուս , ողջոյն քեզ , ովսաննա
Օծեալ թագաւորին :

266 ՆՉԷ. (6, 6, 8, 6) :

1 Ո՛վ Սուրբ Հայր դըթութեանց,
Դուն ողորմէ մեզի .

Խրկէ հիմա Հողիդ Հնորհաց
Այս օրըս տէրունի :

2 Քու շընորհքովդ մաքրէ
Մեր անմաքուր սրտեր .

Վասն Յիսուսի արդ ընդունէ
Զանկեղծ պաշտօնըս մեր :

3 Շընորհք ըրէ, ցոյց դուն
Սուրբ դէմքըդ փառաւոր .

Տէր, փրկութեանըդ ցնծութիւն,
Յոյժ կ'աղաչենք, մեզ տուր :

4 Մեր յոյսն միշտ առ քեզ է,
Դուն ես մեր փրկութիւն .

Այս սուրբ օրուան մէջ մեզ ներէ
Մեղացըս բաղմութիւն :

5 Ո՛վ վըշտակիր հողիս,
Չըգէ դուն աշխարհի

Բաներն, յանձնեմ Տէրոջս ես զիս,
Հանգիստ դտնես երկնի :

267 Տերունի օրն հաճելի . (8) :

- 1 Գործ հաճելի հողւոյս է , Տէր ,
կարդալ անուանդ օրհնութիւններ .
Աւտուն քու սէրդ գովաբանել ,
իր'կուն խօսքերդ ալ մըտածել :
- 2 Վայել է այս օրն հանգըստեան
Որ խորհուրդներս յերկինս ըլլան .
Քնար ներդաշնակ թող սիրտս ըլլայ՝
Տեառն օրհնութիւն երգել հիմա :
- 3 Սիրտս ցնծացաւ Տէրոջ համար ,
Իւր գործքն ու խօսքն փառաւորեալ .
Խիստ մեծ է գործըն փրկութեան ,
Տնօրէնութիւն իմաստութեան :
- 4 Թէ կատարեալ է փրկութիւնս ,
է պատուական երկնից բաժինս .
Թշնամիէս , որ է մեզք իմ ,
Ո՛հ , յաւիտեան ես կ'ազատուիմ :
- 5 Հոս ունեցած բաղձանքս բոլորն
Պիտի ըզգամ , տեսնեմ ես հոն .
Ամէն փափաքս լցուի պիտ' յոյժ ,
Սրտիս մտքիս գործն է անոյշ :

268 ԿԻՐԱԿԵ ԽՈՒՐ ՀԱՏՈՒՂԻՆՆ . (7) :

- 1 Կը սիրեամ զօրն տէրունի ,
 Զի Բարձրեալն ներկայ լինի .
 Գալ առջին արդ կը փութամ ,
 Որ իմ սիրտս Մնոր բանամ :
- 2 Կը լըսէ Աստուած բոլոր
 Մեր աղօթքն ամէն աւուր .
 Բայց այսօր մէկտեղ կու դան
 Իւր սուրբերն 'ի սրբարան :
- 3 Հրեշտակներն ալ բիւր թըռով
 Կը պատեն շուրջ զաթոռով .
 Մինչ յերկինս իրենց դասէն
 Փառք պատիւ վեր կ'ընծայեն :
- 4 Սերովբէք բազմութեամբ կան
 Արքային սուրբ պաշտաման .
 Փրկելոցն խումբ հրճուալից
 Օրհնութիւն տան ձայնակից :
- 5 Քարոզուի Աւետարան
 Այս օր , մեղք ներուած կ'ըլլան .
 Է հանգիստ յոգնածներուն ,
 Անմաքրոց ալ սրբութիւն :

6 Ո՛հ , սրտիս շատ սիրելի
Այս օրհնեալ օրն տէրունի •
Օր աղօթք մատուցուելու ,
Տէրն պատրաստ է լըսելու :

269 Երկրորդ և երկուայն հանգիստ • (8) :

- 1 Օրն տէրունի երկրիս վըրան
Հոգւոյս իսկ է օր հանգստեան •
Քայց կատարեալ՝ փառաց հանգիստ
Սրբոց պատրաստ յերկինս կայ միշտ :
- 2 Բնաւ յոգնութիւն երբէք չըլլար ,
Մահ , մեղք մտնել հոն չեն կրնար •
Երկնից քաղցրիկ սուրբ օրհնութեանց
Տրտունջ և ողբ չէ խառնըւած :
- 3 Ոչ ծանր հոգեր և ոչ վախեր
Քու սուրբ հանգիստդ կրնան աւրել •
Ոչ ամպ կայ հոն , ոչ բռնութիւն ,
Արև գարնան միշտ է փայլուն :
- 4 Քաղցր եղանակ , ո՛հ , շուտ թող գայ ,
Ճառագայթէ երկրիս վըրայ •
Այս կեանքս պանդուխտ շուտով անցնի ,
Փրկչիս քով իմ հոգիս հանգչի :

270 ԿԻՐԱԿԷ ԵՐՈՒԱՆ ԿԱՆՉՄԱՏՈՒՆՆԻՔ . (7 . 6 տող) :

- 1 Ապահով Տէրն մեզ պահեց
Այս շարաթ ալ մահուանէ .
Եւ այսօր մեզ հոս ժողովեց ,
Որ շընորհք խնդրենք իրմէ :
Ի՞նչ հաճոյ է Կիրակին ,
Է նրման երկնաւորին :
- 2 Երբ շընորհքըդ , Տէր , խնդրենք
Սիրելի Փրկչին ձեռքով ,
Լուսափայլ երեսդ տեսնենք ,
Մեղքերնիս քաւուի քեզմով .
Թող աշխարհք անյայտ ըլլայ ,
Աչքերնիս քու փառքդ տեսնայ :
- 3 Երբ քեզ կը փառարանենք ,
Տուր որ քեզ ներկայ ճանչնանք .
Եւ քու փառքըդ մենք տեսնենք՝
Երբ մէկտեղ տաճարդ կու դանք .
Համն առնել տուր , Տէր , մեզի
Յաւիտենական ճաշի :

4 Քարոզուած ճշմարտութիւնն
Մեղաւորն թող նորոգէ ,
Սիրողներն զարդարութիւնն
Եւ սուրբերն մըխիթարէ :
Թող ամէն մէկ կիրակի
Պատրաստէ մեզ երկինքի :

271 կերակն առաւօր . (6 , 6 , 6 , 6 , 8 , 8) :

1 Այս առաւօտն օրհնեալ
Ի՞նչ քաղցըր է հոգւոյս ,
Կու տայ ճառագայթներն
Զըւարթութիւն սուրբ յոյժ .
Գործ աշխարհի , զըւարճութիւն
Զաւրեն թող զիմ հանգիստ սիրուն :

2 Արքայն կենաց իջեալ
Բաշխէ շնորհք երկնային .
Չայն պաշտելով ազգերն
Հաւտան ու փրկըին .
Թող ընդունին մեղաւորներ
Քու սուրբ խօսքըդ , շնորհքըդ , Տէր :

3 Սուրբ Աղաւնիդ Բարձրեալ ,
Դու մեզ այսօր օրհնէ .

Սրբէ , ո՛հ , մեր սրտերն ,

Անոնց մէջ բընակէ .

Որ մեր հողին կեանք գտնելով ,

Տէրօջը փառք տայ յնձալով :

272 Կիրակի ~~առաջօր~~ . (8 , 6) :

1 Փառք , օրհնութիւն սրտանց կու տամ
Սուրբ օրուան հասնելուս .

Անձիս խիստ հարկաւոր է այն ,

Անմահ կեանք է հողւոյս :

2 Մէկդի երթան այսօր աշխարհ ,
Բոլոր ունայն բաներն .

Ձի նա որ է ծառայ ուխտեալ՝

Պարտի պաշտել ըզՏէրն :

3 Բաղձամ , ով Տէր , քեզ նըւիրել
Իմ սէրս ու միտքս բոլոր .

Հողւով պաշտօն ալ կատարել

Ըլլայ իմ գործս այսօր :

4 Քու տաճարիդ մէջ քեզ օրհնել՝
Այս է իմ պարտքս անշուշտ .

Ներկայութեանդ ալ գտնուիլ՝

Այս՝ իմ փափաք , խորհուրդ :

273 ԿԻՐԱԿԻ ՕՐՆԱՆ ԵՐԵՒՆԱՆԸ • (6) :

- 1 Սուրբ օրն իր վախճանին
 Հիմն ալ մօտեցաւ .
 Իմ վրաս այս Կիրակին
 Ի՞նչպէս հաշիւ տըւաւ :
 Արդեօք ինձ փոխ տրուած
 Ժամերը յարգեցի՞ ,
 Թէ օրըդ , ով Աստուած ,
 Պարապ տեղ վատնեցի :
- 2 Դատապարտեալ հոգին
 Ի՞նչ մեծ ցաւով կ'ողբայ
 վատնած այն Կիրակին ,
 Որ պիտի չըդառնայ .
 Ի՞նչ յուսահատութիւն՝
 Երբ ինքնիրեն ըսէ ,
 Պատրաստ կար փրկութիւն ,
 Բայց մերժեցի ինծմէ :
- 3 Կիրակիին ժամերն
 Չըյանդգնինք պղծել ,
 Կամ աղօթքի օրերն
 Ունայն կերպով վատնել :
 Սուրբ օրը թող ըլլայ
 Մեզի երկնից նրման .
 Կանխիկ ճաշակ ըլլայ
 Վերին սուրբ հանգստեան .

Տ Է Ր Ո Ձ Ը Ը Ն Թ Ր Ի Ք Ը

274 Հ-ըրրդ-իւն յօրէն-լը . (8 յատուկ) :

- 1 Փրկիչը սեղան կը կազմէ
Մեր սուլը կըշտացընելու .
Ու մեղաւորներն կը կանչէ
Երկնից կերակուրն ուտելու :
- 2 Ահա սուլամահ տեսնելով՝
Մեզի իր մարմինը կու տայ .
Մեզի համար զոհ ըլլալով՝
Իր մահը մեր կեանքը կ'ըլլայ :
- 3 Ուստի, եղբայրներ սիրելի,
Ուրախութիւնով մօտեցէք .
Ձեր Տէրն է որ ձեզ կը խօսի,
“Մարմինըս առէք ու կերէք” :
- 4 Անկեղծ ու խորին զգջումով
Աս սուրբ սեղանիա մօտենանք .
Բոլոր գործքերնիա մերժելով՝
Միայն Յիսուսին հաւատանք :

- 5 Ով Տէր, հետերնիս գտնըէ,
 Քու ներկայութիւնըդ ցուցուր .
 Եւ աս քու սեղանըդ օրհնէ,
 Քեզմով մեր սըրտերը լեցուր :
- 6 Խօսքիդ համեմատ կ'աղաչենք,
 Մեզի քու Հոգիդ պարգևէ .
 Եւ հոս որ մենք քեզ կը յիշենք,
 Դուն, ով Տէր Յիսուս, մեզ յիշէ :

275 “Ասկա” ըրէ՛ զե՛ս յիշելու համար” . Ղուկ . ԻԲ . 19 . (8, 6) :

- 1 Շնորհացըդ խօսքը կը լըսեմ .
 Խոնարհ սրտով և հեզ
 Պատուէրդ պիտի, Տէր, կատարեմ,
 Պիտի յիշեմ ըզքեզ :
- 2 Սիրով մարմինդ պարգևեցիր,
 Երկնից հաց, որ ուտեմ .
 Ուխտիդ դաւաթն ալ ձեռքս տըւիր,
 Տէր, քեզ պիտի յիշեմ .
- 3 Կրնամ մոռնալ Գեթսեմանի,
 Կամ հոն տագնապդ տեսնել,
 Արեան քրտինքըդ սոսկալի,
 Եւ քեզ, Տէր, չըյիշել :

- 4 Գառն Սատուծոյ, առ Գողգոթա
Երբ աչքըս դարձրնեմ,
Ու քեզ տեսնեմ խաչիդ վըրայ,
Պէտք է որ քեզ յիշեմ:
- 5 Ինծի համար կըրած ցաւերդ,
Քանի որ շունչ կ'առնեմ,
Ո՛հ, Տէր Յիսուս, քու դութդ ու սէրդ
Սնշուշտ պիտի յիշեմ:
- 6 Եւ երբ մահկանացու ճամբաս
ՍԼ իր վախճանն դանէ,
Երբոր արքայութեամբըդ դաս՝
Դուն, ով Տէր, զիս յիշէ:

276 Նշե՛ք . (8, 6) :

- 1 Եթէ մարդոց մէջ քաղցրութիւն
Անիտխարէն չըմնար,
Բարեկամի ներկայութիւնն
Անհող մընալ չըտար,
- 2 Այն Բարեկամն ի՞նչպէս սիրենք
Որ երկինքէն իջաւ,
Եւ որ անմահ կեանք ժառանգենք՝
Մեզի համար մեռաւ:

- 3 Մեռաւ՝ որբի վիշտէ սաստիկ
 Մեր վիշտն խափանելու .
 Լեզու այն սէրն ու երախտիք
 Կարող չէ պատմելու :
- 4 Երբ կը դիտէր դեռ այն ցաւերն
 Ուսկից ինք չէր փախչէր ,
 Ի՞նչ խանդակաթ վերջին խօսքերն ,
 «Զիս յիշեցէք» , կ'ըսէր :
- 5 Յիշե՞նք մեզի համար կըրած
 Քու մահդ , և սէրդ անհուն .
 Տէր , սրտերնուս վրայ քանդակուած
 Զըլլայ ուրիշ անուն :

277 Քրիստոս կենաց հաց . (6 , 6 , 8 , 6) :

- 1 Տէրոջ պարգեն տեսէք ,
 Ով մեղաւորք , ծունկ դրէք .
 Որ պատուական արիւնն թափեց ,
 Զամօթ , զանէծք մեր կրեց :
- 2 Ահա մեզ հաց կենաց
 Եկաւ տալ Տէրն փառաց .
 Մեղաւորին տեղ կը մեռնի ,
 Որ յաւիտեան ապրի :

3 Տէրն կը հաճի մեզ տալ,
Գիտէ որ մենք անկար
Ենք բընութեամբ, չունինք փրկանք
Տալով գնելու փառք, կեանք ։

4 Թող ձեր հաւատքն աճի .
Եկէք փութանակի ,
ԸզՏէր Յիսուս ընդունեցէք ,
Դուք չէք մեռնիր երբէք ։

278 ԲԵՆԵՊՈՒՆԻԱՆԻ ԵՐ ԸՆԴԵՐԵՆԻՆԻ ԿՆԻՆՆԻ (8 , 6) ։

1 Ի՞նչ քաղցր այս տեղ և ահաւոր ,
Ուր քովն եմ Յիսուսի .
Հոս մշտավառ միակ սէրն անոր
Պայծառ յոյժ կը փայլի ։

2 Մեր միտքն ապշած մէկտեղ կ'երգենք -
Խորհողուրդ ըսքանչելի .
Փառք փառք տալով կ'աղաղակենք ,
«Կոչմանս չենք արժանի» ։

3 «Ո՛հ , ի՛նչպէս մենք ձայնիդ լըսող՝
Մըտանք ներս , մինչ տեղ կայ .
Շատերն երբ են թշուառ ընտրող ,
Գալ չեն ուղեր , բայց մահ՛» ։

4 Նոյն սէրն որ այս տօն սահմանեաց ,

Նոյնն իսկ բերաւ մեզ հոս .

Թէ չէ , մերժած՝ մէջ մեր մեղաց


Կորսուած էինք անյոյս :

5 Գլթա երկրիս , ով մեր Աստուած ,

Կանչէ , հոս դան ամէնն ,

Սուրբ Խօսքդ յաղթող զրկէ ազգաց ,

Ներս առ և օտարներն :



279 Մերոս-Բեան հասար երգ . (8) :

- 1 Տէր բազմագուլթ ու ողորմած ,
Հիմա սիրոյդ բազուկներով
Քեզ նըւիրուած այս երախան
Աւ , նորոգէ ձըրի շնորհքով :
- 2 Մեր նախահօրը արմատէն
Ամէնքըս ալ մեղքով ծընանք .
Օտարացանք մեր Աստուծմէն ,
Ու բարկութեան որդիք եղանք :
- 3 Բայց դուն սիրով ու գըլթութեամբ
Մեղապարտից ողորմեցար ,
Կատարեցիր անգին արեամբ
Քու ուխտըդ , Տէր , որ խոստացար :
- 4 Մեծ խոստմունքներ դուն ես տըւեր
Բարեկամիդ Աբրահամին ,
“ Բոլոր ազգեր ու լեզուներ
Քու սերունդովըդ օրհնըւին ” :
- 5 Ի դործ գըրիր քու խօսքըդ , Տէր ,
Ի դործ գըրիր անհուն սիրով .
Մեզի հասան այս խոստմունքներ ,
Ու մեր որդւոցը , Յիսուսով :

- 6 Ուստի այս երախան բերինք ,
 Հօտիդ մէջ , ուլ Տէր , ընդունէ .
 Մէնք լոկ ջըրոյ մըկրտեցինք ,
 Դուն քու Հոգւոյլըդ մըկրտէ :
- 7 Յուցուր անոր ուղիղ ճամբան ,
 Նոր սիրտ անոր մէջ ըստեղծէ .
 Թող կանչըւի որդի խոստման ,
 Դուն միշտ անոր առաջնորդէ :

280 Աբրահամին հետ եղած ուխտը մշտնջենսոր
 է . (8 , 6) :

- 1 Ի՞նչ լայն խոստմունք , ի՞նչ վառաւոր ,
 Աբրահամին տրուած ,
 «Քեզի և սերունդիդ բոլոր
 Պիտի ըլլամ Աստուած» :
- 2 Այս խօսքն սիրոյ զարմանալի
 Դարէ դար կը տևէ .
 Քրիստոս , ուխտին հրեշտակն , մեզի
 Խոստմունքը կը կնքէ :
- 3 Ինք մեր տըղաքը կ'ընդունի
 Սիրոյ բազուկներով .
 Իր օրհնութեամբ երանելի
 Կ'ըլլան և ապահով :

4 Հաւատարիմ է Տէր Յիսուս ,
 Ուխտէն մեզ չըմերժեր .
 Եւ իր դր.քէն զաւակներնուս
 Անունը չըջնջեր :

281 Ա.Վ.Է.Մ.Կ.Ր.Տ.ՈՒ.Թ.Ի.Ի.Ն. (8) :

1 Ո՛վ Հայր Աստուած ողորմութեան ,
 Հաճէ ընել զայս երախան
 Քուկին շնորհաց ուխտիդ որդի ,
 Որ քեզ պաշտէ սիրով սրտի :

2 Որդիդ Աստուած , Փրկիչ մարդկան ,
 Քեզ նըւիրուած այս երախան
 Քու արիւնովդ դնուած ըրէ ,
 Ժողովրդեանրդ հետ խառնէ :

3 Ո՛վ Սուրբ Հոգի , սրբացուցիչ ,
 Որ ես միայն բնութեան մաքրիչ ,
 Այս երախան սրբէ , մաքրէ ,
 Նոր սիրտ անոր դուն պարգևէ :

4 Ո՛վ Հայր , Որդի և Սուրբ Հոգի ,
 Երրորդութիւն ըսքանչելի ,
 Մենք զայս քեզի կը նըւիրենք ,
 Քուկըդ ըրէ , Տէր , կը խնդրենք :

282 Առաջագրեան երգ . (8) :

- 1 Սրտանց կու տամ փառք քեզ , ով Տէր ,
 Որ պահեցիր զիս այս դիշեր .
 Ինձ տրկարիս դուն հոգ տարիր
 Նոր լոյսն ալ ինձ տեսնել տրւիր :
- 2 Տէր , աս լուսոյն հետ երեսիդ
 Լոյսն ալ շնորհէ քու ծառայիդ .
 Անով հոգւոյս խաւարն մէկդի
 Առ , որ ըլլամ լուսոյ որդի :
- 3 Այսօր ալ ինձ առաջնորդէ ,
 Ազատ պահէ չարիքներէ .
 Օգնէ ինձ որ բարիք դործեմ ,
 Քեզ և մարդիկ սրտանց սիրեմ :

283 Առաջագրեան երգ . (8 , 6) :

- 1 Տէր , առտրւանց չուշանալով
 երեսդ կը փնտրուեմ .
 Սիրտս կը մարի մեծ ծարաւով ,
 Մինչև շընորհքդ առնեմ :

- 2 Անաստատին մէջ այսպէս է
 ճամբորդն որ կը մարի ,
 կը փափաքի՝ դետ մը գլտնէ ,
 խըմէ ու չըմեռնի :
- 3 Փառքովդ՝ տեսեր եմ ես , ով Տէր ,
 Քու սուրբ տաճարդ լեցուած .
 Շնորհէ տեսնեմ կրկին ես , Տէր ,
 Փառքիդ տեսիլքն օրհնած :

284 Առաջորեան երգ . (10) :

- 1 Հողիս , արթընցիր , արևը դուն տես ,
 ճամբուդ մէջ մըտիր , վազէ անոր պէս .
 Ամէն ծուլութիւնդ քեզմէ թօթափէ ,
 Եւ անհողութիւնդ մէկդի արձակէ :
- 2 Դուն ալ ասպարէզ ունիս վազելու ,
 Աստուած է որ քեզ իրեն կանչելու
 Իր ճայնն կ'արձակէ , կը քաջալերէ ,
 Եւ ինքն ալ կու դայ մօտ որ քեզ փնտռէ :
- 3 Քու առաւօտեան աղօթքըդ մատուր ,
 Եւ զո՛հ օրհնութեան անկեղծ մօտեցուր ,
 Քանզի կանչուած ես փրկիչ Յիսուսին ,
 Սիրով հրաւիրուած շնորհաց աթոռին :

- 4 Ուխտերըս կ'ուզեմ, ու Տէր, նորոգել,
 Մրտանց կ'որոշեմ քեզի ծառայել.
 Գուն ալ իմ մեղքերս ցօղի պէս ցբուէ.
 Գիտես յանցանքներս, ինձ առաջնորդէ :
- 5 Արդ Հօրն և Որդւոյն և Սուրբ Հոգիին,
 Միայն Աստուծոյն, որմէ կը բղխին
 Բոլոր բարիքներն, թող փառք մատուցուի
 Եւ օրհնութիւններ յերկնի և յերկրի :

285 Արարան և երկնան համար երգ. (8) :

- 1 Ի՞նչ անվախճան է, Տէր, քու սէրն,
 Ամէն դիշեր քենէ կու դան
 Նոր պարգևներ, և առտուներ
 Լուիկ կ'իջնեն ցօղի նրման :
- 2 Ամէն դիշեր զիս կը պահես
 Չըտեսնըւած վըտանդներէ.
 Եւ առտըւանց դուն կը խրկես
 Արևդ որ զիս արթընցունէ :
- 3 Իմ անձըս քեզ կը նըւիրեմ
 Գիշեր ցորեկ, դուն իմ Տէրս ես.
 Անթիւ շնորհքներ քեզմէ կ'առնեմ,
 Փառք յաւիտեանս պիտի տամ քեզ :

286 երէ երէկոյեան • (6, 6, 8, 6) :

- 1 Այս օրն անցաւ դընաց ,
 Խաւարը կ'երևնաց .
 Տուր որ յիշենք մահուան գիշերն ,
 Որ շուտ կը մօտենայ :
- 2 Յողհած , քունով թմրած ,
 Մեր աչքը կը դոցենք .
 Գերեզմանին մէջ՝ շատ չանցած
 Ամէնքս պիտի ննջենք :
- 3 Գիշերս մեզ , Տէր , պահէ
 Բոլոր վրտանդներէն .
 Հրեշտակդ խրկէ որ մեզ հսկէ ,
 Մինչ դայ առտու նորէն :
- 4 Եւ երբ առտուն կանուխ
 Անխոնջ արևն աեանենք ,
 Տուր որ անոր նրման անգուլ
 Մեր ասպարէզն վազենք :
- 5 Երբ մեր վախճանը դայ ,
 Եւ աս կեանքէս զատուինք ,
 Շնորհէ փրկչին սիրոյն համար ,
 Որ մենք քու գիրկդ հանգչինք :

287 Իրեկոն երգ . (10) :

1

Եղաւ իրիկուն , այս օր ալ անցաւ .
Այս կարճ կեանքերնիս քիչ մ'ալ կարճեցաւ .
Օրն ետ չըդառնար , անցաւ դընաց ան ,
Մահն ու դատաստան քիչ մ'ալ մօտեցան :

2

Փառք քեզ որ այսօր ալ շատ բարիքներ
Մեզի վայելել տըւիր դուն , ով Տէր .
Քեզմէ է որ ցաւ ու վիշտ չունեցանք ,
Հանդիստ ապահով այս ժամրս հասանք :

3

Ո՛հ , որչափ մեղքեր դորժած ենք այսօր ,
Եւ արժանացանք պատժոյ ահաւոր .
Աստուած ողորմած , անհուն դուժ ունիս ,
Սրտանց կը խնդրենք , քաւէ մեղքերնիս :

4

Քեզի յանձնելով մեզ ու մերայինք ,
Քեզ ապաւինած ահա կը պառկինք .
Պահէ պաշտպանէ մեզ փորձանքներէ ,
Ու թէ որ կամքդ է , մեզ օր մ'ալ չնորհէ :

288 Տարածան վախճանին համար խորհրդածոն-իւն . (8 յատուկ) :

- 1 Եկէք , մեր ճամբան նորողենք ,
ճամբան 'ի Սիօն որ կ'երթայ .
Յառաջ վազենք , կանգ ալ չառնենք ,
Մինչև որ մեր Տէրն երևնայ :
Անոր բարի կամքը սիրով
Ձանանք անդադար կատարել ,
Մինչև կարենանք ապահով
Փրկչին սուրբ հանգիստը մանել :

- 2 Աս կեանքն է նրման երազի .
(Ո՛հ թէ երազողն արթննար .)
Տարին օրուան պէս կը թռչի ,
Բոպէն թե ունի , չըկենար :
Տարին օրուան պէս կը թռչի ,
Մօտ է ահաւոր դատաստան .
Վըճիռն ալ անայլայլելի ,
Կամ կեանք և կամ մահ յաւիտեան :

- 3 Արդեօք երբոր մահ ինձ հասնի ,
Կրնամ ես երգել յաղթանակ .
Ըսել թէ Հաւատքս պահեցի ,
Եւ թէ կը մընայ ինձ սըսակ :

Ո՛հ թէ երբ ձըգեմ այս երկիր ,
 Տէրով քաղցըր ձայնն ինձ ըսէ ,
 «Իմ ուրախութիւնըս մըտիր ,
 Ու իմ աթուռիս վրայ նստէ» ։

289 Նոր Կարէ . Սաղ . Դ . 12 . (8) ։

- 1 Օրերըս շուտ կ'անցնին , կ'երթան
 Ոստայնանկին կըկոցին պէս .
 Արագութեամբ կ'անհետանան
 Յոյժ վաղանցիկ շողիի պէս ։
- 2 Ամէն վայրկեան մօտ կը բերէ
 Զիս իմ կենացըս վախճանին .
 Ամէն քայլ կը մօտեցնէ
 Մահուան և ցուրտ գերեզմանին ։
- 3 Ի՛նչ շուտ անցաւ անցեալ տարին .
 Թըռաւ , գընաց , անհետացաւ .
 Անձն իմ , արդեօք ըրի՞ր բարին ,
 Թէ չարութիւնըդ աւելցաւ ։
- 4 Վա՛յ ինձ , բազում անգամ մեղայ
 Ժամերս պարապ տեղ վատնելով .
 Քանքարթագոյց ծառայ եղայ
 Կրցած բարիքըս չընելով ։

5 Ո՛վ Տէր , ըրէ ողորմութիւն ,
 Ինձ սորվեցուր համբել օրերս ,
 Որ ըստանամ խնաստութիւն ,
 Քեզ նըւիրեմ բոլոր ժամերս :

290 Եկեղէցոյ նախկարեաց համար .

1 Ո՛վ Տէր Աստուած Իսրայէլին ,
 Երկինքն , երկիրն ալ լըցունող ,
 Երկնից երկինք ամենևին
 Պարունակել քեզ չեն կարող :

2 Բայց երկնային պարգևներով
 Քու տաճարներդ կը զարդարես ,
 Ու մեր աղօթքը լըսելով՝
 Մարդոց շէնքերն տաճարդ կ'ընես :

3 Արդ մենք այս տունը շինեցինք
 Քեզի տաճար նըւիրելու ,
 Եւ հոս սրտանց կը փափաքինք
 Ներկայութիւնդ վայելելու :

4 Եւ կ'ազաչենք խոնարհ սըրտով
 Մեր այս նըւէրն դուն ընդունէ .
 Եւ հոս քու տանըդ մէջ փառքով
 Առատ շընորհքըդ տարածէ :

5 Ասոր մէջ թող դարէ 'ի դար
 Անթիւ մարդիկ խօսքերդ լըսեն ,
 Եւ Սուրբ Հոգւովդ կենդանարար
 Սրտանց քեզի դառնան . Ամէն :

291 Զեռնադրո-վեան համար երգ . (10) :

- 1 Ի՜նչպէս գեղեցիկ անոր ոտքերն է ,
 Որ խաղաղութեան լուրն մեզ կը բերէ ,
 Խաչեալ Փրկչին խօսքն ալ կը քարոզէ ,
 Կ'ըսէ Սիօնին , Աստուածըդ կ'իշխէ :
- 2 Երբ պահապաններդ դէմառ դէմտեսնեն ,
 Պիտի ցնծութեամբ ամէնը երգեն .
 Եւ ճշմարտութեան մէկ ձայն մը ելլէ ,
 Աստուած իր Սիօնն երբոր ետ բերէ :
- 3 Ո՛վ դուք աւերակք Երուսաղեմին ,
 Եկէք , երգեցէք անհուն սէրն Փրկչին .
 Քանզի Աստուած մեր կը մըխիթարէ
 Դարձող մեղաւորն , և զայն կը փրկէ :
- 4 Մեր Տէրը իր սուրբ բազուկն մերկացուց ,
 Ազգաց աշխարհիւ իր շնորհքը ցուցուց .
 Երկրին ամէն ծայր ալիտի շուտ տեսնէ
 Տէրոջ փրկութիւնն , և զայն վայելէ :

292 Նոյնը . Պաշտօնէից հսկող-իկանը հոգոց . (10).

1

Գէտերն Սիօնի արթուն թող ըլլան ,
 Ինչ որ քարոզեն իրենց ալ առնեն .
 Իրենց ահաւոր այս դործ պաշտաման
 Հիմա Սատուծոյ բերնէն ընդունեն :

2

Պաշտօնն հովուական որ կը պահանջէ ,
 Անարդ բան մը չէ , այլ յոյժ մեծագին .
 Հազիւ հրեշտակի սիրտ բաւական է
 Զայն լաւ կատարել , զի դործ է փրկչին :

3

Գէտ են այն հոգւոց՝ որոց համար Տէրն
 Փառքէն երկնային հըրածարեցաւ .
 Հոգիք են ապրող անվախճան դարեր
 Ուրախ , երջանիկ , կամ թշուառ ընաւ :

4

Ամէնքս արտորնօք կ'երթանք մեծ ատեան՝
 Հոն հաշիւ տալու Տէրոջն անաչառ .
 Ճշդիւ մեր յանցանքն թ' առնես քննութեան ,
 Ի՞նչպէս երեւինք առջիդ , Տէր արդար :

5

Ո՞՞ թէ անոնք որ Յիսուսն քարոզեն՝
 Իրենց ալ փրկիչն ըլլալն խոր ըզդան .
 Հսկէ դուն անոնց հոգւոցն զօր ամէն ,
 Որ քեզ ծառայել միշտ արթուն ըլլան :

293 Ժողով Պաշտօնեկեց . (8) :

- 1 Յերկնից շնորհօք Հոգւոյդ Սրբոյ ,
Տէր , ժողովեալ ծառայքդ օրհնէ .
Արդարութեամբըդ հաղուեցու
Քահանաներդ , օծեալքդ ըրէ :
- 2 Արդ մենք որ կանք 'ի քոյդ տաճար
Ուսուցանել ճշմարտութիւնդ ,
Աջոյդ մէջ իբր զաստեղս պայծառ
Ըլլանք հրեշտակք Եկեղեցւոյդ :
- 3 Իմաստութիւն , նախանձ , հաւատք ,
Տուր հեղութիւն վերէն , կըրել
Ի սիրտ մեր ժողովուրդդ՝ կենանք
Սիրած հոգիքդ անկեղծ սիրել :
- 4 Ստէպ աղօթել , ըլլալ զգաստ դէտ ,
Գիշեր ցերեկ լուրջ պահպանել ,
Մեղաւորներն խրատել , սուրբերդ
Քաջալերել , հօտդ արածել :
- 5 Երբոր մեր դործն հոս լըմըննայ ,
Խոնարհ յուսով պաշտօնս յանձնենք ,
Եւ Հովուապետն վառօք երբ դայ ,
Ըլլանք , Հայր , քուկդ անոնք և մենք :

296 Խոնարհ ինքրոսած+ օրհնութեան . (7) :

- 1 Տէր , կու դանք հիմա առջիդ ,
 Խոնարհինք մինչ տակ ոտքիդ .
 Ո՛հ , Տէր , մերժըւած չըլլանք .
 Զո՛ւր արդեօք քեզի կու դանք :

- 2 Ապաստան քեզ մեր հողիք ,
 Երբ նեղեալք , քեզ յանձնըւինք .
 Լից մեր սիրան շնորհօքդ առատ ,
 Որ արժան քեզ փառք տանք արդ :

- 3 Քու ճամբուդ մէջ հաստատուած
 կը փնտռենք քեզ՝ հոս կեցած .
 Զենք դիտեր , ի՞նչպէս երթանք ,
 Մինչ քեզմէ շնորհք չըստանանք :

- 4 Տուր խօսքէդ պատգամ հաստատ ,
 Մեզ կ'ընէ խաղաղ , զըւարթ .
 Հաղորդէ այժմ՝ Սուրբ Հողիդ
 Փրկութիւն ճոխ ՚ի մեր սիրտ :

297 Արատօրէան . (7 . 6 տող) :

- 1 Այս հանդարտ անզբաղ ժամուս
վեր նայիմ ուր է իմ յոյս .
ինձ լըսէ , Աստուած գըլթած ,
կ'աղօթեմ քեզ , Տէր զօրաց .
Երկինքէն տուր պատասխան
վասն Որդւոյդ որ է արժան :
- 2 Առտըւան լոյսն զուարթագին
Երբ վանէ ստուեր գիշերին ,
Միրտս լուսովդ ուրախանայ ,
Միտքս իմաստուն , սուրբ ըլլայ .
Այն ատեն եմ յաջողուած ,
Իմ կարօտութիւնքս լցուած :
- 3 Ի՞նչ ցնծում . ո՞հ , այս խօսք տայ .
« Պիտ' ըլլաս երկրիս Արքայ » .
Տէր տերանց , մեծ թագաւոր ,
Խօսքդ զրկէ յաշխարհ բոլոր .
Անսահման իշխանութեանդ
Օրն շուտ գայ , առ դաւազանդ :

298 Երեկոյեան . (8) :

- 1 Քեզ փառք տամ այս գիշեր , Աստուած ,
Օրուան բոլոր բարեացն համար .
Պահէ զիս , Տէր , յամէն չարեաց ,
Ընդ հովանեաւ թևոցդ խնամ տար :
- 2 Վասըն Որդւոյդ ներէ ինձի
Մեզքերս որ եմ այսօր գործած .
Որ հաշտ ըլլամ ընդ աշխարհի ,
Անձիս , Քու հետ , երբ եմ քնացած :
- 3 Սորվիմ ապրիլ , որչափ մահճէս՝
Գերեզմանէս նոյնչափ վախնամ .
Ինձ սորվեցու մեռնիլ , որ ես
Յօրն ահաւոր փառօք ելլամ :
- 4 Թող իմ հողիս քեզի յանձնեմ ,
Աչքերս գոցեմ , հանդարտ քնանամ .
Ննջեմ որ զօրութեամբ ելնեմ
Քեզ ծառայել , երբ կ'արթնեմ :
- 5 Ո՛հ , անվախճան օրն ե՞րբ վանեմ
Պիտի խաւար քունն յաւիտեան ,
Եւ ընդ հրեշտակս երկնից երգեմ
Փառք քեզ , Արքայդ անմահական :

299 Նոր արի : (8) :

1 Աստուած հրղօր , քեզ փառք կու տանք ,
Մեզ կը պահես քանի որ կանք .
Տարեդ լուխս է ցոյց գըթութեանդ ,
Ողորմութեամբդ առնու սլրասկ :

2 Գիշեր ցերեկ մենք ընտանեօք
Եղանք ընդ մեր Տէրոջ խնամովք .
Խմաստութեամբ առաջնորդեց ,
Ինք մեզ սընոյց առատ բարեօք :

3 Վասն անցելոյն շնորհակալ ենք ,
Գալիքն ալ որ չենք գիտեր մենք ,
Հանգարտ կ'ապրինք ոտիցդ առջև ,
Խնամքիդ բօլոր զայն կը յանձնենք :

5 Թէ անարդուինք , թէ պատուըինք ,
Քեզմով ուրախ հանգիստ լինինք .
Քու բարութեանդ միշտ յուսալով՝
Քեզ միշտ օրհնենք , մինչդեռ կ'ապրինք :

300 Ծ Ե Ր Ո Ւ Դ Ե Մ Ա Ն Ա Մ Բ Ե Ն Ա Մ Բ Ո Ւ Զ Ո Յ Ի Ն Կ Ե Լ . (8) :

- 1 Հայր բարեխնամ ազգի մարդկան ,
Մինչև վերջն իմ յոյսս է քեզի .
Եւ երբ հասնի օր նեղութեան ,
Յոյս չեմ գլներ ոչինչ բանի :
- 2 Ինձ առաջնորդ քեզ ունեցայ ,
Դու իմն եղար սերտ բարեկամ .
Կեանքիս մէջ քեզ միայն ճանչցայ ,
Թող կեանքս քեզմով դտնէ վախճան :
- 3 Երբ ծերութիւն , օրեր թշուառ
Կու դան վըրաս , զիս մի թողուր .
Դուրս մի ձրդեր յուսահատեալ ,
Վերջին օրերս ողբալ տըխուր :
- 4 Մինչդեռ կ'ապրիմ դու ես ինձ վէմ ,
Երկրպագեմ քեզ 'ի մահուն .
Մահէն ետքն ալ քեզ պիտ' օրհնեմ
Անվերջ դարեր հետ սուրբերուն :

301 Օրհներգութիւն շառնայ շնորհան պարեգար-
նի . (8) :

- 1 Բարի Աստուած իսրայելին ,
Խոստմունքըդ են բազում , օրհնեալ .
Գերագոյնն է տալ Սուրբ Հոգին
Որդւոցս որք են բնութեամբ անկեալ :
- 2 Արդ մենք քեզմէ որ ընդունած
ենք այս պարգև , սիրուն զաւակ ,
Կ'օրհնենք զանուն քո գերամբարձ ,
Որ շնորհեցիր անոր ողջ կեանք :
- 3 Այսօր մեր ուխտըն կը կրկնենք ,
Երբ կը սկըսի ինք նոր տարի .
Սիրով քեզի զայն կ'ընծայենք ,
Որ քու փառացի համար ապրի :
- 4 Խոնարհութեամբ կը խոստանանք
Սուրբ երկիւղովըդ զայն կըթել ,
Ուսուցանել Սուրբ Գրոցըդ բանք ,
Օրէնքներովդ դաստիարակել :
- 5 Գերդաստանիս , Տէր , Հայր եզիր .
Կենաց Գրքիդ մէջ այս անուն
Գըրէ , ըլլայ քեզ որդեգիր ,
Որ զարդարուի շնորհօքդ անհուն :

6 Հխնակուրնէ կանչուած ըլլայ
Գործել ժրութեամբ քու սուրբ այգիդ .
Խնամօքդ երկար կեանք ունենայ
Փառաւորել զեկեղեցիդ :

302 Յաղագրութեան Ժամանակ .

“Չըլլայ որ կշտանամ և թեղ ուրանամ” :

Առակ . Լ . 9 : (8 , 7) :

1 Ի բոլոր սրտէ կ'օրհնենք քեզ .
Դու առատաձեռն ես , Տէր .
Օրհնութեամբք արդ լըցուցեր ես
Մեր դատարկ շտեմարաններ :

2 Բարեխնամ Հայր , արժանի չենք
Այս առատ բարիքներուդ .
Ըստիպուինք թող քաղցրութեամբդ մենք
Ծառայել Միածին Որդւոյդ :

3 Կ'աղաչենք , մեզ Սուրբ Հոգիդ տուր ,
Որ խոնարհ ըլլանք միշտ յոյժ .
Մեր սրտից մէջ սուրբ սիրոյ հուր
Թող վառի , վարուինք անոյշ :

- 4 Աշխարհիս հարըստութիւնս սուտ՝
 Խօսբելով մեզ չըզրկէ
 Հրաւէրքէն Փրկչին, Այն որ շուտ
 Գայ պիտ' իր քովն մեզ կանչէ :
- 5 Ո՛հ թէ ընդունինք այն մեծ շնորհ,
 Գանձերնիս դիզել երկինք,
 Հոս հոգւով աղքատանալ որ
 Աստուծով հարուստ լինինք :
- 6 Այս ամէնն քեզմէ առած ենք,
 Կ'ընծայենք կամաւ քեզի .
 Մենք ու մերինները քուկդ ենք,
 Քուկդ ըլլան սիրտք մեր յուրի :

303 Չսիրոյրոսիւնն շահանակ . (8, 7) :

- 1 Վեր նայէ վեր, սիրելի հայր
 Թող վիշտերըդ ձանձրալի .
 Վեր նայէ վեր Յիսուսի միշտ,
 Որ սիրեց մեզ աւելի :
- Վեր նայէ վեր, սիրելի մայր,
 Է յոյժ մարդասէր Յիսուս .
 Դեռ քեզ կը ստիպէ խնդրես զինք,
 Եւ հոգերդ մէկդի թողուս :

- 2 վեր նայէ վեր , սիրելի հայր ,
 կեանքերնիս շուտ պիտ' անցնի .
 Բայց անճառ ցնծում երկնից մէջ
 Անցեալին տեղ կը ստացուի :
 վեր նայէ վեր , սիրելի մայր ,
 Թող հողերդ խիստ վշտալի .
 Սուրբ սրտով , ջերմ աղօթքով մենք
 Գանք մէկտեղ յերկինս պիտի :
- 3 վեր նայէ վեր , սիրելի հայր ,
 Դէպ 'ի տունըդ երկնաւոր .
 Հոս ամէնքըս խռչ կըրած ենք ,
 Հոն հանգիստ կայ փառաւոր :
 վեր նայէ վեր , սիրելի մայր ,
 վեր պայծառ երկնից կամար .
 Որ յիշես զայն խոստացեալ փառք ,
 Ուր ժառանգ ես ընտրրեալ :
- 4 վեր նայէ , սիրուն եղբայր , վեր ,
 Օ՛ն , ամէնքս յառաջ երթանք .
 Քաղցր հանգիստ խնդրենք երկինքը ,
 Շուտ կ'անցնի սնտաի այս կեանք :
 վեր նայէ վեր , սիրելի քոյր ,
 Քու վերին տունդ բերկրալիլ .
 Ուր որ կը յուսանք մէկտեղ դալ ,
 Անվախճան սիրով բնակիլ :

304 Նոյնը . « Տէրը Տէրն :
 Յորք . Ա . 21 . (8) :

- 1 Նա ինք Տէրն է բնակեալ 'ի լոյս ,
 կը պահանջէ իբրև Աստուած .
 Ունի 'րաւունք իմիններուս
 Եւ ինձ տիրել ըստ իւր կամաց :
- 2 Նա ինք Տէրն է , տըլաւ հանգիստ ,
 Հարըստուծիւնս և բարեկամս .
 Բոլոր այս տուրքն իրենն է միշտ ,
 Կու տայ , կ'առնու որ և է մասն :
- 3 Նա ինք Տէրն է ուխտիս Աստուած ,
 է իւր անունն երիցս օրհնեալ .
 Արեամբ կնքեալ խոստումն շնորհաց ,
 Նոյնն յաւիտեան պէտք է մընալ :
- 4 Արդ ես տըխուր , դժգոհ ըլլամ ,
 Այս յոյսերով հաստատ որ եմ .
 Քա՛ւ , շնորհատու , բոլորն քեզ տամ .
 Առ քու ուզածդ , ես ալ քուկդ եմ :

305 Քրիստոսեայ Բարեկամներու ընկերացութիւնը .
(8) :

- 1 Տերամբ միացեալք նորին սիրով՝
Հոս կ'ընդունուին բոլոր սրտով .
Ուրախութիւն շատ վայելենք
Մէկտեղ , որ մենք իրմէն կ'առնենք :
- 2 Ինքն հաճեցաւ մեզ հոս բերել ,
Մաղթենք իւր Սուրբ Հոգին զրկել ,
Որ տեսութիւնն մեր քաղցր ընէ ,
Մեր ցուրտ սրտերն սիրով վառէ :
- 3 Երբ Քրիստոնեայքս մէկտեղ կու գանք ,
Մեր երկրաւոր խօսքերն մոռնանք .
Անոր վրայ մենք խօսինք պիտի ,
Որ մեզ համար մեռաւ , կ'ապրի :
- 4 Սիրենք խօսիլ նա ինչ ըսաւ ,
Գործեց , վասն մեր կըրեց շատ ցաւ ,
Ինչ ճանապարհ մեզի ցուցուց ,
Ինչ մեզ համար կ'ընէ արդ գործ :
- 5 Երբ մեր ժամերն այսպէս կ'անցնի ,
Սիրենք , ափշինք , պաշտենք պիտի .
Այն սուրբ օրուան պիտ' արտորանք
Ուր չենք զատուիր , երբ միանանք :

306 Բաժնիկ (8) :

- 1 Եկէք , եղբարք , արդ կը զատուինք ,
 Ձայնիւ , սրտով միաբանինք .
 Երդ մի վըսեմ Տէրոջ երգենք ,
 Սուրբ օրհնութեան վերջին մէկ երգ :

- 2 Հոս , Քրիստոնեայք , ալ չենք տեսնուիր ,
 Բայց կայ ուրիշ տեղ բերկրալիր ,
 Ուր չիք բընաւ ցաւ , յողնութիւն ,
 Դարձեալ կ'ընենք հոն տեսութիւն :



ՏՂԱՅՈՅ ՀԱՄԱՐ ԵՐԳԵՐ

307 Յիսուսի օրհանգիստի մանկանց վրայ • (12, 9) :

1

Երբոր կը կարդամ պատմութիւնը սիրուն ,
թէ Յիսուս երկրիս վրայ կը քալէր ,
թէ բարի հովիւի պէս իր գառնուկներուն ,
ինք մարդոց նոյն աչքով կը նայէր •

2

Մանկունքը իր բազուկներուն մէջ կ'առնէր •
(Իր սէրը ի՞նչ քաղցր ու ձըրի •)
կը խորհիմ երբ ան մանըր տըղաքը կ'օրհնէր ,
Ո՛հ թէ ես անոնց մէկն ըլլայի :

3

Ո՛հ թէ անոր ձեռքը գլխուս վրայ դրուէր ,
լըսէի ես այն ձայնն քաղցրութեան ,
Եւ ինծի ալ անոնց պէս նայէր երբ կ'ըսէր ,
« Թող տըռէք որ մանկունք ինծի դան » :

4

Բայց զիս ալ Փրկիչը իրեն կը կանչէ ,
Որ իր սէրը ես ալ ժառանգեմ •
Ու թէ որ հոս զինքը խնդրեմ 'ի սրտէ ,
Շուտով պիտի վերը տեսնեմ :

5 Ամէն նորոգուած հողիլին՝ հոն կ'ընէ
 Պատրաստ օթևան բերկրալից .
 Որ իր ժողովուրդը հանդիստ վայելէ ,
 Եւ արքայութիւնըն երկնից :

308 Կանոնի Բարեպաշտոնիան . (8) :

1 Ան մեծ պատուէրն , որդեակ , սորվէ ,
 Որ «Տէր Աստուածդ սիրես» կ'ըսէ ,
 Բոլոր սրտով , բոլոր մրտօք
 Սիրէ զինք , ու երգով գովէ :

2 Քանի որ մանկութեան մէջ ես
 Թող կեանքդ սիրովը պըսակուի .
 Ինչ բարիքներ որ վայելես ,
 Քեզի վերէն պիտի շնորհուի :

3 Սրտիդ խորհուրդքն առաւօտուն
 Քու Արարչիդ վըրայ ըլլան .
 Նոյնպէս առ վեհ իրնամածուն
 Քու մրտածմունքդ երեկոյեան :

4 Մանկանց ձայնէն ինք կ'ախորժի ,
 Իր սուրբ երեսն խնդրել կ'ուզէ .
 Ո՛վ իր սիրոյն համեստ որդի ,
 Իր խոստացած շընորհքն խնդրէ :

309 Կանգնի բարեպաշտութիւն . (10) :

1

Երնեղ ան տըղին որ իր մանկութեան
Մատաղ հասակին մէջ կը վարժուի .
Չերթար ալ ճամբան անիրաւութեան ,
Գըժոխքը տանող ճամբէն կը վախչի :

2

Թէ որ մանկութիւնդ Տէրոջը ուխտես ,
Տէրոջը առջին է խիտ հաճելի .
Ձի չըբացուած վարդն որու ընծայես ,
Անշուշտ այն ընծան պիտի ընդունուի :

3

Գըժուար դործ մը չէ թէ որ դուն հիմա
վախնալ ըսկըսիս բարի Աստուծոյն .
Երբ չարը մեղքին մէջ կը ծերանայ ,
վերջն խիտ դժուար է դառնալ իր ճամբէն :

4

Քեզի , բարերար Աստուած իմ , քեզի
իմին մանկութիւնս սրտանց կ'ընծայեմ .
Ո՛րչափ է բարի և ինձ հաճելի ,
Թէ որ բոլոր կեանքս քեզմով անցունեմ :

5

Աղօթք , օրհնութիւն , անոյշ ալ երգեր
թող իմ շրթունքներս սորվին երգելու .
Նաև յարմարիմ ապրիլ շատ օրեր ,
կամ քու սուրբ կամքովդ կանուխ մեռնելու :

310 Քրիստոնէայ արդեան՝ անյնանոսիբոսիւնը .
(8, 6) :

- 1 Տէր Յիսուսին ի՞նչ նուիրեմ,
Որ զինքն ինծի տըլաւ .
Անոր՝ սէրս ի՞նչպէս ցուցընեմ,
Որ ինքն իմ տեղս մեռաւ :
- 2 Սէրս Յիսուսին կը նըլիրեմ
Մանկութենէս ՚ի վեր .
Նըլաստ ընծաս, ես լաւ գիտեմ,
Բընաւ ինք չանարդեր :
- 3 Հո՞նք Տէր Յիսուսին կու տամ .
Կարող է փրկելու
Եւ պահելու, մինչ ես երթամ
Երեսը տեսնելու :
- 4 Իմ հոգիս տամ Տէր Յիսուսին,
Բոլոր ալ խորհուրդներս .
Անոր ճշմարտութեան խօսքին
Նըլիրելով ժամերս :
- 5 Իմ զբոսիւնս տամ Յիսուսին,
Ոտից, ձեռաց, գլխու,
Որ համեմատ իր սուրբ կամքին
Փութամ միշտ գործելու :

- 6 Իմ շահանչի տամ Յիսուսին ,
 Իրեն հետևելով .
 Ո՛հ թէ բոլոր օրերս լեցուին
 Սուրբ , օգտակար գործով :
- 7 Իմ ընդհանուր նըւիրեմ
 Քեզ , Տէր Յիսուս . շատ չէ ,
 Սակայն ինչ որ ունիմ և եմ^ս
 Ընդունելով օրհնէ :

311 Բարե Հիւնը . (9 , 9 , 9 , 7) :

- 1 Ո՛վ հօտիդ բարերար Հովիւը ,
 Ոչխարներդ կը պահես քու քովըդ ,
 Կը տանիս հոն զանոնք սիրովըդ ,
 Ուր որ երջանիկ կ'ըլլան :
 Զիս ալ առ , կ'ազաչեմ , ով Տէրըս ,
 Զօրացուր իմ տրկար ոտքերըս ,
 Ու ներէ իմ անթիւ մեղքերըս ,
 Որ ես քու դառնուկդ ըլլամ :
- 2 Եւ քեզմէ թէ որ հեռանամ ես ,
 Անապատն ու լեռներն երթամ ես ,
 Գայլերէն պիտի շատ վախնամ ես ,
 Մեծ դող պիտի ունենամ :

Բայց զիս առ , կ'աղաչեմ , ով Տէրըս ,
 Զօրացուր իմ տրկար ոտքերըս ,
 Ու ներէ իմ անթիւ մեղքերըս ,
 Որ ես քու գառնուկդ ըլլամ :

3 իմ ճամբաս թէև շատ երկայն է ,
 Բայց միշտ քու օգնութիւնդ ներկայ է .
 Զիս յոգնած ալ քու թևդ բռնած է ,
 Քու քովըդ հանգիստ կ'ըլլամ .
 Զիս ալ առ , կ'աղաչեմ , ով Տէրըս ,
 Զօրացուր իմ տրկար ոտքերըս ,
 Ու ներէ իմ անթիւ մեղքերըս ,
 Որ ես քու գառնուկդ ըլլամ :

4 Ով Յիսուս , թող քալեմ քու քովըդ ,
 Զիս լըւա ալ քու արիւնովըդ .
 Իմ հոգիս տար երկինք սիրովըդ ,
 Որ հոն ապահով ըլլամ :
 Հոն իյնամ ես Փրկչիդ առջևը ,
 Տամ քեզի գոհութիւն , պատիւը ,
 Որ դուն ես սիրելի Հովիւը ,
 Քու բակն յաւիտեան կենամ :

312 ՊԼԻՆ ԴԵՄՈՒՍԻ (7, 6) :

1 Հրեշտակ մ'ըլլալ կ'ուզեմ ես ,

Երկինքը բընակիլ ,

Թագ մ'ունենալ գըլխուս վրայ ,

Եւ սուրբ քընար զարնել .

Ան տեղ Փրկչիս առջևը

Յաղթողական երգեր

Պիտի անոյշ լեզուով մը

Երգեմ ցորեկ գիշեր :

2 Ան երջանիկ երկինքը

Ողբի մը ձայն չըլլար .

Եւ չարութիւն գործողը

Ան տեղ բընաւ չերթար .

Բայց օրհնութիւնն ու փառքը

Մաքուր և սուրբ սրտով

Պիտի տամ ես Տէրոջը

Անթիւ հրեշտակաց քով :

3 Ես յանցաւոր տըղայ եմ ,

Բայց Տէրը կը ներէ .

Եւ իր ձըրի շնորհքովը

Հոգիս պիտի փրկէ :

Ո՛վ սիրելի Փրկիչըս ,

Երբ մեռնելու ըլլամ ,

Հրեշտակներուն խումբովը

Շխտակ քու քովըդ գամ :

4 Ո՛հ , ան օրհնեալ ատենն ես
 Հրեշտակ պիտի ըլլամ .
 Սրբոց հետ միասին ես
 Փրկչիս առջին խնամ .
 Փառք , օրհնութիւն , պատիւը
 Անոր մատուցանեմ ,
 Անթիւ օրեր իր քովը
 Գիշեր ցորեկ երգեմ :

313 Տղայոց համար հորժ երկնից Ռ. (12 , 9) :

1

Երկնից մէջ պիտի գործ ունենան տրղաքներ
 Ընելու , մէկը թոյլ չըմընար .
 Սիրտը սէր կ'ունենայ , միտքը շատ խոր
 հուրդներ ,
 Ու ձեռքերն ըզբաղմունք ալ յարմար :
 Պիտի գործ ունենան , պիտի գործ ունենան ,
 Տրղաքներն պիտի գործ ունենան .
 Ան փայլուն երկրին մէջ ,
 Ուր որ լոյս կայ անշէջ ,
 Տրղաքներն պիտի գործ ունենան :

2

Աստուծոյ իմաստուն գործքերուն վըրայով
 Պիտի հոն նոր բաներ միշտ սորվին ,

Ու երկրիս բարիններն հոն առաջ երթալով՝
 Ուսուցիչ կ'ըլլան նոր հասնողին :
 Պիտի դործ ունենան , և այլն :

3

Եւ ինտոր որ մեր Հայրն իրեն սուրբ հրեշ-
 տակներն
 կը խրկէ իր որդւոց օգնելու ,
 կարելի է մեզի ալ խրկէ տրղաքներն՝
 իր սիրոյն պատգամներն բերելու :
 Պիտի դործ ունենան , և այլն :

314 Ես պանդուխտ եմ : (յատուկ)

- 1 Ես պանդուխտ եմ, նաև օտար եմ,
 Հոս կարող եմ մէկ գիշեր միայն կենալ .
 Զիս մ'արգիլեր դուն՝ քանզի կ'երթամ ես
 Որ միշտ կենաց աղբիւրէն խրմեմ ես :
 Ես պանդուխտ եմ, նաև օտար եմ,
 Հոս կարող եմ մէկ գիշեր միայն կենալ :
- 2 կը ցանկամ ես տեսնել ան փառքը ,
 Որ երկինքին մէջը միշտ կը վայելեն .
 Աս աշխարհին մէջ ճամբաս շատ մուխ է ,
 Բայց այն օրհնեալ երկինքը պայծառ է :
 Ես պանդուխտ եմ, նաև օտար եմ,
 Հոս կարող եմ մէկ գիշեր միայն կենալ :

3 Ան քաղաքը ուր որ կ'երթամ ես ,
 Իմ փրկչիս պայծառ լուսովը կը փայլի .
 Հոն ոչ ցաւեր կան ու ոչ վիշտեր ալ ,
 Ոչ արցունքներ , ոչ տրտմութիւններ ալ :
 Ես պանդուխտ եմ , նաև օտար եմ ,
 Հոս կարող եմ մէկ գիշեր միայն կենալ :

315 Արտայո-Նեան որայտ . (Ց , 6 , յատուկ) :

1 Տէրոջն աթոռին շուրջն պատած
 Տըզայք կան բիւրաւոր ,
 Որոնց մեղքերըն են թողուած ,
 Տեսքով են փառաւոր :
 Կ'երգեն , Օրհնեալ , օրհնեալ ,
 Օրհնեալ ես բարձրեալ Տէր Աստուած :

2 Ամբիժ ճերմակ հանդերձներով՝
 Տես ամէն մէկն հաղուած ,
 Ու յաւիտենական լուսով
 Դրախտի մէջ բընակած :
 Կ'երգեն , Օրհնեալ , և այլն :


3 Այն երկնային աշխարհն փայլուն
 Որո՞ւ ձեռքով ելան ,
 Ուր որ կայ տէր , խաղաղութիւն ,
 Ի՞նչ միջոցով մըտան :
 Կ'երգեն , Օրհնեալ , և այլն :

4 Փրկչին արիւնը թափուելով ,
 Անով մաքրուեցան .

Այն սուրբ աղբիւրը բացուելով՝
 Ճերմակ , մաքուր եղան :
 Կ'երգեն , Օրհնեալ , Լայն :

5 Փրկչին շքնորհքը խնդրեցին
 Քանի որ հոս կեցան ,

Ու հիմա հոն կը բընակին ,
 Կ'օրհնեն Ան յաւիտեան :
 Կ'երգեն , Օրհնեալ , Լայն :



ԺԱՄԱՆԱԿԻՆ ԿԱՐՃՈՒԹԻՒՆԸ

316 Կենացս ունայնութիւնը , և Աստուած մեր
աստուածն . Սաղ . Դ . (8) :

- 1 Ով Տէր , դուն ես մեզ ապաւէն ,
Յոյս և ասպար ամէն ատեն .
Երկիրս , աշխարհ դեռ չըստեղծուած՝
Յաւիտենից դուն ես Աստուած :
- 2 Դուն մարդն փոշի կը դարձունես ,
“Մարդոց որդիք , դարձէք” , կ'ըսես .
Քանզի առջիդ հազար տարին
Նրման է երեկուան օրին :
- 3 Զանոնք բոլոր անյայտ կ'ընես ,
Կ'ըլլան շուտ երազի մը պէս .
Առտուն ազուր ծաղիկ կու տան ,
Բայց իրիկունը կը չորնան :
- 4 Մարդիկ քու ոյժըդ չեն ճանչնար ,
Ով Տէր , քեզմէ ալ չեն վախնար .
Մեր օրերուն թիւն սորվեցուր ,
Ու երկնային հանճար մեզ տուր :

5 Ծառաներուդ թող երևնայ
 Քու գործդ , և փառքդ յայտնի ըլլայ .
 Տէր , թող քու լոյսդ մեզի ծագէ ,
 Մեր ձեռնարկածը յաջողէ :

317 Մեր կենացը «-նայն»-ի-նը . Սաղ . ԼԹ .
 (8) :

- 1 Ըսի թէ ես ճամբաս պահեմ ,
 Որ իմ լեզուովս մեղք չըգործեմ .
 Երբ մեղաւորն առջիւ կայնի ,
 Բերանս սանձով զսպեմ պիտի :
- 2 Ով Տէր , իմ վերջս ինծի յայտնէ .
 Եւ օրերուս չափն ինձ համրէ .
 Որ ես դիտնամ թէ կեանքս համայն
 Ի՞նչ անցաւոր է և ունայն :
- 3 Թիզի մը չափ օրերս ըրիր ,
 Կեանքս ոչնչի պէս ցոյց տըւիր .
 Որչափ որ մարդ հաստատ ըլլայ ,
 Սակայն շուտով կը փրճանայ :
- 4 Արդ ինչ բանի ես կ'սպասեմ ,
 Քու վրադ միայն յոյս կը դընեմ .
 Յանցանքներէս , Տէր , փրկըւիմ ,
 Եւ չարերէն չըծաղրուիմ :

5 Ո՛վ Տէր , լըսէ իմ աղօթքիս ,
 Ականջըդ դիր աղաղակիս .
 Պանդուխտ նըման իմ հայրերուս ,
 Գեզմով գտնեմ հանգիստ հոգւոյս :

318 Երէնչ համար Գագագ . (8 , 7 , 7) :

1 Ի՞նչ է կեանքերնիս . շողի մը
 Որ շուտով անյայտ կ'ըլլայ .
 Ան է պըլպըլած պատրոյգ մը ,
 Սիրտս ինչո՞ւ անոր ցանկայ :
 Բաց թևերդ , հոգիս , թըռիւր ,
 Երջանիկ երկիրն հասիր :

2 Տես ան փառքը մեծափայլ է ,
 Չես կրնար նըկարագրել .
 Հոն Փրկիչդ Յիսուս նստած է ,
 Սուրբերուն Արքայն և Տէր .
 Բաց թևերդ , հոգիս , թըռիւր ,
 Երջանիկ երկիրն հասիր :

3 Մեծ փառքով իր բոլորտիքը
 Երջանիկ հոգիք կ'երգեն .
 Յնծումով բոլոր երկինքը
 Անդադար կը լեցունեն .
 Բաց թևերդ , հոգիս , թըռիւր ,
 Երջանիկ երկիրն հասիր :

319 Մէր օրերը կորճ են . (6 , 6 , 8 , 6) :

1 Տէրոջը սէրն անհուն
 Իրմէ վախճողներուն՝
 կը նըմանի մէկ մօր սիրոյն
 Իր մէկ հատիկ որդւոյն :

2 Ի՞նչ կարճ են մեր օրեր
 Խոտին ծաղկին նըման .
 Երբ կը փըչեն սաստիկ հովեր ,
 Անոնք շուտ կը չորնան :

3 Ողորմութիւնքդ մեծ են ,
 Բընաւ վախճան չունին .
 Եւ սերունդէ սերունդ ամէն
 Խոստմունքդ կը կատարուին :

320 կորճ է կեանք . (6 , 5) :

1 Տես ինչպէս արևը
 Մարը կը մտնէ ,
 Եւ լուսոյն պարզևը
 Շուտ մեզմէ կ'առնէ :

2 Կեանքերնիս ասանկ է ,
 Քիչ մը կը տեէ ,
 Ճիշդ արեւին պէս է ,
 Շուտ կ'երթայ մեզմէ :

3 Բայց նորէն արևը
 Մեզի կը դառնայ ,
 Ու մահուան խաւարը
 Լոյս անշէջ կ'ըլլայ :

4 Տէր Յիսուս Փրկիչը
 Մահը խափանեց ,
 Ու անմահութիւնը
 Երևան հանեց :

321 Պանդոսիոն երգը . (6 , 6 , 8 , 6) :

1 Քանի մը տարիէն
 Մէկ օր մը պիտի դայ ,
 Երբ մահն ու գերեզմանըն ալ
 Պիտի հասնին մեր վրայ :
 Այն մեծ օրուան համար ,
 Ով Տէր , զիս պատրաստէ ,
 Քու արիւնովըդ զիս լըւա ,
 Ու մեղքերէս մաքրէ :

2 Դեռ քիչ մը ջանք ալ կայ ,
 Ալ քիչ մը աշխատանք ,
 Քանի մը օր ալ վշտալից ,
 Եւ ալ պիտի չըլանք :
 Այն քաղցր օրուան համար ,
 Ո՛վ Տէր , զիս պատրաստէ ,
 Քու արիւննովըդ զիս լըւա ,
 Ու մեղքերէս մաքրէ :

3 Քանի մը սուրբ օրեր
 Մենք հոս պիտի վայլենք ,
 Եւ յաւիտենական հանգիստ
 Շուտով պիտի տեսնենք :
 Այն սուրբ օրուան համար ,
 Ո՛վ Տէր , զիս պատրաստէ ,
 Քու արիւննովըդ զիս լըւա ,
 Ու մեղքերէս մաքրէ :

4 Այն որ սիրով մեռաւ
 Որ մեղ մահէն փրկէ ,
 Շուտով կրկին պիտի դառնայ
 Ու մեղ իր քովն առնէ :
 Այն մեծ օրուան համար ,
 Ո՛վ Տէր , զիս պատրաստէ ,
 Քու արիւննովըդ զիս լըւա ,
 Ու մեղքերէս մաքրէ :

322 Կորն կեանքերնիս ի՞նչպէս հորձածենս . (8 ,
8 , 6) :

1 Կախուած է կեանքս բարակ թելով .
Յանկարծ կը կտրուի շունչով .

Ո՛հ , ի՞նչպէս չըխորհիմ :
Գուցէ վայրկեան մը զիս տանի
Երկինք , և կամ , է կարելի ,
Անյոյս դըժոխք ձգուիմ :

2 Տէր , դիր առջիս երկնից լուսով
Այն օրն որ պիտի դաս ամպով

Դատել բոլոր մարդիկ :
Հոն ես ներկայ ըլլամ պիտի ,
Վըճիռս ալ անփոփոխ տրուի ,
Թշուառ կամ երջանիկ :

3 Ով Հայր , հողիս դուն նորոգէ ,
Անվերջ կենաց խորհուրդն ազդէ
Իմ անըզգայ սրտիս :

Անոր արժէքն ինձ ըզգացուր ,
Եւ զիս փրկէ մահէն տըխուր
Անհուն սիրովն փրկչիս :

4 Իմ ջանքըս թող միշտ այս ըլլայ ,
 Եւ այս խորհուրդն առջեւ ներկայ ,
 Կոչումըս հաստատել :
 Քու կամքդ ընել ինձի շնորհէ ,
 Եւ հայրական խրատիդ , օգնէ ,
 Մինչ վերջը համբերել :

5 Յայնժամ , Տէր , անարժան հողիս
 Ուրախութեանդ մէջ ընդունիս .
 Թող հոն թագաւորեմ ,
 Ուր որ հաւատքը տեսութիւն
 Կ'ըլլայ , և յոյսն՝ երջանկութիւն ,
 Տեսնեմ քեզ և սիրեմ :

323 Առեւտրի Իսթեֆայ . (10) :

1
 Խոստմունք մեծամեծ ըրաւ ինձ աշխարհ
 Առատ իւր բարեօքն զիս միշտ դո՛հ ընել .
 Եւ ես խաբուեցայ իբրև կոյր , յիմար ,
 Աշխատեցայ շատ զանոնք վայելել :

2
 Գիշեր և ցերեկ զայն կը խորհէի ,
 Ի՛նչպէս ձեռք բերեմ սրտիս փափաքներն .
 Դժուարութիւններն յաղթել ջանացի ,
 Կը տանջէին զիս խառնակ խորհուրդներն :

3

Երբեմն լցուած տեսայ փափաքներս ,
 Յաջողութեամբ գէթ ջանքերս պըսակուած .
 Ըսի , երջանիկ հիմա , ո՛հ , եմ ես ,
 Բայց շուտ կորուսի , մնացի լոկ խարուած :

4

Հերիք է , անձն իմ , շուքին ա՛լ վազես ,
 Ունայնութիւններն քեզ ծաղըր կ'ընեն .
 Անհուն է մտքիդ , սրտիդ ասպարէզ ,
 Քեզ հոս տիեզերք հնար չէ գոհ ընեն :

5

Հիմա ուխտ ընեմ , ով Տէր , քու առջիդ ,
 Ալ ես փնտըում բաներըն վերին .
 Թող սիրտս նորոգէ Մարդասէր Հոգիդ ,
 Որ հոն չըսիրէ պիղծ սէր աշխարհին :

324 “ Հոս մայուն Կալա Կունին ” . Եբր .
 ԺԳ . 14 : (8) :

1 Այս աշխարհիս ունայնութիւն
 Խաբեց , ո՛հ , ի՛նչ մեծ բազմութիւն .
 Զըլլայ մենք ալ անով խաբուինք .
 Հոս մընայուն քաղաք չունինք :

- 2 Ազահութեան չար ծընունդներ՝
 Ատելութիւն , նախանձ ու հեռ
 Մէկդիւ ձըդենք , հեռու փախչինք •
 Հոս մընայուն քաղաք չունինք :
- 3 Ամէն ինչ որ շահինք հոս մենք ,
 Անով մարդոց բարիք ընենք •
 Գանձ դիզելու թող չըզբաղինք •
 Հոս մընայուն քաղաք չունինք :
- 4 Օ՛ն , ցնծումով դէպ 'ի երկինք
 Քալենք , ան է մեր հայրենիք ,
 Թէ որ հաւատք ու սէր ունինք •
 Հոս մընայուն քաղաք չունինք :
- 5 Բարի , խոհեմ ու գործունեայ
 Կեանք մը վարենք , քանի լոյս կայ ,
 Որ երբ մահն գայ , հասնինք երկինք •
 Հոս մընայուն քաղաք չունինք :

325 Հասարակութեան անհասարակ Բաներ . (8) :

- 1 Ով մարդ , հոգեր , վիշտեր՞ ունիս .
Միշտ չեն մընար , չըվըդովիս .
Յաւ , նեղութիւն ու տառապանք ,
Աղքատութիւն և դառն տանջանք
Շուտով կ'անցնին , կ'անհետանան ,
Քիչ ատենէն չիք կը դառնան :

- 2 Ով մարդ , ունի՞ս հարըստութիւն .
Մ'ուրախանար , չեն մընայուն
ինչք , ստացուածք , կալուածք ու տուն ,
Ոսկի , արծաթ , դանձեր թագուն .
Շուտով կ'անցնին , կ'անհետանան ,
Քիչ ատենէն չիք կը դառնան :

- 3 Ով մարդ , ունի՞ս մեղք , չարութիւն .
Վախցիր , ողբա , կոծ ըրէ դուն .
Ատոնք ճըգէ , ապաշխարէ ,
Տէր Յիսուսին շուտով դիմէ ,
Քանզի դըժոխքն է հաստատուն ,
Անոր տանջանքն ալ մընայուն :

4 Ո՛վ մարդ , դուն նոր սիրտ ըստացա՞ր ,
 Եղա՞ր Սրբոյ Հոգւոյն տաճար .
 Սիրէ՞ զԱստուած քո և զընկեր ;
 Ուրախութեան երգէ՞ երգեր .
 Քանզի երկնից երանութիւնն
 Է հաստատուն և մընայուն :



326 Մահոսան համար պատրաստութիւն • (8) 3

- 1 Հարկ է մեռնիլ , պիտի մեռնիմ .
Դեռ չը մեռած , ով Աստուած իմ ,
Խնդիրքս քեզի մատուցանեմ ,
Դուն ալ լըսէ , Տէր , կը խնդրեմ :
- 2 Ինծի հաւատք , յոյս և սուրբ սէր
Դուն պարգևէ , կ'աղաչեմ , Տէր ,
Որ ուզածիդ պէս միշտ վարուիմ ,
Եւ երջանիկ մահուամբ մեռնիմ :
- 3 Մահուան ժամուս իմ քովս կեցիր ,
Քաղցրը բազուկդ գլխուս տակ դիր .
Վերջին ցաւերըս թեթեւցուր ,
Հանդիստ , խաղաղ ինձ մահ մը տուր :
- 4 Հաւատքս , ով Տէր , միշտ կենդանի
Պահէ մինչև որ շունչս հատնի .
Եւ իմ հոգիս ան տեղը դայ
Ուր հաւատքի ալ պէտք չըկայ :

327 Մահացողի մասին . (10) :

- 1 Աստուած մեր միայն կը թաղաւորէ ,
 Ինք Տէրն է երկնից , երկրին և ծովուն .
 Իր սէրը խնդրեմ , վախնամ ալ իրմէ ,
 Ու փառաւորեմ անոր սուրբ անունն :
- 2 Ինքն է հաստատեր իր սուրբ օրէնքներ ,
 Անոնք որ մեզ միշտ կը սորվեցունեն .
 Հողիս , դուն սլահէ իր սլասուիրանքներ ,
 Ինչու որ անոնք բարի ու սուրբ են :
- 3 Ան ինձ որոշեց մահուանըս մէկ օր ,
 Գիտեմ ես ինչպէս շուտով կու գայ ան .
 Անթիւ մարդիկներ ինձմէ զօրաւոր ,
 Մեռան , թաղուեցան , փոշի ալ դարձան :
- 4 Ուստի միշտ ընեմ ես պատրաստութիւն ,
 Որչափ ժամանակ որ իմ ձեռքըս կայ .
 Գերեզմանի մէջ ապաշխարութիւն ,
 Գործ կամ թողութիւն մէկու մը չըկայ :
- 5 Մէկ ծառ կը կտրեն , և ուր որ ձգուի ,
 Հիւսիս կամ հարաւ , ալ հոն կը մընայ .
 Ասանկ ալ մէկ մարդ երբոր կը մեռնի ,
 Երկինք կամ դժոխք կ'երթայ կը կենայ :

328 Քրիստոնէան մահէն վախճալու - 4. (8) :

- 1 Ո՛րչափ վախկոտ և վատ կ'ըլլանք ,
Երբոր մահուան կը մօտենանք .
Չէ՞ որ խայթոցը դառն մահուան
Փշրեց Յիսուս խաչին վըրան :
- 2 Չէ՞ որ մահն է միակ միջոց՝
Որով ազատ կ'ըլլանք ցաւոց
Եւ այս խաւար ու խոր ձորէն ,
Ուր որ կու լանք մեր ծնած օրէն :
- 3 Չէ՞ որ մահն է միջոց միակ՝
Որով կրնանք ըլլալ դիտակ
Ան սուրբ խորին խորհուրդներուն ,
Որք հոս ծածուկ են ամենուն :
- 4 Չէ՞ որ միայն մահով պիտի
Ապաշխարողն հաւասարի
Սուրբ հրեշտակաց՝ անմահութեամբ ,
Երջանկութեամբ և զօրութեամբ :
- 5 Տէր , այս երկիւղն դուն փարատէ ,
Զի այս մեզի արատ մեծ է .
Օրհնէ մեզ որ միշտ քաջ ըլլանք ,
Եւ մահը թող սեպուի մեզ կեանք :

329 Մանկանց հանձն . (8 , 6) :

- 1 Կեանքն է մէկ թիղ , ժամ վաղանցիկ ,
Ի՞նչ շուտ թռչող շողի .
Մարդն է փափուկ գլուրանց ծաղիկ ,
Որ ընդ ծաղկիլն խամրի :
- 2 Մահն տարածէ ցուրտ բազուկներն ,
Գեղեցկութիւն չըմնար .
Ո՞հ , սիրտ դրաւող այն ծիծաղներն
Ո՞ր են ակնասպարար :
- 3 Սըգաւորին խելք միտք՝ նախկին
Անոյշ տեսքն կը խորհի .
Կ'ողբայ բնութիւնն զայն պաղ մարմին ,
Խնդում բոլոր դադրի :
- 4 Ժամանակաց սահմաններէն
Անդին յոյսն կը նայի ,
Երբ նա , որուն վրայ մեր ողբք են ,
Նոր կեանք առնէ պիտի :
- 5 Կեանք երանեալ , ծաղկեալ հասակ
Յաւէժ և անթառամ .
Ուրախութիւնն է անապակ
Փրկչին գիրկն յաւիտեան :
- 6 Ուրեմն մի լար , անմիտ բնութիւն .
Գիտենք սէրն Յիսուսի .

Հոն յաւիտեան պայծառ դարուն ,
 Հողւոյն վայելքն են լի :

330 Մահ շերտնի Պաշտօնի . (8) :

- 1 Ով Աստուծոյ ծառայ բարի ,
 Հանգչէ գործքէդ շատ սիրելի .
 Եղար յաղթող զինուոր քաջ , Ժիր .
 Յուրախութիւն Տէրոջդ մրտիր :
- 2 Կէս գիշերուան մէջ ձայն եկաւ ,
 Յատկեց ելաւ , ահանջ դըրաւ .
 Նետ մահացու զինք խոր խոցեց ,
 Ինկաւ , բայց վախ չըզդաց իր մէջ :
- 3 Յաղմուկս գըտաւ սրտիւ անդորր
 Դաշտին վրայ հինաւուրց զինուորն ,
 Զինուցն վըրայ պատրաստ ննջէր ,
 Եւ հովանի վահանն ունէր :
- 4 Մահուան ցաւերն անցան . լմնցան
 Ծանր աշխատանք , վիշտ տրտմութեան .
 Ո՛հ , վերջացան կենաց խիստ գործ ,
 Խաղաղութիւն ունի անփորձ :
- 5 Ով Քրիստոսի ծառայ բարի ,
 Նոր գործդ է փառք տալ միշտ յերկնի ,
 Դարուց ՚ի դարըս յաւիտեան
 Հանգիր Տէրոջդ յուրախութեան :

331

Մ-նն ուղ-նել (11):

1

Ապրիլ չեմ ուզեր միշտ, հոս մնալ չեմ խնդրեր,
 Ուր որ ճամբուն վրայ միշտ կ'ելլեն մորթիկներ.
 Քանի մ'առտուներ որ վայլենք տխրագին,
 Բաւ է վայերուն, հաճոյից այս կեանքին:

2

Ապրիլ չեմ ուզեր միշտ այսպէս մեղսամած,
 Դրսէն փորձութիւնք, ներսըս ապականած.
 Բերկրանք թողութեանն ալ խառն է երկիւղով,
 Բաժակ գոհութեանն լի զղջման արցունքով:

3

Ապրիլ չուզեմ միշտ, գերեզմանն կ'ողջունեմ,
 Յիսուս պառկեցաւ հոն, պիտի չըվախեմ.
 Հոն քաղցր ինձ հանգիստ մինչ 'ի փողն յարութեան,
 Յերկնից եկող Տեառն ողջոյն տալ յաղթութեան:

4

Ապրիլ ո՞վ կ'ուզէ միշտ հեռի Աստուծմէ,
 Հեռի յերկնից որ օթեւան օրհնեալ է.
 Ուր դետք հաճութեան ջինջ դաշտերն կրկոխեն,
 Փառաց ճառագայթք յաւիտեան շողշողեն:

5

Ուր սուրբք ամենայն դարերուն միաբան
 Փրկիչ եղբայրնին ողջունել կը փութան.
 Մինչդեռ անդադար նըւագեն երգարանք,
 Տէրով զըւարթ դէմքն են հոգւոյն խըրախճանք:

332 Սրբոց Տանն Կաթառեւի . (6 , 6 , 8 , 6) :

1 Ի՞նչ է անոնց , ո՞հ , մահն ,
Որք 'ի Տէր ննջեցին .

Ո՞ւր էր , անոնց պէս իմ վախճան
Ըլլար , վարձքս ալ վերջին :

2 Անոնց մարմինն հողին
Տակն լուռ յուսով հանդչի ,

Մինչև կոչէ փողըն վերջին
Զանոնք 'ի փառս երկնի :

3 Անոնց հողիքն թռչին ,
Սիրոյ և հաւատքի

Թեւեր առած , սուրբ Փրկիչնին
Դիմաւորեն պիտի :

4 Ի՞նչ է անոնց , ո՞հ , մահն ,
Որք 'ի Տէր ննջեցին .

Ո՞ւր էր , անոնց պէս իմ վախճան
Ըլլար , վարձքս ալ վերջին :

333 ԳԵՐԵՂԻՆ . (8) :

- 1 Տուն հաճելի տապան սրբոց
Բոլոր 'ի Տէր ննջեցելոց .
Ձի հոն չարերն չեն տար բնաւ վիշտ ,
Եւ հոն յողնածն կ'ընէ հանգիստ :
- 2 Հանդչած 'ի մէջ Փրկչին բազկաց ,
Իբր 'ի խաղաղ մահիճ հանդչած՝
Ազատ բոլոր մրրիկներէն ,
Երկրիս մէջ տարածուած որ են :
- 3 Երկոցս օրնհեալ որ շուտ մըտան
Եւրանդութիւնն անմահական ,
Ալ չեն յողնիր , չիք տրտմութիւն ,
Պայծառ փայլին 'ի փառս անհուն :
- 4 Արդ մեր արցունք թող ալ ցամքի ,
Եւ հառաչանք հեղիկ լսուի .
Ուրախ սրտիւ արթուն սպասենք ,
Ո՞ր վեր կոչուինք , նոր երգ երգենք :

334 Մահն երբի վայրկեանը . (8 , 6) :

- 1 Զուր են ջանքերս նըկարագրել
Մահէն ետքի ըսպէն .
Սրբոյն վայլած երկնից փառքերն
Հոգին տըւած ատեն :
- 2 Մեղմ հառաչանք մը կը կտորէ
Շղթան , ու մենք “Գնաց ան”
Զըսած , մեկնեալ հոգին դտնէ
Մերձ Աթուին կայան :
- 3 Հաւատքն ջանայ , բայց ՚ի դերև ,
Հոգւոյն դընացք ճառել ,
Աչքն ալ վարագուրին ետև
Լուսոյ աշխարհն զննել :
- 4 Այսչափ է մեր բոլոր դիտցած ,
Սուրբք են համակ օրհնեալ ,
Մեղք , հոգ , վայերն մէկ դի ձըղած ,
Փրկչին հետ հանդուցեալ :
- 5 Կ'օրհնեն զանունն ոսկի քնարով ,
Սուրբ տեսութեամբն ցնծան .
Անոնց և մենք հետևելով ,
Միանանք յերդս օրհնութեան :

335

Յարութեան յանձն յազնեւ
(8, 6) :

- 1 Տէր , դաւանիմ վըճիւղ արդար ,
Պէտք է բնութեան նուազիլ .
Յանձնեմ մարմինս հողուն խոնարհ ,
Հետ հողածնայ բնակիլ :
- 2 Բայց հաւատքով դերեզմանին
Յաղթեմ , խնդամ վըրան .
Է մեծ Փրկիչս միշտ կենդանին
Ստուածս , պիտի դայ Սն :
- 3 Հըզօր Յաղթողն պիտ' երևի
Բարձրերն Գահու մը վրայ .
Մահն իւր վերջին մեծ թշնամի
Ոտքն յաղթըւած կ'իյնայ :
- 4 Յայնժամ տեսնեմ քու լոյս երես
Մնմահ և սուր աչքով .
Ուրախութեամբ շընորհքդ անտես
Վայլեմ մեծ զարմանքով :

336 ՈՆ, ՈՆ, ԿՆ ԷՆ ԴԵՆԻՆԸ • (7, 6) :

- 1 ՈՆ, ՈՆ, ԿՆ ԷՆ ԴԵՆԻՆԸ •
 Երթալ մեր Աստուծոյն,
 Թողուլ աս մութ աշխարհքը,
 Մանեկ Տէրոջը փառքը,
 Մեր հանգստեանը տունն :
- 2 ՈՆ, ՈՆ, ԿՆ ԷՆ ԴԵՆԻՆԸ •
 Մեր հայրենիքն երթալ,
 Կըրեկ փառաց պսակը,
 Երգել ան յազթանակը,
 Կուռէ աղատ ըլլալ :
- 3 ՈՆ, ՈՆ, ԿՆ ԷՆ ԴԵՆԻՆԸ •
 Երթալ բարի Հովուին,
 Ճաշել անոյշ արօտը,
 Եւ հոն պառկիլ ուր հօտը
 Անվախ միշտ կը հանդչին :
- 4 ՈՆ, ՈՆ, ԿՆ ԷՆ ԴԵՆԻՆԸ •
 Քեզ գալ, Փրկիչ մարդկան •
 Հող կայ սիրոյ ազբիւրը,
 Անսպառ կենաց ալ ջուրը,
 Հոս՝ կաթիլներ միայն :

337 Հոգի Գիրք . (6 , 6 , 8 , 6) :

1 Սիրելիներս , եկէք ,
 Երբ մեռնելու մօտ եմ ,
 Երկնից վրայով ինձ երգեցէք .

Երգով թող վեր ելլեմ :
 Հոն ցաւ կամ վիշտ չըկայ ,
 Հոն ցաւ կամ վիշտ չըկայ ,
 Երկինքը վեր ամէնն է սէր ,
 Ալ ցաւ կամ վիշտ չըկայ :

2 Երբ ճակատէս կաթի
 Մահուան ցուրտ ծանր քրտինք ,
 Թող ցնծութեան երգեր լսուի ,
 Հոս ըսկըսի երկինք :
 Հոն ցաւ , Լոյն :

3 վախճանըս հասնելուն
 Երեսըս դիտեցէք .
 Որ վրաս երկնից խաղաղութիւն ,
 Փառաց նըշոյլ տեսնէք :
 Հոն ցաւ , Լոյն :

4 Թող Սիօնի երգերն
 Լըսեմ երբոր մեկնիմ .
 Գտնեմ ալ երգի բարեւերն
 Երբոր երկինք հասնիմ .
 Հոն ցաւ , Լոյն :

- 5 Ա՛ւ չըտեսնող աչքերս
Սիրով դուք գոցեցէք ,
Եւ պաղ ու անարիւն ձեռքերս
Կուրծքիս վրայ ծալլեցէք :
Հոն ցաւ , Խայն :
- 6 Շուրջ անկենդան մարմնոյս
Սիրելիներս դալով ,
Յայնժամ տիրէ վախու տեղ յոյս ,
Երգեն երկնից վրայով :
Հոն ցաւ , Խայն :

338 Քրիստոնէայ Բարեկամի մանուսան վրայ • (8 , 6) :

- 1 Ինչո՞ւ վազեն մեր արցունքներն ,
Եւ վիշտ մեր վրայ տիրէ ,
Երբ իր խմաստութեամբը Տէրն
Իրենը ետ կանչէ :
- 2 Չէ՞ որ հաւատացեալներուն
Օգուտ է մահն անգամ ,
Կեանք անվախճան և փառք կ'առնուն ,
Պըսակ ալ անթառամ :
- 3 Պատերազմին լըմնցուցին ,
Շնորհքով յաղթող ելան .
Ա՛ւ ցաւ կամ աշխատանք չունին ,
Երկնից հանգիստն մըտան :

- 4 Աստուած իրենն կանչեց իրեն ,
 վիշտ չըտիրէ մեր վրայ .
 Այլ մեր սրտերն թող միշտ ըսեն ,
 «Քու կամքըդ , Հայր , ըլլայ» :

339 ՆՆՔԵԳԵՒԷ ԲՆՆՆՆՆՆ . (8 , 6) :

- 1 Մահուան դալուն ինչո՞ւ ցաւինք ,
 Զայնէն ալ սարսափինք .
 Փրկչէն եկած մէկ ձայն մըն է ,
 Որ մեզ իր քովն կանչէ :
- 2 Մենք ալ շուտով պիտի մեռնինք ,
 Ասկէ ալ շուտ անցնինք .
 Ուստի թող ժամք շուտով անցնին ,
 Մենք ալ հասնինք Փրկչին :
- 3 Ինչո՞ւ մեռեալն հողին երբ տանք՝
 Գերեզմանէն սոսկանք .
 Զէ՞ որ մեր Տէրն ալ թաղուեցաւ .
 Այն տեղն անոյշ ըրաւ :
- 4 Օրհնեալ է ան սուրբ գերեզման ,
 Կակուղ հանգըստարան .
 Ուր պառկեցաւ իր Տէրն , հոն ալ
 Պառկի ծառայն օրհնեալ :

- 5 Ինք յարութիւն անկէ առաւ ,
 Կենաց ճամբան բացաւ .
 Մենք ալ անկէ պիտի ելլենք ,
 Եւ իր աջ կողմն մտնենք :

340 Գեղեղճան . (8) :

- 1 Բաց ծոցդ հիմա , ով գերեզման ,
 Նորէն եղիր մեր դանձարան .
 Հոս տեղ մը տուր աս մարմինին ,
 Որ մուսնճ ննջէ մէջ փոշիին :
- 2 Ոչ ցաւ , ոչ վիշտ ու ոչ վախն ալ
 Քու սահմաններդ կրնան մտնալ :
 Ի Տէր ննջողն չգդար վայեր ,
 Զայն կը հսկեն սուրբ հրեշտակներ :
- 3 Աստուածորդին ալ հոս ննջեց ,
 Եւ ինք ալ գերեզմանն օրհնեց .
 Հանգչէ հոս դուն , ննջեալ մարմին ,
 Մինչև ծագի առտուն փրկչին :
- 4 Ո՛վ առաւօտ փրկչին , ծագէ .
 Երկիր , անոր խօսքին լըսէ .
 Քեզ պահ տըրուած աս դանձն հանէ ,
 Որ իր Տէրոջը գէմն ելլէ :

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԴԱՏԱՍՏԱՆ

341 Յարութեան յոյս . (8 , 6) :

- 1 Ամէնօրհնեալ է յաւիտեան
Մեր ողորմածն Աստուած .
Անոր մեր դոհութեան ընծան
Ըլլայ միշտ մատուցուած :
- 2 Երբ իր աջ կողմը նստեցուց
Իր յարուցեալ Որդին ,
Հողիներնուս ալ յոյս ցուցուց
Որ երբէք չըմեռնին :
- 3 Մեր մարմիններն թէպէտ իրաւ
Պէտք է փոշի դառնան ,
Սակայն քանի որ Տէրն յարեալ՝
Պիտի կենդանանան :
- 4 Եւ կայ մինչև այն օրն պահուած
Անեղծ ժառանգութիւն ,
Որ դուն , Տէր , ինքդ ես խոստացած
Ամէն յաղթողներուն :

5 Քու օգնութեանդ կ'ապաւինինք ,
 Մեր յոյսը , Տէր , դուն ես .
 Հոս հաւատքով պիտի ապրինք ,
 Մինչև մեզ վեր կանչես :

342 Վերջի դարձումն . (8) :

1 Վճուեց Տէրն որ ամէն մարդիկ ,
 Հարուստ , աղքատ , մեծ ու պզտիկ ,
 Թէ սուրբ ըլլան , թէ անօրէն ,
 Մեռնին , երթան աս աշխարհքէն :

2 Ետքն ալ երթան 'ի դատաստան ,
 Իրենց գործոց հաշիւը տան .
 Զի դայ պիտի Դատող արդար ,
 Դատել մարդիկ բարի և չար :

3 Բարին և չարն պիտի զատէ ,
 Աջ և ձախ կողմ պիտի դասէ .
 Ամէն մարդուն գործքին հաւսար
 Պիտի տայ վարձ , պատիժ յարմար :

4 Քեզ կ'ազաչեմ հիմակուրնէ ,
 Յիսուս , նոյն օրն իա ընդունէ .
 Աջ կողմից հոն իա կայնեցուր ,
 Ընտրեալներուդ դասն ալ մտցուր .

5 Որ բաղձանքիս ես հասնելով,
 Եւ տեսութեամբդ ըզմայլելով,
 Երգ օրհնութեան ան տեղն երգեմ,
 Քեզ յաւիտեան փառաւորեմ :

343 Դարձուի օրը . (8 , 7 , 4) :

1 Մեր մեղաց համար մեռնողը
 Ամպերով ահա կու գայ .
 Եւ անթիւ սրբոց ձայները
 Իր ամէն կողմէն կ'ելլայ .
 Տէրն օրհնեալ է,
 Տէրը կը թագաւորէ :

2 Ան ատեն երկինք , երկիրը ,
 Լեռ և ծով պիտի փախչին .
 Եւ ահով լեցուին չարերը՝
 Երբ լըսեն ձայնն հրեշտակին .
 «Դատաստան կայ
 Ամենուդ պատրաստ հիմա» :

3 Բայց ի՞նչպէս հաւտացեալները
 Հոն պիտի ուրախանան .
 Աշխարհիս մերժած սուրբերը
 Երգ երգեն միաբերան .
 «Տէրն օրհնեալ է,
 Ինք իրեն մեզ կը կանչէ» :

344 Դասաստանն օրը . (8 յատուկ) :

- 1 Արդար Դատաւոր , երբոր դաս
վերջի դատաստանն ընելու ,
երբ Հօրըդ փառքովն երենաս
Փրկեալ ժողովուրդդ ժողվելու ,
- 2 Ան օրը ես ո՞ւր դանըւիմ ,
Որ հիմա մահէն կը վախնամ .
Ի՞նչպէս քու առջևըդ կայնիմ ,
Ի՞նչպէս քու երեսըդ տեսնամ :
- 3 Օրհնեալ Տէր Յիսուս , ողորմէ .
Դուն , դուն ես աղբիւր փրկութեան .
Բոլոր իմ մեղքերըս քաւէ ,
Եղիւ իմ հոգւոյս ապաստան :
- 4 Հաւատքըս տրկար է , բայց դուն ,
Ով Տէր , անիկայ զօրացուր .
Իմ յոյսըս ըրէ հաստատուն ,
Հոգիս շընորհքովըդ լեցուր :
- 5 Ու երբ վերջին փողը լսուի ,
Շնորհէ որ սրբոց հետ ելլեմ .
Աջ կողմըդ ինձի տեղ տրուի ,
Եւ միշտ գովութիւնըդ երգեմ :

345 Դ. ԵՐԸ . յատուկ) :

1 Ատեանին առջևը
 Ի՞նչ ողբ և աղաղակ ,
 Երբ կ'այրի աշխարհը
 Տէրոջն ոտիցը տակ :
 Ազգականն ու բարեկամն
 Զատուլին հոն յաւիտեան .
 Կը բըռնէ հոն վախը չարն ,
 Իսկ սուրբք կ'ուրախանան ,

2 Ատեանին առջևը
 Ի՞նչ ողբ պիտի ելլէ ,
 Երբ փողին հնչելը
 Ականջըդ կը զարնէ :
 Ազգականն , Եւոյն :

3 Ատեանին առջևը
 Ի՞նչ ողբ պիտի ելլէ ,
 Երբ որ կորուսեալը
 Վերջին վրճիուն լըսէ :
 Ազգականն , Եւոյն :

4 Ատեանին առջևը
 Ի՞նչ ողբ պիտի ելլէ ,
 Մեղքն առողարդարը
 Երբ բախտ չարին կնքէ :
 Ազգականն , Եւոյն :

346 Յուսիքի մասին կէտեր և մահ • (6, 6, 8, 6) :

- 1 Ուր կայ հանգըստութիւն
Յողնած տրտմած հողւոյն .
Ունայն է ծովը զայն փնտռել ,
Կամ մինչ բեւռն քալել :
- 2 Աշխարհըս չըկրնար
Երջանկութիւն մեզ տալ .
Ոչ կեանքս բոլոր ապրիլն է ան ,
Ոչ ալ մեռնիլ՝ աս մահն :
- 3 Այս արտասուաց ձորէն
Անդին կեանք կայ նորէն .
Այն չըչափուիր տարիներով ,
Լեցուն է սուրբ սիրով :
- 4 Մէկ մահ մըն ալ կ'ըլլայ ,
Որուն վախճան չըկայ .
Ո՛հ , ի՞նչ ցաւք յաւիտենական
Երկրորդ մահուան մէջ կան :
- 5 Աստուած , Տէր գըթութեան ,
Շընորհքդ թափէ մեր վրան .
Որ մենք փախչինք այն մահուանէ ,
Ու չըզատուինք քեզմէ :

Ե Ր Կ Ի Ն Ք

347 ԵՐԿԻՐ ԺԱՆԳԱՆԻՆԸ . (8 , 6) :

- 1 Երկիր մը կայ ուր որ ցնծում
Սուրբերն կը լեցընէ ,
Եւ լի ու անվախճան խնդում
Ամէն վիշտ կ'արտաքսէ :
